ԴԵՂԱՏՈՒՆ «ԱՆԻ»

...Ամեն սերունդ
Նախ և առաջ ստեղծում է լռության մեջ,
իսկ երբ խոսել է սկսում,
բարկացնում է ավագներին։
...Ամեն սերունդ՝
Նախ և առաջ ժխտանում է կասկածելով։

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ա Ն Ի

Գեղագործ կինն ասաց, որ դեղը կպատրաստեն երկու-երեք ժամում։ Տուն գնա՞լ։ Ավելի լավ է մի քիչ թափառեմ։ Եթե երկու ժամից տուն հասնեմ, Վերգինե մորաքույրը գնացած կլինի։ Ուրախ աշուն է։ Ինչո՞ւ են աշունը միշտ իրրև հիվանդ ներկայացնում։ Այդքան գույն ուրիշ ե՞րբ է հավաքվում ծառերին։ Հիվանդն է գունատ լինում, այսինքն, կորցրած է լինում իր գույները։ Դեղատան մոտ հեռախոս կա (իմ հեռախոսը)։ շատ եմ զանգահարել։

— Բա՞րև,— այ քեզ տիպ, ինչ էլ բնական է բարևում,— ի՞նչ եմ անո՞ւմ, զբոսնում եմ։ Կինո՞, քեզ հե՞տ, ինչո՞ւ չէ, կգամ։

Հեռախոսով մի կին է խոսում, ավելի ճիշտ՝ զոռում է լսափողի մեջտեղ ականջի մեջ, իսկ տղան, որ առաջարկում էր կինո գնալ, իմ «կգամ» պատասխանից հետո տարակուսած քրթմնջում է.

— Այ քեզ զիժ։

Գյուղացի տղա է, երևի ասպիրանտ կդառնա, հետո՝ պրոֆեսոր։ Աշունը ձեռնտու եղանակ է, կարելի է երկար անձրևանոց հագնել, բայց կարճ շրջազգեստ։ Երկուսը միաժամանակ։ Մամբրին էր, մի անգամ ասաց, թե շատ տպավորիչ է՝ երկար փեշերով անձրևանոց, կոճակներն արձակում ես, մեկ էլ՝ մինի, համաբյա մերկ ոտքեր... Ջանդ չեմ տա Մամբ-

ռեին։ Ժամանակավոր տղա է, թեպետ ինքն իրեն ժամանակակից տղա է համարում։ Մի քիչ նստեմ։ Անցորդներին, մեքենաներին նայել սիրում եմ. միշտ ուզում եմ գոռալ բոլորին՝ ո՞ւր եք շտապում, այ մարդիկ, այ մեքենաներ։

— Ժամը քանի՞սն է, չե՞ք ասի...

Ես գիտեմ, որ դա դատարկ հարց է, հարցնողը և ժամացույց ունի, և մի ամբողջ հավերժություն ազատ ժամանակ, ժամ հարցնելն ուղղակի ամենաանտիկ ձևն է աղջիկների հետ ծանոթանալու։ Ինձ թվում է՝ Պարիսը էլ Հեղինեի հետ ծանոթանալու համար ժամը հարցրեց, արդյո՞ւնքը, կործանվեց մի լավ քաղաք՝ Տրոյան... Պարիսի մասին ինձ Կարենն է պատմել։

— Յոթն անց քսանյոթ րոպե, ուրի՞շ...

Ժամը հարցնողը նստում է կողքիս, ինչ-որ բան է ասում, երևի շնորհակալություն, երկար բառ է։ Ես նայում եմ անցորդներին, մարդկանց, ոտքս գցում եմ ոտքիս, անձրևանոցիս փեշը սահում է, դեռ գուլպա չեմ հագնում, ցուրտ չի, թող այս տիպն էլ նայի, ես գեղեցիկ ոտքեր ունեմ, այդ մեկը հաստատ է։ Երբեք մտքիցս չի գնա, թե ինչպես աշխատանք ճարեցի։ Ուրեմն, իմացա, որ մեր կողքի կոշիկի գործարանում մեքենագրուհու տեղ կա, գնացի։ Երբ ներս մտա, դիրեկտորը՝ մի ճաղատ, լղար մարդ, նստած էր Բուդդայի նման՝ հանդիսավոր, անշարժ։ Նրա գլխավերևում կպցրած էր աշխարհի հսկայական քարտեզը։ Նայեցի ու քիչ էր մնում փոթկայի, նա այնպես էր գլխավերևում կպցրել քարտեզը, կարծես թե քարտեզում նշված բոլոր քաղաքներում իր գործարանի կոշիկներին են սպասում։ Ես անհամարձակ առաջ գնացի, նա չէր նայում, ձայն չէր հանում, նույնիսկ ուզեցի շատ մոտենալ, շոշափել, զուցե, իսկապե՞ս արձան է։ Բայց Բուդդան կարծեմ ասաց. «Նստիր», ես էլ նստեցի, ոտքս ոտքիս գցեցի և հանկարծ տեսա, որ Բուդդան կենդանանում է։ Աչքերը պսպղացին, դանդաղ վեր կացավ իր փափուկ աթոռից, նստեց մեկ ուրիշ աթոռի, իմ դեմ-դիմաց։ Ես սպասում էի, որ նա հիմա հարցեր կտա, կասի դիմում գրիր՝ տեսնենք քանի տառասխալ կանես, իսկ նա նայում էր ու նայում։ Ես ասացի, որ աշխատել եմ ուզում, նա անորոշ ժպտաց, ասաց՝ «Իհարկե», հետո վեր կացավ իր նոր աթոռից, դանդաղ մոտիկ եկավ ու մեկ էլ տեսնեմ՝ նրա երկար, թաց ձեռքը դրված է ծնկիս։

— Կարճ ես հագնում,— ասաց համարյա հայրաբար։ Իսկ ինձ հանկարծ թվաց, որ երևի կուզենար ասել՝ «Ինչո՞ւ ավելի կարճ չես հագնում» կամ՝ «Ի՞նչ կարիք կար առհասարակ որևէ բան հագնելու, կգայիր մերկ, ավելի անմիջական, անկեղծ»։ Այդ երկար-բարակ մարդը հանկարծ մանրացավ, դարձավ մրջյունի չափ։ Խղճացի նրան՝ երևի ինքն էլ հաս-

տատ գիտե, որ ծերանում է։— Պատիկ-մատիկ ոտքեր ունես,— ասաց,— երևի երեսունչորս-երեսունհինգ համար...

Իսկ կողքիս նստած երիտասարդ թվացող այս տիպը չի էլ նայում իմ կողմը, ո՞ւր է նայում, գուցե իսկապե՞ս նա ժամացույց չունի։ Կարենն էլ այդպես ծանոթացավ ինձ հետ։ Հունիսի քսանչորսն էր։ Դարձյալ դեղատուն էի եկել, դարձյալ՝ մայրիկի համար։ Սկսվեց ժամը հարցնելուց, հետո նա նույնիսկ վճարեց իմ փոխարեն, գանձապահուհին մանր չուներ, ինձ մոտ հինգանոց էր։ Հետո մենք բնականաբար դեղատնից միասին դուրս եկանք։ Դա ե՞րբ էր, երևի միլիոն տարի առաջ։

— Դուք չե՞ք կարող մի քիչ ավելի հեռու նստել։

Կողքինս ինձ նայեց զարմացած, որովհետև մեր երկուսի արանքում կարող էր տեղավորվել մեր ողջ դասարանը, բայց վեր կացավ.

— Ես ավելի լավ է մի քիչ քայլեմ։

Այ քեզ տիպ։ Քամի է, ավելի լավ է կոճկվեմ։ Իսկ տիպը չի գնում, նա դանդաղ քայլում է, կարծես լող է տալիս մայթին՝ մինչև դեղատուն, հետո՝ ետ։ Կարենի հետ խաչմերուկում ժամադրվեցինք, չթողեցի, որ մինչև տուն ուղեկցեր, դրանից հետո էլ ոչ մի անգամ չթողեցի, ինչո՞։

— Վաղը, ե՞րբ է ձեր դեղի ժամանակը,— հարցրի։

— Յոթին։

— Իմն էլ։

Երկրորդ օրը, երբ պարզվեց, որ ոչ մեկս էլ դեղի համար չէինք եկել, գնացինք կինո։ Չեմ հիշում՝ ինչ նկար էր։

— Դուք տեսե՞լ եք այս նկարը,— հանկարծ հարցնում եմ,— մեկն ասում է լավն է, մեկն ասում է՝ չէ։

Տիպը, որ հասել էր իմ քթի տակ, կանգ է առնում.

— Ի՞նչ նկար։

— Այս նկարը՝ Ոստիկանության կոմիսարի խոստովանությունը՝ չգիտեմ ում։

— Հանրապետության դատախազին,— մեղմ ժպտում է տղան,— ծանր նկար է, չե՞ք ասի ժամը քանիսն է։

— Ութը։

— Շնորհակալ եմ, եթե չեք տեսել, արժե նայել, բայց ծանր նկար է։

Ու նորից սկսեց լող տալ։ Այ քեզ տիպ։ Իսկապես, ի՞նչ նկար էր, որ նայեցինք Կարենի հետ։ Վրացական նկար էր։ Հետո մենք սկսեցինք հանդիպել դեղատան մոտ։ Տեղը հարմար էր՝ իմ մայրիկն էր հիվանդ, նրա՝ եղբայրը։ Երկրորդ անգամ գնացինք ամառային կինոթատրոն։ Ցուրտ կլինի, ասացի, թեպետ հունիսի 31-ն էր։

— Եթե ցուրտ լինի, կգրկեմ քեզ և չես մրսի։

Ես որոշեցի բարկանալ, այդ մտադրությամբ նայեցի նրա աչքերին, բայց... չբարկացա, ինչո՞ւ... Փողոցում մուգ թանաքագույն մութ է, փողոց-պիեսի գլխավոր գործող անձերն արդեն ոչ թե մարդիկ, այլ մեքենաներն են՝ իրենց դեղին, սպիտակ աչքերով։ Մարդիկ համարյա չեն երևում։ Նստեք, ասում եմ ժամացույց չունեցող տղային, նստեք, չհոգնեցի՞ք։ Տղան անմիջապես նստում է, աչքը փողոցի կոնվեյերին, հայերեն կլինի հարահոս, լավ բառ գտա, չէ՞... Կարենն այն օրը, ամառային կինոյում, չգրկեց ինձ, թեպետ ցուրտ էր, բայց նստած էր շատ մոտիկ, ինձ թվում էր աջ կողքս այրվում է։ Կարծեմ վրացական ֆիլմ էր, ֆիլմից ոչինչ չեմ հիշում։ Իսկ Մամբրեն, խնդրեմ, ինձ համբուրեց մեր ծանոթության երկրորդ ժամին։ Դարձյալ կինո գնացինք, ե՞րբ էր։ Երևի միլիոն տարի առաջ։ Սանոթացանք, սուրճ խմեցինք, մտանք կինո և երբ լույսերը հանգան, նոր իմացանք, թե ինչ նկար ենք նայելու. «Գոյա»։ Մամբրեն գրկեց իմ ուսերը, քիթը մտցրեց մազերիս մեջ, հետո հանկարծ համբուրեց։

— Թող կինո նայեմ,— ասացի,— ես սիրում եմ Գոյայի նկարները։

— Ես էլ,— ասաց,— հատկապես «Մերկ Մախան»։

Ինչ որ է, բայց շատ զարգացած տղա է Մամբրեն. սովորում է երկբարանականում, իսկ Գոյայի նկարներն անգիր դիտե։

Ես մեքենագրուհի չդարձա, երկար ու բարակ դիրեկտորն ինձ քարտուղարուհի դարձրեց, իսկ քարտուղարուհուն, որ տգեղ աղջիկ էր, դարձրեց մեքենագրուհի։ Հիմա նա ամեն օր է նայում ինձ, չի խրատում, թե կարճ եմ հագնում, ուշ գնում եմ աշխատանքի, շուտ վերադառնում տուն, ձայն չի հանում։ Է, թող նայի, ինչ կա որ, ծեր մարդ է, հո չի՞ ուզի ինձ։

— Իսկ դուք կոնսերվատորիայո՞ւմ եք սովորում։

— Ինչի՞ց ենթադրեցիք։

— Գունատ դեմք ունեք, նման եք ջութակահարի։

— Աշխատում եմ, վիճակագրական վարչությունում։

— Զանձյալի տեղ է, չէ՞, թվեր, հաշիվներ, արխիվ...

— Այ, գիտե՞ք, անունդ ինչպե՞ս է, Անի՞։ Գիտեք, Անի, մի անգամ եկեք մեզ մոտ, կանանք, որ սիրալվում ենք։ Հայաստանում գիտե՞ք ամենամեծ մարդը քանի տարեկան է։ Հարյուր երեսուներեք։ Հայաստանի ամենափոքր գյուղում, գիտե՞ք, քանի բնակիչ է ապրում։ Չորս։

Այ քեզ ժամացույց չունեցող։

— Իսկ դուք ինչո՞ւ ժամացույց չունեք։

— Գիտեք, չեմ սիրում, անընդհատ նայում եմ ժամացույցին,

ջղայնանում եմ։ Ավելի լավ է մարդկանցից հարցնել, երբեմն էլ այդպես նոր մարդկանց հետ ես ծանոթանում, օրինակ, այսօր։ Հիմա ժամը քանիսն է։

— Ութն անց տասնմեկ։

Դիրեկտորը վերջերս մի անգամ էլ փորձեց շոյել մազերս, ես հանգիստ բռնեցի ձեռքը, հանդիսավոր տարա գրեցի թանաքամանի մեջ։ Նա բաց թանաքաման է օգտագործում և մատները լրիվ թանաքոտվեցին, միլիցիայում հիանալի կարելի էր մատնահետքեր հանել։ Կարծում էի կբարկանա, ծիծաղեց։ Կարե՛ն, Կարե՛ն... Դեղատունը դարձավ մեր ժամադրավայրը։ Ես սիրում էի նրան, բայց ասում էի ճիշտ հակառակը, ամեն օր ուզում էի հանդիպել, բայց ասում էի էլ չեմ գա։ Մի օր ասացի՝ «Քո ոչ մի բառին չեմ հավատում», իսկ նա տխուր-տխուր նայեց ինձ. «Ինչո՞ւ»։

Մի օր գնացինք Կարենի մորաքրոջ տուն։ Մորաքույրը ծովափ էր գնացել, կարծեմ Պիցունդա, Կարենը պարապում էր նրա տանը։ Կարող էր, չէ՞, չասել։ Ես չէի ուզում գնալ, մինչև մորաքրոջ տուն հասնելը հնարում էի, թե գործ ունեմ, բայց գնացի։ Սիրուն, մի սենյականոց բնակարան էր, մտածեցի, որ եթե Կարենի հետ ամուսնանանք, այդպիսի բնակարան կունենանք, գուցե մորաքույրն էլ հենց իր տունը թողնի մեզ, ի՞նչ կա որ, քի՞չ մորաքույրներ են անում այդպես։ Կարենը վառեց բոլոր լույսերը, թեպետ ցերեկ էր, հետո ցույց տվեց դրասեղանը. լիքը գրքեր էին։

— Շա՞տ ես պարապում։

— Երրորդ տարին է, եթե այս տարի չընդունվեմ, էլ վերջ, չեմ դիմի։

— Ես երկրորդ տարին է, մինչև երեսուն տարեկան դասնալս փորձելու եմ։

Նստեցի բազկաթոռին, այն ժամանակ էլ կարճ էի հագնում, ծունկներս բացվեցին, վեր թռա, հանկարծ Կարենը կնկատի։

— Իսկ դուք ոչ մի անգամ ժամացույց չե՞ք ունեցել,— հանկարծ կարվում եմ ինձ պաշարած պատկերներից ու դիմում եմ կողքինիս։

— Ունեմ, նայում եմ ու դուրս գալիս։

Ես արդեն մի քիչ հետաքրքրված եմ նայում նրան, համարյա ուսումնասիրում, շատ էլ հաճելի տղա է, կապույտ ջինս է հագել, մազերը թափված են ուսերին, համարյա հիպի։

— Դուք ակնոց գործածո՞ւմ եք։

— Կարդալիս։ Կարդալիս դնում եմ, Անի, իսկ դո՞ւք...

Ես քրքջում եմ, իսկ նա ժպտում է շփոթված։

— Ինչեր եմ ասում...

Կարենը սուրճ պատրաստեց այն օրը, հետո կես շիշ կարմիր գինի բերեց, լցրեց բաժակները։

— Խմենք մեր կենացը,— ասաց։

— Խմենք,— ասացի։

Հետո երկուսով տեղավորվեցինք բազմոցին, կողք-կողքի։

— Ինչո՞ւ ես վառել լույսերը,— հարցրի։

Հանգցրեց, բայց սենյակում պայծառ լույս էր ու ես, չգիտեմ ինչու, վեր կացա, ձգեցի վարագույրները։

— Պարե՞նք,— հարցրեց Կարենը։

Չգիտեմ, գնա՞մ համալսարան, գտնե՞մ Մամբրեին, թե չէ։ Էլի նույն սենյակն է տանելու, տատի տունն է, ինքն այդպես ասաց, ասաց գրանցվել է, որ տատի մահից հետո տունը մնա իրեն, ինչ կա որ, քշե՞րն են անում... Չգիտեմ, գնամ թե չէ։ Սենյակը ոչինչ, միայն թե բնակարանում հարևան կա։ Երկու օր առաջ, երբ առաջին անգամ Մամբրեն այնտեղ տարավ, այդ հարևանը՝ յոթանասուն-ութսուն կիլոյանոց մի կին, երկար-բարակ շափում էր ինձ ոտքից գլուխ, կարծես թե թարմ միս էի, դրեց կշեռքի նժարին, կշռեց, թերակշռեց, շատ պետքս է։ Երբ սենյակ մտանք, Մամբրեն գրկեց ինձ, ասաց՝ նստենք հատակին։ Հատակին հաստ փափուկ գորգ էր, է, ինչ կա որ, նստեցինք, սկսեց վայրենու պես համբուրել վիզս, ծնկներս, ձեռքերս։

— Շրթունքները հիմա ընդունված չէ,— ասաց։

Իսկապես որ, շրթունքներ համբուրելը անտիկ սովորություն է։ Արթուրն, օրինակ, բոլորովին ուրիշ էր, թեպետ երկու հանդիպումից արդեն ձանձրացա, տեսնես ի՞նչ է անում այս րոպեին։ Արթուրին Մամբրեից հետո հանդիպեցի, Սուսաննայի քեռու տղան է։ Նա էլ իրենց տուն տարավ, տանը լիքը մոմեր էին, իսկական վանք, բոլոր մոմերը վառեց, պատին խաչքարի մի կտոր էր, լույսերը հանգցրեց։ Սկզբում չէր մոտենում ինձ, մի քիչ ջղայնացա, նստել էր մի կիլոմետր հեռու, մեռելի պես փակել կոպերը, երաժշտություն էինք լսում։ Մագնիտոֆոնն այնքան էլ լավը չէր։

— Ջուր կտա՞ս,— ասացի. ոչ մի գրամ էլ ծարավ չէի, պարզապես բարկացա, պարզապես ավելի ճիշտ կլիներ վեր կենալ, դուռը շրմփացնել ու գնալ։

Արթուրը շատ դանդաղ բացեց աչքերը, անխոս վեր կացավ, ջուր բերեց, հետո, երբ ես չխմեցի, կռացավ ու համբուրեց ինձ։

— Ի՞նչ ես անում,— իսկականից բարկացա։

— Սբս,— ասաց,— չխանգարենք, ոչ երկրային երաժշտություն է։

Հետո կռացավ ու էլի համբուրեց։

Կարե՜ն, Կարե՜ն... Պարեցինք երկար, ժապավենը վերջացել էր, իսկ մենք դեռ պարում էինք, մոտիկ, շատ մոտիկ էինք իրար, գլուխս պտտվում էր, գինո՞ւց... Ձեռքս պատահաբար դրի նրա կրծքին. Կարենի սիրտը սարսափելի բաբախում էր։ Ես շատ վախեցա նրա համար, հետո զգացի, որ իմ սիրտն էլ աշխատում է սովորականից արագ, ինձ թվաց՝ հիմա մի մեծ, անուղղելի բան է կատարվելու, ուզեցի թողնել, հեռանալ նրանից, իսկ նա հանկարծ համբուրեց ինձ, գուցե թվա՞ց... Մի պահ, միայն մի պահ մենք ձուլվեցինք իրար և երբ կուրծքս դիպավ նրան, անասելի, անծանոթ դող զգացի...

— Թող ինձ,— ասացի, նա զգաստացավ, մեղավոր նայեց, ավելի ճիշտ՝ չնայեց ինձ։

— Ներիր,— ասաց։

Կարե՜ն, Կարե՜ն... Նա հանկարծ, ասես մեքենաբար, սկսեց վառել բոլոր լույսերը, հետո խոովկան երեխայի պես գնաց, նստեց գրասեղանի մոտ։ Իսկ ես կարծես մրսում էի. ինչ դող էր դա, որ այրեց մարմինս, սառն էր, բայց այրեց։ Ես երևի շատ փխրուն մի բան գտա ու կորցրի հենց գտնելու վայրկյանին, որովհետև հետո երբեք, երբեք չկրկնվեց այդ դողը, թեպետ կրկնվեց մնացած ամեն բան։

Մամբրեն, եթե ուզենամ, վաղը նորից քարշ կտա ինձ, կտանի տուն, յոթանասուն կիլոյանոց հարևանուհին նորից խեթ-խեթ կնայի մեզ ու մաշված բազկաթոռը կրերի միջանցք, կդնի տատի դռան առաջ, իսկ մենք դուռը կփակենք բանալիով ու կփլվենք հատակին։ Փափուկ, լավ հատակ է, իսկ ես այս տարի էլ չընդունվեցի։ Ոչինչ, կշարունակեմ աշխատել կոշկակարների թաղավորի մոտ, մինչև երեսուն տարեկան դառնալս, ինը տարի դեռ կա, իսկ մայրիկս ասում է, որ մի քանի հոգի արդեն իմ ձեռքն են խնդրում։ Ինչ հին, լավ նախադասություն է, չէ՞. «Իմ ձեռքն են խնդրում...»։ Է՜... Վերգինե մորաքույրն էլ կարծեմ ոչ այնքան մայրիկին է եկել տեսության, այլ ժամանել է հարևանի տղայի համար բանակցելու, բարեխոսելու։ Է՜, կարելի է նաև ամուսնանալ, ինչ կա որ, թեկուզ այդ հարևանի անհայտ-անանուն տղայի, թեկուզ այս վիճակագրի հետ, որ ժամացույց չունի։ Ասենք սրանից ինչ ամուսին՝ մոլորված մեկն է երևում։ Նայում եմ ժամացույցիս, դեղը արդեն պատրաստ կլինի, գնամ վերցնեմ, ուշ է, մայրիկը կանհանգստանա։ Ես վեր եմ կենում, կողքինս էլ։

— Գնո՞ւմ եք։

— Այո, իմ դեղն արդեն պատրաստ պիտի լինի։

— Հիվա՞նդ եք։

— Մայրիկս։

— Դե, առողջություն մայրիկիդ։ Շատ ուրախ եմ, որ ծանոթացանք։

Ես ծանր, թաց գերանի պես գլորվում եմ դեղատան կողմը, հանկարծ ուզում եմ լաց լինել, ինչ-որ բան զոռալ մարդկանց, մեքենաներին, լուսերին։ Կարենին եմ ուզում։ Ի՞նչ եղավ, ինչո՞ւ բաժանվեցինք։ Ո՞վ կասի։ Ես երկու-երեք անգամ չգնացի ժամադրության. առաջին անգամ մայրիկը մենակ էր, երկրորդ անգամ էլ էր մայրիկը մենակ, իսկ երրորդ անգամ մաղերս հինա էի դրել, ուշ շորացան, հենց այդ ժամին էր, ես ի՞նչ անեմ։ Հետո, մի քանի անգամ ուզում էի, բայց ինչպե՞ս գտնեի նրան, իսկ հետո հանդիպեց այդ Մամբրե կոչեցյալը, հետո Արթուրը...

Դեղատանը կարծես լույս են վառում, այլ ոչ թե լուծողական ու սապիրին, իսկ ես հանկարծ, ամենախակականից ուզում եմ լաց լինել։ Ես դեղատամսը մեկնում եմ ապակե խոռոչից ներս, ակնոցավոր կինը վերցնում է թուղթը, քիչ հետո մատներիս մեջ խցկում ահագին մի շիշ։

— Օրը երեք անգամ, ճաշի գդալով։

Ես շիշը գրկում եմ՝ ինչպես մայրը ծծկեր երեխային է գրկում ու փախչում եմ դեղատան լույսերից։ Հեռախոսի խցիկը դատարկ է, կարող եմ դանդահատել, ո՞ւմ։ Սեր չկա, սերը Ռոմեոն ու Ջուլիետն են հորինել և իրենց հետ էլ տարան այն աշխարհը, բոլոր տղաների մտքինն էլ, ի վերջո, նույնն է, միայն թե մեկը ցերեկով մում է վառում, մյուսը՝ էլեկտրական լույս, երրորդը բանալիով անմիջապես փակում է դուռը։ Փողոցում կյանք կոչվող կոնվեյերն է, ոչ ոք մյուսին չի ճանաչում, չի տեսնում, չի սիրում, որովհետև փողոցում միայն, միայն մեքենաներ են։ Գյուտ, եթե հանդիպելիս լինեինք, կասեի Կարենին, ուզում էր, չէ՞, գրող դառնալ, լավ միտք է, նրան պետք կգա։ Ժամացույց չունեցող տղան դեռ նստած ծխում է, կարծես չի էլ նկատում ինձ, պլշած նայում է փողոցին։ Ես հեռանում եմ, հեռանում դեղատնից, այդ տարօրինակ տղայից, հետո մեկ էլ եմ նայում, դեռ այնտեղ է, ու հանկարծ մտածում եմ, որ երևի նա պարզապես սպասում է իր սիրած աղջկան։ Երկու ժամ անընդհատ սպասում է, ես այդքան չէի սպասեցնի։ Կասկածո՞ւմ եք, հարցրեք Կարենին, գտեք նրան, հարցրեք։ Միայն թե գտեք։

— Ուշացար,— ասում է մայրիկը։

— Ինչ սիրունացել ես,— ասում է Վերգինե մորաքույրը,— հիմիկվա աղջիկները ժամը մեկ սիրունանում են։

Դեռ հարկավոր է տունը հավաքել, փոշիները սրբել, թեյ դնել մայրիկի համար, ճաշը եփել, ինչպես միշտ, երբ մայրիկը վատառողջ է։

— Մի քիչ զգադար տուր,— ասում է մայրիկը,— փոշիները չեն փախչի։

Ընդհակառակը՝ փոշիները կմնան, կպնդանան, բայց տխուր ժա-

մանակ ես սիրում եմ փոշիները հավաքել, հավաքել խնամքով, մանրամասն, ցրվում եմ մի տեսակ։

— Երկու ժամ է դրսում էիր,— ասում է Վերգինե մորաքույրը,— ջահել, աչք ուտող աղջիկ ես, մութը չընկած գու պիտի տանը լինես։

Մորաքույրը ինչ-որ բան է ուզում ասվելացնել, բայց ես նկատում եմ, մայրիկս աչքի պոչով սասատում է, հետո խոսքը կտուրն է գցում.

— Ինձ թեյ տուր, մորաքրոջդ սուրճ, հետո էլ գնա ման արի։ Մի շաբաթ է կինոյի երես չես տեսել, կինո գնա։

— Ո՞ւմ հետ,— ես դա բնազդաբար եմ ասում, ես, աղնիվ խոսք, ոչ մի ցանկություն չունեմ կինո գնալու, ես մեքենաբար հավաքում-հավաքում եմ փոշիները, և լսում, թե դաղի վրա ինչպես է բլթբլթում թեյը,— ո՞ւմ հետ գնամ կինո, այ մայրիկ...

Իսկ Վերգինե մորաքույրը վրա է տալիս.

— Ճիշտ է ասում, ո՞ւմ հետ, աշխարհը լցվել է խուլիգաններով, ջահել աղջիկը հիմի իրավունք չունի մենակ կինո գնալու, մանավանդ որ հեռուստացույց էլ ունեք, փառք աստծու։

— Լեհաստանում, մորաքույր,— ջղայնանում եմ հանկարծ,— մեկ միլիոն աղջիկ ավելի է, ո՞ւմ հետ կինո գնա այդ մեկ միլիոնը։

— Այսինքն, ոնց թե մեկ միլիոն ավելի է։

— Հենց այդպես, 17-ից 30 տարեկան երեք միլիոն տղա կա, չորս միլիոն աղջիկ։ Այ, այդ մեկ միլիոն աղջիկը՝ ո՞ւմ հետ գնա կինո...

— Եղբայր-բան չունե՞ն, թող եղբայրների հետ գնան։

— Եղբայրները չեն ուզում իրենց քույրերի հետ կինո գնալ, երբ որ 17—18 տարեկան են դառնում, նրանք ուրիշ աղջիկ են ուզում, ուրիշի քույր։

— Քոռ այդ ավելցուկ աղջիկներն էլ իրար հետ կինո գնան,— չի դիջում մորաքույրս,— Լեհաստանում ի՞նչ է, հեռուստացույց դեռ չկա՞։

Ես խոհանոցում կարտոֆիլ եմ մաքրում ու մտքումս որոշում, որ եթե կճեպը ծայրից-ծայր հանեմ, կգնամ կինո։ Կճեպը չի կտրվում։ Մաքրած կարտոֆիլը կթողնեմ սառը ջրում, հետո, երբ կինոյից վերադառնամ, կգցեմ մսաջրի մեջ, կգումարեմ մի բուռ բրինձ և կեցցե իմ եփած սուպը։ Մի անգամ Կարենին ասացի, որ համով-հոտով ճաշեր եմ եփում, ծիծաղեց, ասաց մինչև չուտեմ, չեմ հավատա։ Չկերավ...

— Ի՞նչ մուրաբա տամ, մա,— ձայն եմ տալիս խոհանոցից։

— Հոնի,— լսում եմ մայրիկիս ձայնը,— իսկ դու մի բան կեր ու գնա կինո, մենք մորաքրոջդ հետ ահագին բամբասանք ունենք։

Իմ մայրիկը ամենախսկական գանձ է, իսկ ես չեմ ուզում կինո գնալ։ Խոհանոցից երևում են մեր փողոցի ծառերը և պատուհանը շրջանակ է

թվում աշնան գույնզգույն ինքնանկարի համար։ Ինչո՞ւ նոր տարվա սկիզբը ձմեռն է, փոխանակ աշունը լինի։ Ուզում եմ հենց հիմա նստել ու մի հրավարտակ գրել Աստծուն՝ թող այսուհետև նոր տարին սկսվի հոկտեմբերի մեկից, մանավանդ որ ծառերը զարդարելու կարիք էլ չի լինի, ծառերին լիքը գույն է, աշնան յուրաքանչյուր ծառ՝ տոնածառ է։ Ձրի տոնածառ...

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԿԱՐԵՆ

Վերջ։ Որքան էլ մորս արյան ճնշումը բարձրանա («Փոխանակ աշխատավարձս բարձրանա, բարձրանում է մորդ արյան ճնշումը»— հայրս է ասում), այդ մեկ, որքան էլ քիթս տրորվի, այդ երկու, մանավանդ որքան էլ մեր դասարանի ընդունված-երջանիկներն իրար հետ հավաքվելիս մոռանան իմ անունը, այդ երեք, այլևս համալսարան չեմ դիմելու։ Այս տարի էլ պակասեց, ընդամենը... մեկ միավոր։ Ինչ կա զարմանալու, կյանքն էլ երևի սպորտ է, իսկ սպորտում չեմպիոնին և վերջին տեղը բռնողին հաճախ բաժանում է մեկ վայրկյան, մեկ մետր, մեկ միավոր։ Ի՞նչ կա անբնական։ Մխիթարո՞ւմ եմ ինձ, ենթադրենք։ Նստել եմ համալսարանի աստիճաններին և, եթե հարմար լիներ, կքնեի, բայց շատ շոգ է։ Հարյուր մետր հեռավորությունից էլ կարելի է որոշել, թե ով է ընդունվել, ով ոչ։ Ծխեմ։ Խեղճ մայրիկս հիմա նստած է հեռախոսի մոտ, սպասում է, որ զանգահարեմ, որ հետո էլ ինքը զանգահարի մոլորակի բոլոր համարներով։

— Ձե՞ք ասի ժամը քանիսն է,— հարցնում եմ մի աղջկա, որ անցնում է իմ կողքով։

— Տասնվեց միավորով դուրս մնացի։

— Ես ժամն եմ հարցնում։

Աղջիկը, որին ժամն եմ հարցնում, ժպտում է, և ես նկատում եմ, որ նրա աչքերում միանգամայն բնական արցունքներ են։

— Իսկ ես տասնյոթով դուրս մնացի,— ասում եմ ես ալարկոտ,— չգնա՞նք սրճարան, թեկուզ «Սանասար-Բաղդասար», շոգ է։

Աղջիկը, որ հեռվից ավելի գեղեցիկ էր, քան երկու քայլի վրա, մի քիչ մտածում է։ Իմարկե, նման է Անիին, ոսքե՛ր։ Հանկարծ հայտնագործում եմ ես, իսկ աղջիկն արդեն սրբել է արցունքը և երևի նկատել,

թե որ ուղղությամբ եմ լարել աչքերս հեռադիտակը։ Այսինքն, դա իմ կամքից անկախ է, որովհետև ես դեռ նստած եմ, իսկ նա կանգնած է։— Շոգ է,— ալարկոտ շարունակում եմ համոզել ես,— հետո էլ՝ ինչքան ուշ տուն հասնենք, համազգային սուգն այնքան ուշ կսկսվի։

— Ընկերուհիս ներսում է, ցուցակների մոտ, նա ընդունվել է։

— Եթե ընդունվել է, նա արդեն մեր դասակարգից չի, մենք պրոլետար ենք, որ այլևս ոչինչ չունենք կորցնելու։

— Դուք որտե՞ղ էիք դիմել։

— Բանասիրական, չի՞ երևում։

Ես, այնուամենայնիվ, ոտքի եմ ելնում, մատներով սանրում մազերս։

— Անունս Կարեն է,— ասում եմ։

— Հիմա տղաների մեծ մասի անունը Կարեն է, ես քեզ Կարլ կասեմ։

Կարլը ոչինչ, վատ անուն չէ՝ Դոն Կարլոս, Կարլ Մոոր, Կարլսոն, որ ապրում է տանիքում, բայց ես ջղայնանում եմ. ինչպես թե «ես քեզ Կարլ կասեմ», կարծես տատս է կամ հորաքույրս՝ էրքով-իրավունքով կնքում է ինձ («էրքով-իրավունքով»— հորս խոսքն է)։

— Կարեն անունով քանի՞ ծանոթ ունեք,— հարցնում եմ մի քիչ թունոտ։

— Հիմա կհաշվեմ,— լրջորեն ասում է աղջիկը, հետո սկսում է մեկ-մեկ ծալել մատները։ Երկար-բարակ, գեղեցիկ մատներ են,— տասներկու։

— Դե ես թող լինեմ Կարեն 13-րդը։— Հետո ինքս եմ մի քիչ մտածում։— Իսկ գուցե մի Կարեն էլ գտնեք, որ ես տասնչորսերորդը լինեմ, 13-ը լավ թիվ չէ։

— Չէ, ազնիվ խոսք, չկա, Կարեն 13-րդ։

Համալսարանի բակում կարծես քսան տարեկանների աճուրդ է կամ տոնավաճառ, եթե նրանք վատ հագնված լինեին, կթվար գաղթականներ են։ Ոչ մի բան էլ չկա, կմնամ տպարանում, կշարունակեմ կարդալ անհամ նյութեր, համով տառասխալներ կգտնեմ, հետո մի օր կհրապարակեմ «Սրբագրիչի գիշերները» վերնագրով վեպ, կցնցեմ խմբագրի տեղակալ Սուրենյանին, մոլոս, բոլորին։ Անին էլ երևի կկարդա, ի՞նչ կմտածի, իսկ կկարդա՞ որ...

Ես մի վայրկյան տարվում եմ մտքերով, իսկ աղջիկն ասում է.

— Դե, Կարեն 13-րդ, մուսանե՞րդ եկան, դու բան էիր առաջարկում, չէ՞, ես էլ, ճիշտն ասած, չեմ ուզում շուտ տուն հասնել։

Մանրամասն նայում եմ իմ դիմաց կանգնած աղջկան՝ շլացուցիչ գեղին ներկած մազերը թափված են ուսերին, բոլոր ատամներն իրենն են,

աչքերը խամ են և ոչ մի կարիք չկա կոպերը ներկել, խելքը գլխին աչքեր են։ Կարճ է հասել, նույնիսկ չոչվել դուրս կարձ։

— Այդպես էլ գնում էիր քննությունների՞։

— Ի՞նչ կա որ, իմ անունը Լիլիթ է։

— Ինձ համար ոչինչ չկա, Լիլիթ, նույնիսկ շատ լավ է, բայց չպիտի մոռանաս, որ քննողների մեջ կան հայրիկներ ու մայրիկներ, որոնց աղջիկները նույնպես կարճ են հագնում և ամեն առավոտ բարկացնում նրանց, կան նոր ամուսնացած տղամարդիկ, որոնք չեն լսում քո պատասխանը, այլ նայում են ծնկներիդ. ի վերջո, կան տգեղ ոտքեր ունեցող կին կամ օրիորդ դասախոսներ, մանավանդ օրիորդ, որոնք ոտքերիդ են գնահատական գնում և ինչքան լավ են ոտքերդ, այնքան ավելի վատ քեզ համար։ Այսպիսով, քանի՞ միավոր կորցրեցիր։ Իսկ քո ոտքերը լավն են, այդ՝ ի միջի այլոց։

— Շնորհակալություն, հաճոյախոսն ես Երևում, ուրեմն, այդպիսով ես տասնինը միավոր կարող էի ունենալ, ըստ քո հաշվումների։

— Ոչինչ, մյուս տարի քննության կգաս ծնկներդ քողարկած, կոպերիդ ոչ թե ներկ, այլ սոխ կքսես, կկարմրի, դասախոսները կմտածեն, որ գիշեր-ցերեկ կարդացել ես, կգնաս մազերդ անխնամ սանրած. գրքից աչք բարձրացնում՞ ես, որ հայելուն նայես, հագած կլինես մորդ աղջիկ ժամանակվա շորերից մեկը։ Հը՞։

Լիլիթը գլխարկի քրքջում է, հետո լրջանում, իսկ մենք արդեն քայլում ենք Խահակյանի փողոցով, որը նույնպես օկուպացրել են քսան տարեկանները և նրանց ծնողների, քեռիների մոտոտ-մեքենայացված զորախմբերը։ Ոչ ինձ, ոչ Լիլիթին մեքենա կամ մարդ չի սպասում։ Այսօր գիշեր նորից կգնամ տպարան, ուշակերպս վերջացավ, տպարանի տղերքն, իհարկե, ձեռ կառնեն մի քիչ, հետո վարպետ Նորիկը կսպասի նրանց, կվախեցնի ձեռքի բղով, որով շարվածքի միջից տառեր ու տողեր է հանում, հենց ինքն էլ փող կտա ցրիչ ճուտոյին. կասի երկու շիշ օդի բեր և մի քիչ ուտելու բան-ման, իսկ երբ հինգ ոտքի հետո ամեն ինչ բերված լինի, մրոտ մատներով կտրաելով հացն ու երշիկը, կլցնի կողքի Բիթեղաստան սեղանների մեկին,— իմ ենք,— կասի,— քիթդ էլ չկախես, դու վերջը մեր թերթի խմբագիրն ես դառնալու, այ էն ժամանակ ինձ չմոռանաս։

Մի պահ մոռացել էի Լիլիթին, ասենք, նա էլ հանկարծ մտացրիվ է դառնում, թե՞ տխրում է հանկարծ, ու մենք առաջ ենք գնում իրրև փողոցում պատահաբար կողք-կողքի հայտնված անցորդներ։ Անին այդպես էլ չիմացավ, որ ես սրբագրիչ եմ աշխատում, իսկ Անահիտն իմացավ և զուցե դրա՞ համար կամաց-կամաց սառեց։ Կամաց-կամաց՝ կարծես թե

յոթ տարի սիրահարված Լիլիթ։ Սիրահարվեցի նախ ջղայնությունից, հետո նրա անունի առաջին երկու տառի համար։ Պատի պես աղջիկ էր, անհաղորդ, կասեր մեր խմբագրի տեղակալ Սուրենյանը։ Մի օր Անահիտին ասացի, որ կիսահաղորդիչի է նման, նեղացավ։ Իսկ ես ընդամենը կես ճշմարտությունն ասացի։

— Լիլիթ, ի՞նչ ես մտածում։

— Ես հնագիտության բաժին էի դիմել,— ասում է,— դասախոսը հարցրեց, թե ինչ հուշարձաններ կան Աշտարակի շրջանում, ծնողներս այնտեղից են, ես բացի Կարմրավորից, ոչինչ չհիշեցի։

— Լավ ես հիշել, էլի բան է։

— Իմ հարցը Զինգիզ-խանի արշավանքն էր, ինչի՞ հարցրեց Աշտարակի հուշարձանները։

— Իրավունք չուներ, բողոքիր մինիստրին,— ասում եմ ես ամենայն լրջությամբ։

Լիլիթը սկզբում մտահոգ, հետո տարակուսած, հետո ատամները բաց նայում է ինձ.

— Կարեն 13-րդ, դուք չափն անցնում եք։ Օրինակ, որտեղացի՞ են ձեր ծնողները։

— Ղարսից, Լիլիթ,— ասում եմ,— Ղարսից...

— Կարո՞ղ ես ասել, թե ինչ հուշարձաններ կան Ղարսի շրջանում։,

— Կարող եմ, Լիլիթ. կային՝ Առաքելոց տաճարը, 10-րդ դար, չուգունե կամուրջը, 19-րդ դար, բերդը՝ սկսել են 4-րդ դարում, ռուսական եկեղեցին, 19-րդ դար։ Սրանք եղել են, Լիլիթ, իսկ թե ինչ է մնացել հիմա, չգիտեմ, վաղուց է, որ չեմ եղել Ղարսում...

— Դու ահագին բան գիտես, Կարեն 13-րդ, եթե իհարկե ճիշտ-ճիշտ ասացիր։ Այ, դու կընդունվեիր հնագիտական... Ես հաղիվ երեք-չորս անգամ եմ Աշտարակ գնացել, կամուրջի մոտ ջրադաց կա։

— Կամուրջը, Լիլիթ. կառուցել են 17-րդ դարում։

— Որտեղի՞ց գիտես։

— Մայրիկս աշտարակցի է,— տեղնուտեղը ասում եմ ես, որովհետև Լիլիթն իսկականից է վշտանում.— իսկ ի՞նչ գործ ունեիր հնագիտության բաժնում, դու, մոդեռն աղջիկ։

— Դասախոսն էլ նույն հարցը տվեց։

— Տեսնո՞ւմ ես, էլի մի հարց, որ քո թերթիկում չկար, անպայման բողոքիր մինիստրին։

Լիլիթն այս անգամ ծիծաղում է զրնգուն ու երեխավարի, իսկ մենք արդեն մտնում ենք «Սանասար-Բաղդասար»։ Լավ սրճարան է, լուսամուտ չկա, պատերը տուֆ քարից, ցով է և կիսամութ, բայց մոտիկ է

տպարանին, հանկարծ մերոնցից մեկնումեկը այստեղ չլինի՞... Մոտս երկու ռուբլի քսան կոպեկ փող կա, չէ, հինգ ռուբլի էլ կա, որ անխախտ պահում եմ սև օրվա համար. սրանի՞ց էլ սև օր։

— Մի շիշ շամպայն տվեք,— մոտենում եմ բարին,— այո, սուրճ և շոկոլադ, ինչքա՞ն եղավ... Լիլիթ,— Լիլիթը նստած է անկյունի սեղանին, ավազանի մոտ,— դու քաղցա՞ծ ես, Լիլիթ։

Լիլիթը ձեռքով է անում, այսինքն, այո մի քիչ, իսկ ես սոված եմ առավոտից։

— Երկու հարյուր գրամ էլ երշիկ,— շարունակում եմ ես անվստահ, — էժան երշիկ, ի՞նչ արեց, մի քիչ էլ պանիր։ Յոթ ու քառասունհի՞նգ։ Ես ձեզ պարտք կմնամ քսանհինգ կոպեկ, ոչի՞նչ։

Ես ձեռքով եմ անում Լիլիթին, այսինքն, օգնիր ինձ, նա վերցնում է մատուցարանը, մոտենում։ Հետաքրքիր բան է, չէ՞, կյանքը, կողքից նայողը կկարծի, թե ես ու Լիլիթը մանկապարտեզից ճանաչում ենք իրար, այնինչ, կես ժամվա ծանոթ ենք։ Իսկ եթե հանկարծ ներս մտնի Անին, որտե՞ղ է հիմա, ի՞նչ է անում, ինչո՞ւ նեղացավ։ Չորս անգամ սպասեցի մեր դեղատան մոտ, չեկավ, ոչ հասցեն գիտեի, ոչ հեռախոսը, ինչո՞ւ չեկավ...

— Սուրճը սառչում է։

Ես անջատվում եմ ինձ պաշարած մտքերից, որովհետև այդ Լիլիթն է ասում «սուրճդ սառչում է». հետո հանկարծ տեսնում եմ, որ շամպայնի շիշը սեղանին է՝ գոթական եկեղեցու գմբեթի նման, մոռացել եմ բացել։

— Աղմուկո՞վ բացեմ, թե անաղմուկ,— հարցնում եմ Լիլիթին։

— Աղմուկով,— մեղմ ասում է Լիլիթը և նույն մեղմությամբ փորձում է դանակ-պատառաքաղով պլոկել երշիկի մաշկը։

— Ձեռքով արա,— ասում եմ ես,— երշիկին մի տանջիր, մեղք է։

Շամպայնի խցանը դուրս է թռչում, փրփուրը թափվում է սեղանին, մի քիչ՝ Լիլիթի ծնկներին, ես ձեռքով մաքրում եմ Լիլիթի ծունկը, հետո հիշում եմ, որ թղթե անձեռոցիկներ կան, երկրորդ անգամ մաքրում եմ արդեն թղթե անձեռոցիկով։ Լիլիթը երկու անգամն էլ թույլ է տալիս ու ասում է «շնորհակալ եմ»։ Լիլիթը մանրել է շոկոլադը, լցրել շամպայնի երկարավիզ բաժակի մեջ, շոկոլադի մանրիկ կտորները կատաղությամբ վերուվար են անում գազով հագեցած գինու մեջ, կարծես հարբել են, ուզում են դուրս նետվել բաժակից։

— Խմենք,— ասում է Լիլիթը,— խմենք, Կարեն 13-րդ։

— Ի՞նչ կենաց խմենք,— հարցնում եմ, որովհետև Լիլիթի ներկած կոպերի տակ հանկարծ զաղտնիք եմ կռահում. այ քեզ գյուտաբար, ո՞ր աղջկա ներսում գաղտնիք չկա։

— Սանասարի ու Բաղդասարի կենացը,— ասում է Լիլիթը,— եթե զույգ տղա ունենամ, անունները Սանասար—Բաղդասար եմ դնելու։

— Չես դնի,— ասում եմ։

— Երևի չեմ ունենա,— հանկարծ տխրում է Լիլիթը, և մենք խմում ենք, երկուսս էլ խմում ենք մինչև վերջ։

— Կծխե՞ս,— ծխախոտատուփը հանելով, ասում եմ Լիլիթին։

— Չէ, հիմա չեմ ուզում,— ասում է Լիլիթը, հետո անմիջապես միտքը փոխում,— տուր, կծխեմ։

Ես վառած լուցկին մոտեցնում եմ Լիլիթի սիգարետին և առաջին անգամ բավական մոտիկից, մոտավորապես մեկ համբույրի հեռավորությունից՝ զգում եմ նրա աչքերը, շրթունքները, մաշկը, երևի նաև տխրությունը։

— Ինձ թվում է դու լավ տղա ես, Կարեն 13-րդ։

Ինձ էլ է թվում, բայց այ Անիին այդպես չթվաց, հասկանո՞ւմ ես, Լիլիթ առաջին։ Ես այս բառերն, իհարկե, բարձրաձայն չեմ ասում, իսկ Լիլիթը դանդաղ, կաթիլ-կաթիլ լցնում է բաժակները։

— Էլի սուրճ կուզե՞ս,— հարցնում եմ մի քիչ վախով, հանկարծ չուզի՞...

— Բեր,— մեքենաբար ասում է Լիլիթը։

Ես նորից մոտենում եմ բարին։

— Եթե պարտքս դառնա հիսուն կոպեկ, ոչի՞նչ։

— Ոչինչ,— ասում է հաստլիկ, բարի թշերով կինը,— բայց իզուր ես թողնում, որ ծխի, երեխայի համար վնաս է։

Ես որևէ նախադասություն չեմ գտնում պատասխանի համար ու, երևի շփոթմունքից, թափում եմ սուրճի մի բաժակը։

— Բան չկա,— ասում է կինը,— դու նստիր, ես հիմա կբերեմ։

— Ի՞նչ էիք խոսում,— հարցնում է Լիլիթը, որ իր բաժակի շամպայնն արդեն խմել է,— դու շա՞տ ես լինում այստեղ։

— Լավ կին է,— ասում եմ ես,— խմե՞նք։

Ես լցնում եմ Լիլիթի բաժակը, հետո մենք ափսեանքով նայում ենք մուգ կանաչ շշին, որ կամաց-կամաց լցվում է դատարկությամբ, ինչպես իմ գրպանն է՝ հիմա, ինչպես մեր խմբագրի տեղակալ Սուրենյանի գլուխն է՝ միշտ, ինչպես սիրտս է... երբեմն։ Իսկապես, սիրտս հանկարծ դատարկվում է, թվում է աշխարհում ոչ ոք չկա, թվում է մենակ եմ՝ Սառուցյալ օվկիանոսի անանուն մի կղզում։

Մենք դուրս ենք գալիս փողոց, ահագին տարածություն թռչում ենք լուռ, մի տեսակ հանդիսավոր։

— Հարբեցի,— հանկարծ ասում է Լիլիթը,— շատ խմեցինք. չէ՞...

— Շատ,— հանկարծ խելքիս փշում է զանգահարել Անահիտին, երևի արդեն քաղաքում կլինի, շուտով դասերը կսկսվեն, ահա հեռախոսը։ Մի վայրկյան ներիր, Լիլիթ, ասում եմ, պիտի զանգահարեմ։ Լիլիթը ոչինչ չի ասում, միայն ժպիտ կա աչքերի մեջ։ Կարծես նույնիսկ ինչ-որ եղանակ է դնդնում քթի տակ։ Տաքսոֆոնի խոսափողը շոգից տաքացել է, քանի հազար մասնահեռք կա վրան, հանկարծ մտածում եմ։

— Բարև, Անահիտ։

— Ո՞վ է։

Անահիտի ձայնը հնչում է հեռավոր ու անտարբեր, և ես միանգամից ասում եմ.

— Կարենը։

— Կարե՞ն, լույս քո սենյոգին, արդեն ինձ թվում էր դու ուրիշ մոլորակ ես փոխադրվել։

— Մարդիկ դիմացինին հաճախ այն են ասում, ինչ իրենց պիտի ասվեր։

— Երկար, ձանձրալի նախադասություն էր, մանավանդ որ շոգ է։

— Ես շոգ չէի զգում, այսօր հանկարծ զգացի, որ շոգ է։

— Քաղաքո՞ւմ էիր։

— Բա ինչ։

— Էլի սխալնե՞ր ես գտնում։

— Եթե լինում են, իսկ միշտ լինում են։

— Իսկ արձակուրդ չունե՞ս, ի՞նչ է, քեզ չի՞ հասնում արձակուրդ։

— Հասնում է, քննություններ էի տալիս։

— Հա, նորի՞ց։

— Ընդունվեցի։

— Դրանից սկսեիր, շնորհավորում եմ, իսկ դու երկար-բարակ նախաբան ես ասում, մանավանդ որ շոգ է։

— Ի՞նչ ես անում, Անահիտ, շհանդիպե՞նք։

Պատասխանը նախ լռություն է լինում, իսկ ավելի ճիշտ՝ ես լսում եմ հեռախոսի միալար բզզոցը կամ բվվոցը։ Մեր խմբագրի տեղակալ Սուրենյանը կասեր՝ «Կամ չի լինում», ամեն բան պիտի իր տեղը գտնի, որովհետև ամեն բան մի աշխարհ է,— հետո կավելացներ—դա էլ հո ե՞ս չեմ ասում, այլ Թումանյանը, ընկեր Կարենս։ Ասում եմ շհանդիպե՞նք։

— Ե՞րբ...

— Թեկուզ հիմա, կինո «Նաիրիի» մոտ։

— Մի ժամ կտեի, մինչև վեր կենամ, հագնվեմ։ Գուցե երեկոյա՞ն, գուցե վաղը։

— Հիմա։

— Լավ, մի ժամից։

Ես խոսափողը դղրդյշ դնում եմ իր տեղը, հեռախոսին վերադարձնելով իր լռությունը և տեսնում եմ, թե ինչպես է խոսափողի դիակը ճոճվում հեռախոսի կախազանից... Դիակը, այ թե բառ գտա խոսափողի համար։

— Ներիր, Լիլիթ առաջին,— ասում եմ ես, աղջկան մոտենալով։ Լիլիթը փափուկ ժպտում է, պաղպաղակ է ուտում, էսկիմո, շոկոլադը հալվել է, դարչնագույն ներկել նրա կարմիր ներկած շրթունքները, և ես հանկարծ քնքշանքի մի ալիք եմ զգում, ինչո՞ւ, բայց անմիջապես կանխում եմ, չէ՛, կարիք չկա, կարծես ինքն իրեն վառվում է մոմը, իսկ ես փչում եմ, հանդցնում։

— Ի՞նչ պիտի անես, Լիլիթ։

— Հիմա՞։ Քեզ ձանձրացրի երևի, կգնամ տուն։

— Չհասկացար։ Ես ասում եմ առհասարակ ինչ պիտի անես, որ չընդունվեցիր։

— Կսկսեմ նորից պարապել։ Նախ կգնամ Աշտարակ, կուսումնասիրեմ գերեզմանները, կամուրջները, վանքերը։ Կկոնսպեկտավորեմ։

— Ի՞նչը, վանքե՞րը կկոնսպեկտավորես...

Փողոցը մեզ տանում է իր ասֆալտ, տաք թևերին, մի տասը-տասնհինգ բոպե մեզ համար կարծես չկա հոգս, չկա գառնություն, չկան հույսեր։

— Ես հասա,— հանկարծ ասում է Լիլիթը,— ես հասա, Կարեն 13-րդ, ուզո՞ւմ ես, գրիր հեռախոսիս համարը։

— Իհարկե,— ես հանում եմ ծոցատետրս, գտնում «Լ» տառը և գրում վեց թվանշան։— Ես հեռախոս չունեմ, Լիլիթ, եթե ուզում ես, գրիր աշխատանքիս հեռախոսը, բայց գիշերները պիտի գանգահարես։

— Եթե ուզենաս, ինքդ կգանգահարես, Կարեն 13-րդ,— հետս նայում է լուրջ, ինձ թվում է՝ տխրած աչքերով,— շնորհակալություն մեր երկու ժամի համար։

Նա թեթև վազում է դեպի վերելակը, վերջին անգամ ձեռքով անում, հետո վերելակը ահագին դղրդյունով նրան բարձրացնում է վերև։ Լիլիթը թվում է ամպ, թեթև, օդեղեն, հանկարծ ուզում եմ վազել նրա ետևից, հետ կանչել վերելակը, բայց դրա փոխարեն ծխախոտ եմ վառում ու շարունակում քայլել տաք փողոցով։ Ես քայլում եմ դանդաղ, գրպանումս ոչ մի կոպեկ, բարձրանում եմ Բարեկամության փողոցով, հասնում է մնում կինո «Նաիրին», երևի նաև Անահիտը, որովհետև մի ժամը վաղուց է անցել, իսկ ես քայլում եմ, քայլում։ Տպարան գնալուն դեռ

երկու-երեք ժամ կա, պիտի սպանել այդ ժամերը, շոգը, պիտի սպանել երևի նաև ուրիշ ինչ-որ բաներ։ Մի մոսկվացի տղա էր, այդ ե՞րբ էր, ասաց. «Մեր քաղաքում յոթ միլիոն մարդ է ապրում, կարող եմ փողոցներով քայլել մի տարի, երկու տարի և ոչ մի ծանոթ չի հանդիպի։ Ոչ մի ծանոթ»։ Շոգը չի ազդում միայն ժամացույցների վրա, սլաքները, Սիզիֆի նման անմռունչ, այսօր էլ կրկնում են իրենց երեկվա, իրենց անցյալ տարվա ճանապարհը, իսկ այս ժամացույցն ահա կանգնած է, երևի արձակուրդի մեջ է, կամ երևի նա ոչ թե ժամը, այլ դարն է ցույց տալիս, սլաքները կշարժվեն 2000 թվականի հունվարի մեկին, դեռ քսանութ տարի չորս ամիս կա։ Կարմիր, սանձարձակ ձիերի նման շոգը վրնջում է փողոցներով, բայց Կիևյան փողոցի վրա քամի է շարժվում, զովություն։ Ինչո՞ւ հասա այստեղ։ Չգիտեմ։

— Բարև, Անի։

Ես դա դեղատանն եմ ասում, ինչ կա որ, դեղատունը չի՞ կարող անուն ունենալ...

Ես դեղատանն եմ նայում նաև տրոլեյբուսի պատուհանից, տրոլեյբուսը համարյա դատարկ է, ավելի ճիշտ՝ լցված է լույսով, ինչպես դեղատունը։ Զարմանալի աղջիկ էր Լիլիթը, ինչ պիտի աներ այդ տիկնիկը հնագիտության բաժնում, բայց ինչու այդպես հանկարծ փախավ, վիրավորվե՞ց... Տոթ է, ես իջնում եմ տպարանի մոտ, ինքնավստահ նայում եմ տոմսավաճառի կողմը, որովհետև տոմս չեմ վերցրել, իսկ նա հարգանքով ասում է՝ «խնդրեմ, երիտասարդ»։ Ես, ճիշտն ասած, այդ պահին մի քիչ ամաչում եմ, բայց ինչ անեի, հենց առաջին օրը ուշանայի՞ աշխատանքից։

— Բարև, երիտասարդ,— ասում է խմբագրի տեղակալ Սուրենյանը, որ սրբագրատանը մենակ է, ինչ-որ էջ է կարդում, չորրորդ էջը, որոշում եմ, նայելով էջը լցրած սև վանդակներին՝ մահախոսականներ, մահազդներ, ցավակցություններ։ Բարևելու համար Սուրենյանը մի պահ նույնիսկ բարձրացնում է գլուխը, նայում ինձ. նման պատիվը ես իմ քսանօրյա բացակայությանն եմ վերագրում, սովորաբար նա ինձ բարևում է առանց աչքը էջից կտրելու,— հը, գնո՞ւմ ես մեզանից։— Նրա լեզվով դա նշանակում է՝ ընդունվեցի՞ր...

— Մնում եմ,— ասում եմ ես,— մնում եմ, մի անհանգստացեք։

— Դե որ այդպես է, երրորդ էջը գնա բեր, ուշադիր կարդա,— հետո մի անգամ էլ է բարձրացնում գլուխը և զննող, ինձ թվում է նաև կարեկցական հայացքով նայում է ինձ,— մի տխրիր, դե լավ, եկող տարի կընդունվես։— Հետո ավելացնում է, ասես խոսում է միկրոֆոնի առաջ։— Մարդ պիտի հավատա, մարդ պիտի լավատես լինի։

— Ես լավ եմ տեսնում, հիմա քսան հազար սխալ եմ բռնելու ձեր իսկ կարգացած էջում։— Սուրենյանը գրիչը դանդաղ, հիմնավոր դնում է սեղանին, հիմա նա իմ խեղճ գլխին դաստիարակչական տրակտատ է կարդալու, աստված իմ, ինչ անհաջող պահ ընտրեց։

— Իմ ասած լավատեսությունն ուրիշ է, հասկանալ է պետք։ Ջահել մարդ ես, գրագետ, աշխատանք ունես, ինձանից լավ ես հագնվում, կընդունվես եկող տարի, ինչ կա որ, ողբերգություն եք սարքում ամեն չնչին բանից։ Լավատես պիտի լինի մարդ, ահա թե ինչ։

Եթե ես հիմա ասեմ, թե տխրությանս պատճառը միայն չընդունվելը չէ, իհարկե քմծիծաղ կտա և տեղնուտեղը կավելացնի, որ պլյուս՝ հարկավոր է նաև անկեղծ լինել։

— Զեզ թվում է, եթե մեծերի ասածներին կասկածում եք, ուրեմն, արդեն խելոք եք,— Սուրենյանը նայում է ինձ համարյա տխուր աչքերով, համարյա իբրև մեծ եղբայր,— կասկածելը դեռ մեծ խելքի նշան չէ։

— Երեկ մի հոդված էի կարդում,— ասում եմ ես,— համարյա նույն բառերն էին, արտագրեցի մի երկու տող։ Կարդա՞մ...

Սուրենյանը, որ վերսկսել է էջը կարդալ, անտարբեր ասում է.

— Կարդա, կարդա։

— Մեր երիտասարդությունը սիրում է շքեղ կյանք,— կարդում եմ ես բավական պաթոսով,— նա վատ է դաստիարակված, քմծիծաղ է տալիս իր դաստիարակների ասածների վրա և չի հարգում ծերերին։ Մեր երեխաները բռնակալներ են, նրանք անգամ ոտի չեն ելնում, երբ ներս է մտնում տարեց մարդ, հակաճառում են ծնողներին։ Ավելի պարզ՝ նրանք շատ վատն են։— Ես վերջացնում եմ, մի պահ դադար տալիս և դավադիր հարցնում,— ինչպե՞ս էր...

— Ոսկի բառեր են։ Տեսնում ես, որ մենակ ես չեմ այդպես մտածում ձեր մասին։

— Իսկ գիտեք ով է ասել։ Ո՞ւմ եք կասկածում։

— Ով որ ասել է, խելոք մարդ է, և լավ է հասկացել ձեր սերնդին։

— Սոկրատն է ասել,— միանգամից խաղաքարտերս բացում եմ ես,— հույն փիլիսոփա Սոկրատեսը, որ, չեք ժխտի, ապրել է մեր թվարկությունից առաջ։

Սուրենյանը ոչ միայն ընդհատում է կարդալը, այլև ապշած նայում է ինձ։ Հիմար բան արեցի, մտածում եմ, իսկ նա հատ-հատ արտասանում է.

— Դա-տար-կա-պորտներ եք դուք, ահա թե ինչ։ Սա արդեն ես եմ ասում։

Եվ հանկարծ իմ մեջ դարթնում է դեը.

— Այ եկեք ձեզ համեմատենք Բայրոնի հետ,— ասում եմ,— այո, այո, Բայրոնի հետ։

— Ի՞նչ Բայրոն, այ տղա,— տարակուսում է Սուրենյանը։

— Ջորջ Գորդոն Բայրոնի, նա հանճարեղ բանաստեղծ էր, այդ մեկ, աքանչելի տղամարդ, որին տենչում էին Անգլիայի բոլոր գեղեցկուհիները, այդ երկու, լորդերի պալատի անդամ էր, այդ երեք։ Եվ, այդ բոլորով հանդերձ, պեսիմիստ էր, այսինքն, հուսահատ։ Իսկ դուք՝ լավատես եք։ Ինչո՞ւ... Ոչ բանաստեղծ եք, ոչ գեղեցիկ, ոչ նույնիսկ շրջսովետի դեպուտատ։

Սուրենյանին ես դեռ երբեք այդքան շփոթված-տարակուսած չեմ տեսել, նրա հայացքի մեջ դեռ երբեք իմ նկատմամբ այդքան խոր կարեկցանք ես չեմ կարդացել։

— Գնա Երրորդ էջը բեր,— ասում է նա,— և այդ քամիները գլխիցդ հանիր։

— Այ, դա ուրիշ խոսակցություն է,— ես խաղաղված վեր եմ կենում, գնում եմ երրորդ էջը բերելու, իսկ քամիները երևի մի օր իրենք իրենց դուրս կգան իմ գլխից։ Դա քամիների սովորությունն է, իրենք իրենց մտնում են, իրենք իրենց դուրս գալիս։ Եթե հիմա ինձ տեսներ Լիլիթը։ Չէ, զանգ չեմ տա, մենք ինչ ընդհանուր բան ունենք... բացի նրանից, որ երկուսս էլ չենք ընդունվել համալսարան։ Իսկ դա ժամանակավոր ընդհանուր բան է՝ եկող տարի նա կընդունվի։ Եվ կընդունվի հենց հնագիտական, եթե ուզենա։

— Բարև, Անի,— ես դա ասում եմ մեր հարևան թերթի սրբագրուհուն, որի անունն Անի է։ Չգիտեմ ինչու վերջին ամիսներին սիրում եմ նրա անունն ընդգծել. «Բարև, Անի», «Ինչպե՞ս ես, Անի», «Չերն արդեն սկսեցին տալ, Անի», «ժամը քանի՞սն է, Անի»։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԼԻԼԻԹ

Երեկ գիշեր, երբ թեյ էինք խմում, հայրիկն ասաց.

— Սուգ ու շիվանին վերջ, երեխան տասնութ տարեկան է դառնում։

Երեխան ես եմ, իմ տասնութ տարին է լրանում։ Արդեն կամաց-կամաց սկսում են հավաքվել հյուրերը։ Գրողի ծոցը կորչեր ամեն մի

ծնունդ, ավելի լավ չէ՞ր, որ մայրիկիս ասածով լիներ, ոչ մի ծնունդ էլ չանեինք։ Տեսնես ինչ է մտածում իմ մասին Կարեն 13-րդը, զանգ տվե՞ց արդյոք։ Մեր տանը հեռախոսին հիմնականում մայրիկն է պատասխանում և, եթե զանգահարողը տղա է, վերջ. «Նոր դուրս եկավ,— ասում է,— պարապում էր, դուրս եկավ մի քիչ թարմանալու»։ Երբեմն, խոսափողը դնելուց հետո, հարցնում է. «Ո՞վ էր»։ Դե իմացիր, թե ով էր՝ ինքը խոսում է, իսկ դու պիտի իմանաս, թե ում հետ էր խոսում։ Երևի Կարեն 13-րդին էլ շշպոռած կլինի, եթե նա զանգահարած լինի, եթե... Ես հիմա նստած եմ հայելու առաջ, սանրվում եմ։ Մի քանի օր առաջ միայն մայրիկս թույլ տվեց մազերս ներկել։ Երբ եկա վերջին քննությունից և ասացի, որ «շորս» եմ ստացել, մայրիկս ուրախությունից գլուխը կորցրեց. «Ինչ որ ուզես կանեմ»— ասաց։ «Թույլ տուր մազերս, աչքերս ներկեմ, շորս տասը սանտիմետր կարճացնեմ»։ «Լավ»— ասաց մայրիկս, որովհետև ինձ արդեն ընդունված էր համարում, իսկ հաջորդ վայրկյանին ես արդեն վերելակի մեջ էի։ Ինչ ուզում է լինի, թեկուզ չընդունվեմ, բայց կներկեմ մազերս։ Ճիշտն ասած՝ ինձ էլ էր թվում, որ կընդունվեմ և դրա համար ուրախությունից պարելով հասա վարսավիրանոց։ Լավ օր էր, ես հավատում էի ամեն ինչի։

— Լիլիթ,— ես լսում եմ մորս ձայնը,— Սաթենիկ հորաքույրը եկավ։

Դա նշանակում է, որ ես պիտի վազեմ դիմավորելու։ Ինչ արած, սանրը դնում եմ մի կողմ, վազում եմ նախասենյակ։ Սաթենիկ հորաքույրը այս անգամ էլ եկել է իր տալոջ հետ, վաթսուն-յոթանասուն տարեկան սմքած, մեղք պառավ է։ Նրանք արդեն վերջացրել են մայրիկի հետ պաշպշվելը և հարձակվում են իմ վրա։

— Աչքերս քոռանան,— ասում է Սաթենիկ հորաքույրը,— բան չկա, բալա ջան, հիմի ո՞վ է իրա խելքով ընդունվում։ Հորդ ձեռքն էլ քարի տակ չի, եկող տարի մի ճար կանի, լաց մի լինի։

Ես բոլորովին էլ լաց չեմ լինում, իսկ նա շպշպոցով համբուրում է թշերս և ինձ հանձնում տալոջը, որը նույնպես համբուրում է, բայց ճակատս։ Հետո նրանք գնում են հյուրասենյակ, ես՝ հայելու մոտ։ Ճիկավուն ինձ սպում է, Կարեն 13-րդն էլ նկատեց, բայց մայրիկս արգելել է աչքերս ներկել, մազերիս ներկն էլ կշնչեր-կհաներ, ասացի, որ դա անհնար է, համոզեցի, որ մեկ-երկու ամիս հետո ինքն իրեն կանցնի։ Ինչ սուգ արեց մայրիկս, երբ իմացավ, որ չեմ ընդունվելու։ Ճիշտ էր ասում Կարեն-13-րդը՝ համազգային սուգ։ Եթե մեր հեռախոսի խոսափողը թափ տաս, լիքը արցունք կլինի, որովհետև մայրիկը հիմնականում հեռախոսով էր հայտնում բոթը։ Ես դռան արանքից թաքուն նայում էի, թե նա ինչպես էր քույրերին պատմում պատահածը.

— Երեխան ոչ քուն ուներ, ոչ հաց էր ուտում, գիշեր-ցերեկ պարապեց, տասը կիլո նիհարեց,— այստեղ նա սկսում է լաց լինել, իսկ ես հազիվ եմ փոթկոցս զսպում, որովհետև եթե տասը կիլո նիհարել եմ, ուրեմն մնացել եմ 34 կիլու— Մարդ պիտի ունենաս, ամեն բան սուտ է, ինչ պարապել, ինչ բան, մի մարդ էլ որ մենք գտնեինք վերևներում, մեր երեխան էլ կընդունվեր, բայց մեր պարոնին բան հասկացնել կլինի՞, բերանս բացում եմ, թե չէ, բերանս գաջում է— «Մեր պարոնը» հայրիկն է, որը շինարար-ինժեներ է և մի անգամ, հիշում եմ, մորս վրա բարկացավ. «Դու պատ պիտի լինեիր, պատ, որ բերանդ բացեիր թե չէ, գաջեինք»— Աշխարհը մի կողմ, սա մի կողմ, երեխին անտեր-անտիրական թողեց— Այստեղ մայրիկս անհույս հեկեկում է, իսկ մյուս հեռախոսի մեջ, համոզված եմ, վաշվիշ է անում համապատասխան մի մորաքույր։ Ես չորս մորաքույր ունեմ, միասին կշռում են երեք հարյուր ութսունհինգ կիլոգրամ։

Այսպես նա կարող է խոսել ժամերով, իսկ Կարենն 13-րդը երևի չի էլ զանգահարել։ Ինչ լավ երկու ժամ էր, ես առաջին անգամ տղայի հետ սրճարան գնացի, խմեցի, ծխեցի։ Եթե նաև համալսարան ընդունված լինեի, աշխարհի համար առաջին երջանիկը կմնար երկրորդ տեղում։ Ափսո՜ս... Իսկ Կարենի հեռախոսի համարը չվերցրեցի, հիմար եմ, չէ՞, այնպես էի մտել գերիս մեջ, որ ինքս էլ էի հավատում, թե միշտ այդ երկու ժամվա աղատ-սանձաղերծ աղջիկն եմ։ Կարենը չի էլ կասկածի, թե մեր տունն ինձ համար համակենտրոնացման ճամբար է, ուրիշ ոչինչ, միայն փշալարն է պակաս։ Մի անգամ, մեր թվարկությունից առաջ էր, 9-րդ դասարանում, պատկերասրահ էի գնացել (մայրիկն ուղարկել էր քեռուս հեռագիր տալու, ես էլ օգտվեցի առիթից), ծանոթացա մի տղայի հետ, խելոք, Կարենի նման տղա էր. չէ, Կարենն ավելի լավն էր, բայց նա էլ ոչինչ։ Ես տարակուսած կանգնել էի մի նկարի առաջ, զարմանալի գույներ էին, ես չէի հասկանում, իսկ այդ տղան սկսեց երկար-խելոք բացատրել, հետո տվեց իր հեռախոսի համարը։ Ես, հիմարս, հեռախոսի համարը գրեցի հեռագրի անդորրագրի վրա, իսկ երբ տուն եկա, և թուղթը տվի մայրիկին, նկատեց.

— Ի՞նչ հեռախոս է,— հարցրեց։

— Չգիտեմ,— հետո հանկարծ բարկացա և գոռացի,— շատ լավ էլ գիտեմ, մի տղա է տվել, պիտի զանգահարեմ։

Մայրիկս մանրեց, կտոր-կտոր արեց անդորրագիրը, այդ քիչ է, գազը միացրեց և վառեց.

— Դե զանգահարիր,— ասաց,— գլխիցդ քամիները հանիր ու կար-

դա,— հետո սիրտը բարակեց,— ես քո վատը չեմ ուզում, աղջիկ ջան։

Իսկապես, երևի նա իմ վատը չի ուզում։

— Լիլիթ...

Մայրիկի ձայնն է, երևի հեքթական հյուրն է եկել, հավանորեն հայրիկի հորեղբայրը՝ Բենիամին պապիկը, գոնե թոռներից մեկնումեկին բերեր հետը։ Ես նորից հետաձգում եմ սանրվելս, դուրս եմ գալիս միջանցք։ Բենիամին պապիկն է, մենակ։

— Հայկանուշի ճնշումը բարձրացավ,— խոսում էր նա մայրիկի հետ,— շատ էր ուզում, դե նա Լիլիթին իր թոռներից չի ջոկում։— Հետո տեսավ ինձ,— ա՜, գեղեցկուհի, իսկական սինեորիտա ես դառել, տասնութ տարեկան, ես քո ժամանակ..

Բենիամին պապիկը լավ մարդ է, եթե...

— Հայկանուշի ճնշումն, ասում ես, բարձրացա՞վ,— անհանգստանում է մայրիկը,— ինչքան ու ինչքան։

— Երկու հարյուր քսան և հարյուր տասը։ Դե, մոտիկ արի, գեղեցկուհի։

Բենիամին պապիկն էլ համբուրում է ճակատս, հետո փաղաքուշ ձգում ականջս.

— Ոչինչ, քիթդ մի կախիր, եկող տարի կընդունվես, ես քո ժամանակ...

Ես նորից վազում եմ հայելու մոտ, որովհետև գիտեմ, որ իմ ժամանակ նա իրենց գյուղի հարուստի ոչխարներն է պահել, հետո մասնակցել է առաջին համաշխարհային և հետագա բոլոր պատերազմներին, հետո... Ցուցահանդեսի տղային ես այլևս չտեսա, Կարենին էլ երևի չեմ տեսնի։ Ասենք սրբագրիչ է, աշխատում է տպարանում, կգնամ, կգրտնեմ, գուցե նաև նրա համար կկարդամ բանաստեղծություններս, որ մայրիկը չի հավանում։ Թող չհավանի, բայց որ ծաղրում է, ինչու՞։ Այ, թեկուզ այս մեկը.

Իմ տխրությունը նման է լույսի,
Իսկ իմ հույսերը կեսգիշեր չունեն,
Բարեկամ եղիր գոնե դու, լուսին,
Ինձ օրոր ասա, որ մի քիչ քնեմ...

Լավ եմ գրել, չէ՞, իսկ մայրիկս մի օր գտավ այս բանաստեղծությունը, կարդաց և պայթեց.

— Դու ինչի ես տխուր, ուրեմն ես քեզ բարեկամ չեմ, պիտի լուսի՞նը բարեկամ լինի։ Ի՞նչդ է պակաս, որ տխրում ես. հայրդ գլխիդ, մայրդ

գլխիդ, պահարանը լիքը շոր, վեց զույգ կոշիկ ունես, բո ժամանակ ես... Ախր, պատկերում եմ, դու ինչի պիտի տխուր լինես։

Ես ինչ ասեի նրան, իսկապես, ինչո՞ւ եմ տխուր, շա՞տ գիտեմ...

Առհասարակ, ես ինչ որ անում եմ, մորս դուր չի գալիս, չես հասկանում, թե ինչու։ Մի անգամ հիշում եմ, ես դա կմոռանա՞մ, դպրոցում տղաներից մեկը բերել էր Շարլ Ազնավուրի մի ձայնապնակ։ Խնդրեցի, որ երկու օրով տա ինձ, բերեցի տուն ու լսում էի, ու լսում էի։ Մինչև երեկո մի հարյուր անգամ երևի լսեցի և մեկ էլ մայրիկս չդիմացավ։ Անխոս ներս մտավ սենյակ, անջատեց ռադիոլան, հանեց ձայնապնակը, և իմ ապշած աչքերի առաջ՝ կտոր-կտոր արեց։

— Ա՞յս էիր ուզում,— հարցրեց,— դե հիմա նստիր, դասերդ կարդա։

Ինչ կատարվեց ինձ հետ, ասված իմ։ Ես սկզբում լաց եղա, հետո հանկարծ հանդգնացա, մոտեցա պահարանին և, դարակները բացելով, սկսեցի հատակին նետել մորս ամանեղենը, բաժակները, գավաթները՝ չինական, չեխական, ես ինչ գիտեմ։ Մինչև սիրելի մայրիկս ուշքի կգար, ամանեղենի, բաժակների մեծ մասը փշուր-փշուր ընկած էր հատակին։

— Ա՞յս էիր ուզում,— քիչ առաջվա իր տոնով հարցրի ես, և դուրս փախա տնից. դա իմ առաջին և վերջին խռովությունն էր, որ ճնշվեց, ինչպես 1905 թվականի ապստամբությունը։ Բայց դրանից հետո ես «շիլելոքացա», ինչպես մայրիկս է կարծում, ես պարզապես օտարացա նրանից, մեր տնից, ի միջի այլոց, այս ամանեղենը մեր տանը իսկի չէր էլ օգտագործվում, պարզապես շարված էր պահարանում և շաբաթը մեկ մայրիկս սրբում էր փոշիները մաքրելու։ Ուրիշ ոչինչ։ Ահա թե ինչպիսին է իմ կյանքը, Կարեն 13-րդ։ Երևում է Կարենը շատ բան գիտի, տրխուր աչքեր ունեցող, շատ տխուր։ Ինչո՞ւ չվերցրի ապարանի համարը, թեկուզ հիմա կդանգահարեի, քանի մայրիկը հյուրերով է զբաղված։ Ես լսում եմ նաև հայրիկի ձայնը, երևի ասրթն է բերել, առավոտյան պատվիրեցին, իսկ վրան տատնութ մոմ է վառվելու։ Ուրեմն, տատնութ տարեկան եմ, ձմռան հայելու միջից ես նայում եմ ինձ։ Իսկապես, մարդ ինչպե՞ս է մեծանում, եթե օրինակ երկար, անընդհատ նայի հայելուն, կտեսնի՞ մեծանալու այդ բոպեն։ Ի՞նչ զարմանալի բոպե կլինի...

— Լիլիթ...

Ինձ են կանչում։ Գուցե հենց այս բոպեին եմ ես մեծանում, իսկ ինձ կանչում են, այ, աչքերս մի քիչ ուրիշ են, կոպերս կարմրած։ Չէ, ինչ եմ հնարում, կարմիրը նրանից է, որ առավոտյան լաց եմ եղել, որովհետև պետք չի ինձ ոչ մի ծնունդ։

— Վալիթ...

Դուռը բացվում է, և մայրիկիս տեսնում եմ մորաքույրերիս ծաղկեփնջի մեջ. հինգով կշռում են չորս հարյուր հիսուն կիլոգրամ, որովհետև մայրիկս վաթսունչորս կիլոգրամ է։ «Վալիթիս դարդն է ինձ ըսպանում,— սովորաբար ասում է նա,— թե չէ ես էսպե՞ս էի, աշխարհը ոտքիս տակ դմբդմբում էր»։ Մորաքույրերս ինձ առնում են իրենց մըսապտույտի մեջ, համբուրում են, կսմթում, խառնում մազերս, իսկ մեծ մորաքույրս սրբում է աչքերը. նրա տղան՝ Վիգենն էլ չընդունվեց, գյուղատնտեսական էր դիմել։

— Վիգենը եկե՞լ է,— հարցնում եմ ես։

— Եկել է, բա ինչ է արել, հոգդ հետ խորոված են անում։— Հետո դառնում է մորս, մյուսներին,— խեղճ եղբխեքի վիրը ոնց որ ծուռ թողին, իրենց վիրը ծուռ մնաս։

— Հա, հա,— հառաչում է մայրիկս։

— Գնամ, օգնեմ հայրիկին,— ասում եմ և՝ մորաքույրերիս շրջապատումից դուրս պրծնելով, իսկ ուզում եմ գոռալ, գոռալ, գոռալ. «Ձեմ ուզում ձեր ծնունդը, ձեր լացը, ձեր տոթիր, ձեր համբույրները...»։

Ի վերջո բոլորը ուլունքի պես շարվում են մեր ձվաձև սեղանի շուրջը։ Միայն Վիգենն է իմ տաշիքին. նա էլ հայրիկի փոխարեն մնացել է խորոված մոտ։ Ես զարմանալիորեն հանգիստ նայում եմ իմ ծնունդին եկած այս տատիկներին ու պապիկներին և, ապնիվ խոսք, սիրում եմ նրանց բոլորին՝ միասին ու առանձին-առանձին, բայց ախր ես տասնութ տարեկան եմ և, ախր, ամեն անգամ իմ ծնունդին միայն տատիկներ ու պապիկներ են...

Հայրիկս բաժակ է բարձրացնում, ինչ-որ բան է ասում, հայրիկս լավ մարդ է, ես նրա հետ կարդին ընկերություն կանեի, եթե ցերեկները մեկ-մեկ տանը մնար և մի քանի տարով էլ փոքր լիներ ինքն իրենից, բայց հիմա չեմ լսում նրա բաժակաճառը, որովհետև նույնը նա ասել է անցյալ տարի ու կասի եկող տարի, ինչ կա որ, եկող տարի կլսեմ... Հետո խոսում է Բենիամին պապիկը, հետո հանգցնում են լույսերը և փոքր մորաքույրս նեղս է բերում տորթը՝ տասնութ վառված մոմերով։ Լացս գալիս է։ Տորթը տեղավորում են սեղանին, իմ առաջ, իսկ մայրիկը քշփշում է ականջիս մեջ.

— Փչիր, հանգցրու։

Ես նայում-նայում եմ վառվող մոմերին, որոնցից յուրաքանչյուրն իմ կյանքի մի տարին է, ու չեմ ուզում փչել-հանգցնել, ուզում եմ նայել, ուզում եմ խոսել այդ մոմերի հետ, տեսնել, թե ինչպես են նրանք վառվում, վերջանում...

— Էլի՞ շշմեցիր, այ աղջիկ,— մայրիկն է,— փչիր, հանգցրու, էսքան մարդը քեզ է սպասում։

Ասես թռչող օդանավի լուսամուտից՝ ես նայում-տեսնում եմ մայրիկին, հետո կատաղությամբ փչում-հանգցնում եմ մոմերը, բոլոր տասնութ մոմերը, իմ բոլոր տասնութ տարիները...

— Խորովածը բերեք,— ասում է հայրիկը։

Այ, հիմա վերջապես ինձ կմոռանան։ Հիմա խորովածի կտորներ կջոկեն, համտես կանեն, մեկը կասի շատ եք վառել, մեկը կասի հում է, մեկը կասի մի քիչ աղ ու սոխ պիտի աներեք, որ մի գիշեր մնար, աղն ու սոխը ուտեին միսը... Պապիկներն ու տատիկները, քեռիներն ու հորեղբայրները ոգևորությամբ ծամում են խորովածը, իսկ ես աննկատ գնում եմ իմ սենյակը։ Իմանայի Կարենի հեռախոսը, կզանգահարեի, հենց հիմա կփախչեի տնից, կգնայինք «Սանասար-Բաղդասար», շամպայն կխմեինք, հարյուր գրամ շոկոլադով։ Ապուշ, ապուշ աղջիկ։ Ապուշ, ապուշ Կարեն 13-րդ։ Նա՞ ինչու է ապուշ, գուցեև զանգահարել է և հիմա ինքն է նեղացած, որովհետև տիկին մայրիկս ասել է՝ «Հենց նոր դուրս եկավ»։ Ես թևաթափ նստում եմ հայելու առաջ, լավ է, որ մայրիկը հանգցրել է լույսը, հայելու մեջ երևում է իմ ուրվագիծը միայն, իսկ Կարենին երևի երբեք այլևս չեմ տեսնի։ Ինչու եկա այս սենյակը, չըգիտեմ, հանկարծ մութը վախեցնում է ինձ, և լարովի տիկնիկի նման հնազանդ վեր եմ կենում, տոտիկ-տոտիկ վերադառնում հյուրասենյակ։ Բենիամին պապիկն է խոսում.

— Չէ, լավն էլ կա սրանց մեջ, վատն էլ։ Բայց վատը աչք է ծակում։ Հիմա էլ աղջիկներն են շալվար հագնում, գնում են փողոցով՝ չգիտես աղջի՞կ է, թե տղա։ Փչացան։ Օդորմածիկ հերս մի անգամ ինձ ճիպոտով ծեծեց և ինչ ճիշտն է ճիշտ՝ ճիշտ արեց։ Մի օր, էսօրվա պես հիշում եմ, խնամի Օհաննեսը տուն մտավ, իսկ ես, խելքի՞ մոտ բան է, նստած մնացի, վեր չթռա, աթոռ չտվի։ Հիմի սրանց ինչ...

Լսել եմ, շատ անգամ եմ լսել նույն այս պիեսը, հիմա կշարունակի Սաթենիկ մորաքույրը, անորոշ-անհասցե կգանգատվի հարսներից, ոչ մեկի անունը չի տա, իհարկե, դա անվտանգ չի, բայց եթե լավ հետևես նրա ռադիոկայանին, կհամոզվես, որ մեր օրերում լավ հարսները նույնպես վերջացել են, չկան, չեն սպասվում։

— ...Վերջն ինչ պիտի լինի, պարզ չէ,— ամփոփում է Բենիամին պապիկը և նույն պահին նկատում է ինձ,— ուրեմն, կենացդ, Լիլիթ ջան,— ուրեմն դեռ իմ կենացն է,— ի՞նչ է, բաժակ չունե՞ս,— ես մեքենաբար բաժակ եմ վերցնում, հետո մեքենաբար ձեռքս մեկնում եմ շամպայնի շշին, մայրս ակնթարթորեն սերկևիլի հյութ է լցնում բաժակս,

բայց քանի որ շամպայնի շիշն արդեն ձեռքիս է, մի քանի կաթիլ լցնում եմ թանձր, ատիպ հյութի վրա, հյութը մի քիչ փրփրում է, հետո հանդարտվում։

— Թող խմի,— անվստահ միջամտում է հայրս,— թող մի բաժակ շամպայն խմի, տասնութ տարեկան մարդ է։

Մայրս մի ոչնչացնող հայացք է գցում հորս կողմը, որին ես տեղնուտեղը համարում եմ խելք, բարի ու անպաշտպան մարդ, և սերկևիլի հյութը ձեռքս է տալիս.

— Մոտ գնա։

Ես մոտենում եմ Բենիամին պապիկին, իմ հյութը խփում եմ նրա թթի օղուն, ասում եմ շնորհակալ եմ, իսկ նա մսոտ ձեռքով երկար, հիմնավոր շոյում է մազերս, ասք ջուրը հո շուտ չե՞ն կտրի, կհասցնե՞մ լոգանալ... Իսկ Կարեն 13-ողը հավատաց, որ ես քննությանն եմ գնացել մինի հագած, այքերս, մազերս ներկած։ Ինչ միամիտ ազա էր։ Երբ սիգարետի ծուխը ներս քաշեցի, քիչ էր մնում խեղդվեի, ախր առաջին, ամենաառաջին անգամն էր, բայց շամպայնն, իրոք, լավն էր։ Ես ուզում եմ հիմա, հենց հիմա կախարդական գավազանի մի շարժումով զգաստացնել այս ուսել-խմել-քրթմնջալը և ասել նրանց. «Այ պապիկներ ու տատիկներ, այ քեռիներ ու հորաքույրներ, ախր ի՞նչ եք ուզում մեզանից։ Դժգոհում եք, որ մենք չենք սիրում սովորել, բայց ինքներդ եք ծանոթ-բարեկամ ճարում և ուղղել տալիս մեր գնահատականները, դժգոհում եք, որ սիրում ենք հագնվել, զվարճանալ, բայց ինքներդ չե՞ք մեզ համար առնում ամեն ինչ։ Դուք ասում եք, որ դժվար օրեր եք տեսել, պատերազմ, հինգ տարում մի զգեստ հագել, քաղցած փորով լամպի լույսի տակ դաս եք սովորել, իսկ մենք մի օրում հինգ զգեստ ենք փոխում, մագնիտաֆոնը կախում ենք վզներիցս ու վազում Սև ծով, մեզ հաղորդում եք, ուտեցնում, իսկ մենք... Իսկ մենք վիճում ենք ձեզ հետ, ազատության մասին ոտանավոր ենք գրում, ժամերով նայում ենք ուրճի մրուրի մեջ, կամ շեյկ պարում։ Սակայն, բացի այդ ամենից, ախր մենք լավ բաներ էլ կարող ենք անել, չէ՞։ Ինչու եք մեզ ջերմոցի ծաղիկ դարձնում, հը՞, ուրեմն, դուք էլ եք մեղավոր, պարզվում է։ Իսկ որ մենք ուրիշ երգեր ենք սիրում, ինչ կա դրա մեջ...»։

Ես այս ամենը մտածում եմ, նայելով սեղանի շուրջը բոլորածներին, որոնք դարձյալ մոռացել են իմ գոյությունը, ես, իհարկե, ոչինչ չեմ ասում իմ մտածածից և հանկարծ լիքը լցնում եմ կոնյակի բաժակը և հին հարբեցողի նման միանգամից կուլ տալիս։ Մայրս այդ տեսնում է, մի պահ պապանձվում, հայրիկն աննկատ, մայրիկից աննկատ, ինձ աչքով է անում, իսկ Սաթիկ հորաքույրն արագ-արագ խաչակնքում

է։ «Ապրեմ», լսում եմ իմ թիկունքից, Վիգենն է, շուտ եմ գալիս ու աչքով եմ անում, իսկ կոնյակը՝ տաք, այրող, իջնում, տարրալուծվում է իմ մեջ, թվում է գլգլում է երակներով։ Կարենը լիներ, Վիգենին էլ գումարած, երեքով կփախչեինք փողոց, կթափառեինք, կխմեինք մի շիշ շամպայն, երեքով մի շիշ շամպայն, ինչ կա որ, ախր, ես տասնութ տարեկան եմ, ախր ոչ մի անգամ, այլևս չի լրանա իմ տասնութ տարին...

* * *

Հյուրերը գնացել են։ Հայրիկը նստած քնել է հեռուստացույցի առաջ, ես ու մայրիկը լվանում ենք ափսեները, բաժակները, իսկ Կարեն 13-ը երևի հիմա կարդում է իրենց վաղվա թերթը։ Ինչու եմ անընդհատ հիշում Կարենին, չգիտեմ, բայց հետաքրքիր է, չէ՞, այսօր կարդալ վաղվա թերթը։

— Ինչ ես քթիդ տակ խոսում, էլի՞ ոտանավոր,— հարցնում է մայրս։

— Մտածում եմ, մայրիկ։

— Խորհածը քիչ չէ՞ր,— լռում է, հետո խոսում է ինքն իրեն,— լուսի պես տորթն էլ չկերան, շուտ գնացին։ Մտածո՞ւմ ես, մտածիր, թե մյուս տարի ինչ ես անելու։ Խայտառակ եղանք, վեցերորդ հարկի Գայանեն ընդունելի համալսարան, դու ամա՞ն լվանաս...

Մորակի տաք ջուրը լվանում-տանում է իմ առաջին մանիկյուրի վերջին հետքերը, իսկ ես, ուրեմն, մտա տասնիններս մեջ։ Մտա. կարծես թե տարիքը սենյակ է, ծեծեցի դուռը և մտա, բայց վաղն արդեն հարցնողներին պիտի ասեմ, որ տասնիներ տարեկան եմ։ Վաղը։

ԳԼՈՒԽ ՀՈՐՈՒՆԴ

ԱՆԱՀԻՏ

Ուրեմն Կարենն ընդունվել է։ Իզուր խոստացա հանդիպել։ Ինչո՞ւ անմիջապես էլ համաձայնեցի։ Սր-բա-գրիչ։ Սրբած գրիչ։ Սուրբ գրիչ, որովհետև սուրբ նշանակում է մաքուր, այստեղից էլ՝ սրբիչ, ուրեմն, սրբիչ և սուրբ բառերի արմատը նույնն է։ Ահագին քերականություն գիտեմ։ Ասենք այդ բոլորը Կարենն էր բացատրում, երևի ուզում էր փրկել իր պաշտոնի պատիվը։ Շոգ է։ Կհասցնե՞մ լողանալ։

— Մամ, տաք ջուր գալի՞ս է։

— Բայց շուտ կկտրվի,— տեղից լսում եմ մայրիկի ձայնը։

Եթե տաք ջուր չգար, չէի լողանա, եթե չլողանայի, չէի գնա կինո «Նաիրիի» մոտ։ Բայց քանի որ տաք ջուրը գալիս է... Ես մի կերպ վեր եմ կենում թախտի վրայից, ոտքերս քարշ տալիս լողարանի կողմը. կարծես տանում են գլխատելու՝ ինչպես Մարի-Ստյուարտ թագուհուն։

Ես սիրում եմ մեր լողարանի հայելին, սիրում եմ կանգնել նրա առաջ ու հանվել։ Հայելու առաջ մենակ ես, բայց թվում է մեկն էլ կա, իսկ այդ դեպքում ավելի զրգռիչ է հանվելը, թե չէ ինչ, եթե պարզապես մենակ ես։ Իսկ երբ լողանում-վերջացնում ես, հայելին լրիվ քրտնում է, և ես կամաց-կամաց սրբում եմ հայելու քրտինքը։ (Քնռիս կասեր. «Հիմա ամոթից քրտնում են միայն ապակիները»)։ Սրբում եմ և կամաց-կամաց երևում է իմ մաքուր, մերկ մարմինը. սկզբում գլուխս, հետո... Ափսոս հիմա վրայից հանելու շատ բան չկա, ուրեմն իմ և հայելու զրույցը կարճ է տևելու։ Այս վայրկյանի մտքերս լսողը ինչեր ասես չի մտածի իմ մասին, իսկ ես պարզապես զզվել եմ տղաներից։ Իսկ ինչու ուզեցի հանդիպել Կարենին։ Նրա հետ, այնուամենայնիվ, կարծես ուրիշ է, չգիտեմ, խելո՞ք է, թե խելոք է ձևանում, թե՞ իմ հանդիպած մյուս տղաներն են հիմար... Եթե միայն սեր չբացատրվի Կարենն էլ, եթե միայն չլռի՝ համբույրի պատրաստ իր շրթունքներով. ֆո՛ւ։ Ցնցուղի ջուրը սառն է, մարմինս սրսփում է, իսկ հայելու մեջ մի գեղեցիկ, տխուր աղջիկ է, այսպես ինձ ոչ ոք չի տեսել, այսպես ինձ ոչ ոք չի ճանաչում։ Սովափին բավական սևացա, դեռ չի անցել, աղջիկներին ցույց կտամ։ Ջուրն արդեն տաք է, հաճելի, թափվում է, թրջում մազերս, կոպերիս ներին իջնում է սև, բարակիկ առվակներով, ես արագ օճառ եմ քսում մազերիս, չեմ նայում հայելուն, աչքերս կմոմառան։ Տարօրինակ տղա էր Սաշան։ Նրա նման տղաներ Երևանում չկան, երևի մեր մոլորակի վրա առհասարակ քիչ են։ Սաշան եկել էր ծովափ՝ մորը հրաժեշտ տալու, գնում էր Սառուցյալ օվկիանոս, մի տարով Մոսկվայում կիսատ է թողնելու ֆիզիկայի ինստիտուտը, գնում է էսկիմոսների հետ՝ մեր որոշ ձանձրալի կինոֆիլմերի հերոսների նման, իսկ մենք չենք հավատում։ Կոլա Բերսակովը, Ապատիտ քաղաքից (եթե մի տառասխալ անենք, կլինի Ապետիտ, որը հայերեն կթարգմանվի ախորժակ. ցնցող անուն է) ինձ նամակ է գրել՝ գիժ, զարմանալի նամակ։ Նամակը մեքենագիր է, վերևում տպել է ադդանշանի պես՝ «Ամենքին, բացի մայրիկից»։ Երևի միանգամից մի քանի օրինակ է մեքենագրել, իմը երրորդ օրինակն է, բայց ոչինչ, կարդացվում է։ Մի քիչ էլ դեբասան տղա է, այդ Սաշա Գուսևը, եթե ճիշտն ասենք։ Օճառի փրփուրը գնում է ջրի հետ, և հայե-

ջու մեջ նորից եմ տեսնում ինձ, հայելին շատ թեթև է քրտնած, ես երևվում եմ մշուշի միջից, ինչպես՝ Կլոդ Մանեի նկարների կանայք։ Դա Վիգենն ասաց, իմ ամենահամառոտ սերը, կինոօպերատոր է, մի օր իմ սենյակը մտավ առանց դուռը թակելու, ես երկնագույն, թափանցիկ գիշերանոցով էի։ «Կարծես թե ամպի մեջ ես փաթաթված և ոչ թե նայլոնի»։ Ասաց նա, երևի սիրաշահեց, որ չբարկանամ։ Հետո սկսեց լափել ինձ իր աչքերով, մինչև որ դուրս արի։ Մի շաբաթ տևեց Վիգենը։ Մասնակցությամբ շոշափում եմ մարմինս՝ ձիգ, համաչափ, գեղեցիկ մարմին է։ Մի քիչ գիրանում եմ, չէ՞։ Քսաներկու տարեկան, որ նույնն է՝ ութ հազար վաթսուն օրական, արդեն փոքր չեմ, թեպետ մեծ էլ չեմ։ Մի երկու օրից դասերը կսկսվեն, երրորդ կուրս, մնաց երեք տարի։ Այսինքն, չորս տարի։ Հետո պիտի հիվանդներ բուժեմ։ Սաշայի մայրը թարգմանչուհի է, եթե Կարենը մեծ գրող դառնա, կխնդրեմ, որ նրա գործերն էլ թարգմանի։ Ինձ մոտ լաց էր լինում Սաշայի գնալու համար, իսկ իրեն՝ Սաշային ասում էր. «Ճիշտ ես անում»։ «Սիրտը կկոտրվի,— բացատրեց ինձ,— և հետո՝ մեկ է, գնալու է»։ Ինչու է գրել՝ ամենքին, բացի մայրիկից։ Երևի մորն ուրիշ, ավելի հանգիստ նամակ է գրել, որ չհուզվի։ Մեր կուրսի Գարեգինը, որին Գարգանտյուա ենք ասում, այս տարի էլ, դիտեմ, կշարունակի իր լպիրշ կատակները։ Ամռանը կտրվեց անատոմիայից, իսկ դասախոսին ասաց. «Եթե Անահիտը թույլ տա, որ իր մարմնի վրա սովորեմ, սեպտեմբերին գերազանց կստանամ»։ Իսկ դոցենտ Սարոյանը ծիծաղեց, փոխանակ սանձ դնի լպիրշի բերանին։ Ծիծաղեց և տարօրինակ նայեց իմ կողմը։ Ես տեսա, որ նա էլ իր հերթին դեմ չէր լինի իմ մարմնի վրա իր դասերը բացատրելու։ Թե՞ չափազանցում եմ։ Ջուրը հիանալի բան է, ջուրն առհասարակ, բայց ցնցուղի տակ ես ավելի լավ եմ զգում, քան ծովում։ Ծովը դիմադրում է, չեմ սիրում, երբ դիմադրում են, իսկ ցնցուղը լավ է. ուժեղացրու կամ թուլացրու, տաքացրու կամ սառեցրու՝ ամեն բան քո ձեռքին է։ Երևի ուշանում եմ։ Ոչինչ, կսպասի։ Սբբ-բա-գրիչ։ Ջարմանալի մանրամասն նամակ է գրել Սաշան, կարծես հազար տարվա ծանոթ ենք։ Կարենը հիմա կերևակայի իրեն. համալսարան է ընդունվել, գրող պիտի դառնա՝ Սելինջեր, Անատուան Սենտ-Էքզյուպերի։ Էքզյուպերիի մասին այնպիսի մտերմությամբ է խոսում, կարծես իրենց թերթի սրբագրիչներից է։ Ես առանձնապես չեմ սիրում Էքզյուպերիին. գեղեցիկ բաներ է ասում, գրում է գեղեցիկ մարդկանց մասին, իսկ կյանքն ուրիշ է։ Այ, եթե Էքզյուպերին մի քիչ էլ կյանք հասկանար, նրանից կարգին գրող կստացվեր։ Մի անգամ շատ ուշ եկա տուն, Կարենի հետ հանդիպել էի տպարանից հետո, մայրիկը բարկացավ։

— Որտե՞ղ էիր մինչև հիմա։

— Գրողի ծոցում,— ասացի։

Նա կարծեց, թե ես նեղացա իր հարցից, այնինչ ես բառացիորեն ճիշտն ասացի, եթե, իհարկե, Կարենին գրող համարենք։

Այ քեզ բան, տաք ջուրը կտրվեց, լավ է, որ օճառ չմնաց մաղերիս։ Լայն, փրչոտ սրբիչը փաթաթում եմ մարմնիս և ինձ երևակայում անտիկ աշխարհի գերեցկուհի, ասենք՝ Պերիկլեսի կամ Ներոնի սիրուհին։ Սրբիչը դանդաղ կնոջծի մարմնիս վրա պահպանված գոլ կաթիլները, լավ է։ Ձեռքիս ափով սրբում եմ հայելու քրտինքը։ Այտերս կարմրել են, աչքերս արյուն է լցվել, շատ կանգնեցի ջրի տակ։ Ինչո՞ւ են տղաներն այդպես անհամբեր ուզում մերկացնել մեզ։ Նայում եմ հայելուն. նայում եմ, նայում ու մտածում, որ եթե ես էլ տղա լինեի, նույնը կանեի։ Բայց նաև սոսկալի է՝ յուրաքանչյուր մտերիմ տղայի հայացքում տեսնել այդ ցանկությունը, դրանից հետո անհնար է դառնում ուրիշ կարգի մտերմություն, հոգնել եմ, չեմ ուզում գեղեցիկ լինել։ Կմոռանա՞մ երբևէ մեր ավարտական երեկոն։ Գիշերվա երկուսն էր, պիտի ցրվեինք, իսկ մեր ֆիզիկայի ուսուցիչն ասաց, որ ինձ տուն կուղեկցի։ Ես պաշտում էի այդ ուսուցչին, հիմա անունն էլ չեմ ուզում տալ, և շատ երջանիկ զգացի, որ հենց նա պիտի ինձ ուղեկցի։ Փողոցում թռչկոտում էի, երգում, կատակում և պատճառը մի քանի բաժակ շամպայնը չէր։ Հասանք մեր տուն, շքամուտքում մութ էր և հանկարծ ես զգացի, որ նա գրկել է ինձ. նա, մեր ֆիզիկայի ուսուցիչը՝ իմ պաշտամունքը։ Նա գրկել է, ուզում է համբուրել, և ես առաջին անգամն էր, որ զգացի տղամարդու հոտը՝ ծխախոտի, գինու, կոպիտ ուժի հոտը։

— Ի՞նչ եք անում,— մի կերպ կարողացա ասել ես,— ի՞նչ եք անում։

— Իսկ ինչո՞ւ ես դու այսքան գեղեցիկ,— կարծես հարբած, հառաչեց նա ու համբուրեց։

Ես մի կերպ դուրս պրծա նրա աքցանից, լեղապատառ ընկա տուն ու երկար-երկար լաց եղա։ Իսկ դա իմ ամենալավ գիշերը պիտի լիներ... Հայելին լրիվ մաքրվել է, ես երևում եմ ոտից-գլուխ, իսկ Կարենը մի անգամ ինձ ասաց. «Դու ոչ թե քսանմեկ տարեկան աղջիկ ես, այլ քսանմեկ տարվա պատ, կամ մեր դարի լեզվով՝ պարզապես կիսահազորդիչ։ Ես համբուրում եմ, իսկ դու նայում ես իմ միջով՝ կարծես թե ես պատուհան եմ կամ հեռադիտակ, իմ միջով ես նայում»։ Միծաղելի, խեղճ Կարեն Սենտ-Էքզյուպերի, ես քեզ ինչպես ասեի, որ զզվել եմ բոլոր տղաների հայացքներից, համբույրներից, հոգնել եմ։ Կարենը չէր հասկանում, ոչ մի տղա էլ չի հասկանա, ո՞ւմ պիտի ասեի։ Նրանց դուր է գալիս, որ համբուրում են, և վերջ։ Ինչու՞ եմ այսպես զուգվում-զար-

դարվում, ո՞ւմ համար, իսկ ժամը քանի՞սն է։ Կարենն արդեն եկած կըմինի, ուրեմն, խեղճը պիտի կես ժամ առնվազն սպասի։ Ոչինչ, սովոր է։ Այ, եթե Սաշան ինձ սիրեր։ Մի տեսեք, թե ինչ է գրում նա այդ Ավորժակ քաղաքի փայտաշեն հյուրանոցից, որ Սառուցյալ օվկիանոսի ափին է.

«Այսպես, ուրեմն, պատմական իրադարձությունը փաստ դառավ,— շարունակությունը միայն ռուսերեն է հնչում. «...апетит приехал в Апатит, чтобы излечиться от апатии». Հիանալի բառախաղ է ստացվել, այ թե ո՞վ պիտի գրող դառնար,— արդեն գնացքում ես հասկացա, որ չեմ սխալվել տեղի ընտրության հարցում. պարզվում է, որ Կոլա թերակղզում «ուղևորվել դեպի Ապատիտ» նշանակում է նույնը, ինչ մեզ մոտ՝ «ուղևորվել Կոշչենկո», որովհետև Ապատիտում մարգային հոգեբուժարանն է։ —Իսկ մեզ մոտ՝ Հայաստանում կլինի «ուղևորվել Իջևան», թեպետ հոգեբուժարանը հիմա Սևանում է։ Ջմասնագիտանա՞մ հոգեբուժության մեջ, իսկ եթե գժերն էլ են սիրահարվո՞ւմ...— «Բևեռային օր, մեծագույն հաճույք է, այ հիմա նստել-գրում եմ, սենյակում սպիտակ լույս է, իսկ ժամը մեկն է, գիշերվա։ Հիշո՞ւմ ես, Դոստոևսկու «Սպիտակ գիշերները», իսկ եթե գրան գումարենք օվկիանոսի սառած, քարացած ալիքները, անհնարին, անբնակայելի լռությունը, կարող ես մտածել, որ ողջ մոլորակի վրա մենմենակ ես»։

Կարենին ցույց եմ տալու այս նամակը։ Նախ կխանդի, հետո կհիանա Սաշայով, անպայման կհիանա։ Բայց նախ՝ կխանդի։ Այնուամենայնիվ, ինչ-որ լավ բան կա այս Կարենի մեջ, թեպետ ինձ թվում է, որ նա ինձ առանձնապես չի էլ սիրում։ Հանդիպեցինք մի քանի անգամ և տարօրինակ ձևով ոչինչ չստացվեց։ Իսկ եթե, ասենք, Սաշան ինձ սիրեր և կանչեր Սառուցյալ օվկիանոս, կգնայի՞... Նամակի մեջ Սաշան կապույտ ծաղիկներ է գրել՝ հյուսիսի մանուշակներ։

«...Հիմա պատմեմ, թե ինչ է ինձ սպասում։ Մեր ջոկատը՝ հինգ հոգի ենք։ Առաջին տպավորությունը՝ բոլորը լավն են, բախտս բերել է։ Ջոկատի շեֆը՝ Միշա Եֆրեմով, Միշան, 28 տարեկան է, երկրաբան, ուրախ, կյանքով լի տղա է, դեմ չի ամեն օր խմելուն, կիթառ է նվագում։ Կնցվածք չի ընդունում, թե շեֆ է, նրա մեջ չկա նաև «երիտասարդ գիտնականի» շինծու սոլիդություն, իր հոգու մեջ նա դեռ ուսանող է, մերոնցից... Մաշան՝ նրա կինը, նույն կուրսում են սովորել, ավելի շուտ է մեծացել, իրեն լուրջ-լուրջ է պահում։— Խնդրեմ, գնացել են ամուսիններով՝ Միշան ու Մաշան, ես էլ որ գնայի, կլինեինք Ալեքսանդրն ու Անահիտը կամ՝ Սաշան ու Անան։— Նրանց տղան՝ Պետկան, երկու տարեկան է և քանի դեռ ծնողներն այստեղ են, ինքը կմնա տա-

տիկի մոտ... Ռիտան, Սաշա 2-րդը և ես՝ միասին 55 տարեկան ենք. Ռիտան՝ 20, Սաշան 16, ես՝ 19»։

Այ թե ամուսնիներ կլինեինք Սաշայի հետ՝ ես քսանմեկ տարեկան, իսկ նա՝ 19։ Ասենք, հիմա դա շատ էլ ընդունված է։ Կգնայի՞... Նամակը գնում են մի կողմ, վերցնում եմ մատիտս ու այդ հարցն ուղղում հայելու միջից ինձ նայող գեղեցիկ, հոգնած աղջկան, որ Լեոնարդո դա Վինչիի վարպետությամբ լրացուցիչ կոպեր է նկարում։ Կգնայի՞, հայելու աղջիկը ի պատասխան նույնպես հարցնում է, իսկ մատներս թարմ, լվացված երեսիս շերտ-շերտ դանազան բաներ եմ քսում. ջնջում եմ այտերիս կարմրությունը, մանրամասն լցնում մաշկիս ծակոտիները, հաջողությամբ լրացնում հոնքերիս խտությունը, ջնջում-կորցնում եմ քիչ առաջվա ցնցուղի տակի աղջկան՝ ուսերին թափված շռայլ մազերով, առողջ, թարմ շրթունքներով։ Չէ, չէի գնա Սաշայի հետ։

«... Գնում ենք Կոլայի հարավ-արևմուտքով։ Ճահճոտ տայգա է, ամեն մի խորանարդ մետր օդի մեջ՝ առնվազն մեկ միլիարդ մոծակ։ Ասում են, որ այստեղ արջեր էլ շատ կան, մի արջ վերջերս նույնիսկ հասել է հյուրանոց, բարձրացել երկրորդ հարկ։ Ասում են, թե իբր արջը կարդացել է «Տեղ չկա» հայտարարությունը և վերադարձել է տայգա։ Կան նաև նապաստակներ, եղջերուներ, մի խոսքով, միայն թե որսորդական հրացան ունենցիր։ Հարյուրավոր լճեր կան, լիքը ձուկ»։

Կգնայի։ Եթե շատ սիրեի, եթե խենթի պես սիրեի, կգնայի։

«Մինչև Սպիտակ ծով 10—15 կիլոմետր է, այս կողմերի միակ բնակիչը ճգնավոր մի հեռագրիչ է, հայտնվել է երեք տարի առաջ, ծովափի մոտ տնակ է սարքել, ապրում է։ Փայտից արձանիկներ է սարքում, ասում են հանճարեղ արձանիկներ են, կհանդիպենք երևի։ Կզարմանաս, թե մինչև հիմա ինչու ենք հյուրանոցում, ամսի 5-ին պիտի թռչենք ճամբար, բայց ծայր առան տայգայի մեղ համար ահավոր, բնիկների համար՝ սովորական հրդեհները և բոլոր ուղղաթիռները հրդեհ են հանգցնում»։

Իսկ խենթի պես հիմա ո՞վ է սիրում, հիմա, առհասարակ, ո՞վ է սիրում։ Սենյակիս դուռն անաղմուկ բացվում է, առանց նայելու գիտեմ, Մերին է՝ քույրիկս։ Նա մոտենում է, ուշադիր, քննախույզ նայում ինձ, տասնմեկ տարեկան է, բայց ինչքան չլինի, աղջիկ է։

— Սիրու՞ն եմ, Մերի։

Նա ափիլի է լրջանում, նայում է, նայում և ասում.

— Մի հատ որ լվացվեիր, լավ կլիներ, Անահիտ։

Վայ, Մերի, վայ, ես մի ժամ է ներկվում եմ, իսկ նա թե լվացվեիր...

Գուցեեւ կգնայի, եթե Սաշան ինձանից մեծ լիներ գոնե երկու-երեք տարով և եթե նա ինձ կանչեր, հրամայաբար կանչեր. օ՜, տղաներն ինչպես չեն սովորում մեզ սիրով-հրամայելու գաղտնիքը։ Իսկ Սաշան կարծես չէր էլ տարբերում, որ ես աղջիկ եմ, այն էլ շատ գեղեցիկ, ինչ անենք, որ ինքը փոքր է երկու տարով, այնուամենայնիվ, տասնութ-տասնինը տարեկան մարդ է, տղամարդ, պիտի որ նկատեր։ Բայց ինչո՞ւ է ինձ նամակ գրել։ Զորս հոգու է գրել՝ մորը, երկու ընկերներին և ինձ, ինչու՞ է գրել։ Երևի պարզապես նրա համար, որովհետև ես խընդրեցի, իսկ ինքը խոստացավ. օ՜, գրանք, այդ գեղնակտուց ֆանատիկոսները, շատ են սիրում իրենց խոստումը կատարել։ Իսկ ես հենց այնպես խնդրեցի։ Կգնայի՞...

«Այ քեզ էլ եմ ուզում զգուշացնել, Անահիտ, եթե բան է, մամային տեսնես, նամակս ցույց չտաս։ Իսկ եթե հարցնի, թե ինչ եմ գրել, բացառապես ոչ մի խոսք՝ գաղտնիների, մանավանդ արջի հյուրանոց ժամանելու, ուղղաթիռի, տայգայի հրդեհների մասին։ Բացի այդ՝ Միշան լուրջ, փորձառու, զաժան հրամանատար է, խմում է միայն խտացրած կաթ, կամքի տեսակետից՝ չժանգոտվող պողպատ, պա՞րզ է...»։

Իհարկե պարզ է, Սաշա, ես հիմա եմ հասկանում, թե նամակիդ վերևում ինչո՞ւ ես գրել զգուշացումդ. «Ամենքին, բացի մայրիկից»։ Լավ տղա ես դու, Սաշոկ, և երևի շատ ես սիրում մայրիկիդ, սիրում ես ու խնայում նրան. երևի սիրելը՝ հենց խնայել է նշանակում։ Բայց ես ուշանում եմ, իսկ Կարենն էլ վատ տղա չէ, ինձ այդպես է թվում։ Խնայե՞մ նրան... Ես Սաշայի նամակը պայուսակս եմ խոթում և թռչում դուրս։

Ես արդեն տեսնում եմ կինո «Նաիրիի» շենքը, նայում եմ ժամացույցիս, երևանհինգ րոպե ուշացել եմ։ Հայացքով որոնում եմ Կարենին, առաջ նա սիրում էր կանգնել կինոյի դիմաց, խանութ-սրճարանի մոտ։ Չկա։ Երևի մտքին փչել է կինոյի տոմս առնել, դրա համար ասաց յոթին գամ, յոթն անց կեսի սեանս կա, երևի արդեն սկսվել է։ Կինոյի տոմսի համար, ինչպես միշտ, կոտորած է։ Ի՞նչ նկար է՝ «Ինչպես հաջողության հասնել սիրո մեջ»։ Հետաքրքիր է, ինչպե՞ս... Կինոյի բոլոր ելքերն ու մուտքերը պաշարված են տգեղ աղջիկներով և անհամ տղաներով։ Նայում եմ հերթ կանգնածներին. Կարենն այստեղ էլ չկա։ Երևի ուրախ, թեթև նկար կլինի, կարելի է նայել։

— Տո՞մս եք ուզում, ինձ մոտ մի հատ ավելորդ կա,— հարցնողը լողլող, մազերը ուսերին թափած մի տղա է, Սաշայի տարիքին։

— Ավելորդ տոմս ունեք, տվեք այ այն աղջկան,— ես ցույց եմ տալիս մուտքի մոտ խեղճ-խեղճ կանգնած մի տգեղ աղջկա, իսկ լողլողն

Բերկար ձեռքը թափ է տալիս հեռանում, երևի մի ուրիշ դուր եկած աղջկա իր «ավելորդ» տոմսն առաջարկելու։

Իսկ Կարենը չկա։ Երևի հոգնել է, մտել մի բաժակ սուրճ խմելու, աչքը փողոցին։ Սրճարանում, ինչպես միշտ, անթափանց ծուխ է։ Ծուխ անում են, հիմնականում, չծխողները։ Լուրջ ծխողները ներս են քաշում, ձևի համար ծխողներն են, որ քիմիական գործարանի նման ծուխը դուրս են տալիս։ Կարենն այստեղ էլ չէ։

— Բարև, Արամ։

— Ա՜, Անահիտ։ Սուրճ կխմե՞ս։

— Չէ, ծուխ է, ինչպես եք այստեղ կենդանի մնում։

— Ուզո՞ւմ ես դուրս գանք։

— Ես կինոյի առաջ կլինեմ, սուրճդ խմիր։

Մաքուր օդը նման է սառը ցնցուղի, իսկ քամին խառնում է աղջիկների մազերը, մեղք են։ Սեանսն արդեն սկսվել է, պատի տակ հլու-հնազանդ շարվել է հաջորդ սեանսի հերթը, իսկ հրապարակը համեմատաբար հանգստացել է։ Իսկապես, ինչպե՞ս հաջողություն հասնել սիրո մեջ։ Կարենը չկա, գուցե նա կինո «Մոսկվա» ասաց։ Դե լավ, աստված իր հետ։

— Եկա՞ր, Արամ։

— Լողանք դեպի Դավիթենց տուն։ Ինքը տանը չէ, իսկ բանալին, ահա։

— Լողանք,— ասում եմ,— մանավանդ որ քիչ առաջ էլ լողանում էի։ Բայց զգույշ, չխեղդվես։

— Այսքան մարդ կա, մեկնումեկը կփրկի։

— Այստեղ չէ, Դավիթենց տանը զգույշ կաց, իսկ խմելու բան կլինի՞։

— Հիմա կստեղծենք։

Նա մանում է դերասանական կոչվող խանութը, իսկ ես, ինձնից անկախ, նորից գնում եմ դեպի կինո «Նաիրի»։ Ես դանդաղ, մի տեսակ թեաթափ, մոտենում եմ տոմսարկղի հերթին, որ այս մի քանի բոպեի ընթացքում բավական երկարել է, և, առանց վերջը հարցնելու, կանգնում եմ մի աղջկանից հետո։ Կողքիս անմիջապես հայտնվում է երիտասարդ մի տղա։

— Վերջը դո՞ւք եք,— հարցնում է։

Ես հոգնած, տխուր նայում եմ նրան.

— Հետո ինչ, որ ես եմ։

ԱՐԹՈՒՐ

Անին ջրխկոցով ծածկեց դուռը, երկու մամ միանգամից շունչները փչեցին։ Դնա՞լ նրա ետևից, ի՞նչ կարծիքի ես, մամ։ Ես դա հարցնում եմ իմ սեղանի վրա վառվող օձաձև դեղին մոմից, լույսի սավերը շարժվում է պատի էկրանի վրա. «Չէ՛, մի գնա»։ Ես թեզ լսում եմ, մամ։ Չեմ գնում։ Մի քիչ իջեցնում եմ մագնիտաֆոնի ձայնը, նորից լցվում բազմոցին, որպես ոսկորների լիակատար ժողովածու։ Հայդնի «Հրաժեշտի սիմֆոնիան»... Ամեն անգամ, այս ժապավենը նվագելիս հանգցնում եմ լույսերը, մոմեր եմ վառում, և թվում է նվագում են մեր տանը։ Անին ոչինչ չհասկացավ, ես նրան երևի ցնդած բանաստեղծ կամ ճգնավոր երևացի։ Աստված իր հետ։ Երաժշտությունն ուր որ է կավարտվի, ուր որ է վերջին երկու ջութակահարները կհանդցնեն իրենց մոմերը և կհեռանան մթնած դահլիճի բեմից։ Տարօրինակ աղջիկ էր Անին։ Տարօրինակ են աղջիկները։ Եթե ես ասված լինեի, և լիներ աշխարհի ստեղծման վեցերորդ օրը և հարկավոր լիներ կրկին ստեղծել տղամարդ և կին, ես կանանց մի քիչ խելք կտայի, որ ճանաչեին իրենց ու տանջվեին, թե չէ, ախր, շատ են երջանիկ։ Առհասարակ, ինձ թվում է, որ մարդուն ստեղծելիս Աստված կնոջը մի կտոր հայելի է տվել, տղամարդուն՝ մի կտոր խելք և դրա համար՝ արդեն քանի հազարամյակ է, մեկն իր դեմքով է զարմացած, մյուսը՝ իր խելքով։ Երկուսն էլ՝ մեկը են։ Իմ կարծիքով։ Քիչ հետո կդանգի Մամբրեն. համաշխարհային անուն է, չէ՞, Մամբրե՛. պապի անունն է, տեսնես խեղճը որերորդ Մամբրեն է։ Մենք նրան պարզ ու համառոտ Բրե ենք ասում. եթե մի «լ» էլ գումարենք, կդառնա Բրել, բայց չենք գումարում, թող տանջվի։ Ժամը յոթին-ութին հավաքվելու ենք, մեր տանը։ Հիմա չորսն է, հարկավոր է խաչքարի կտորը պահել, մոմերը հանդցնել և էլի պահել։ Բրեն պիտի զանգահարի, թե ովքեր են գալու։ Սոնան կգա՞։ Մայրիկն այսօր երկրորդ հերթ է աշխատում, ուր որ է կդառնա շուկայից, ինձ կկերակրի ու կգնա։ Անիի հետ Սուսաննան ծանոթացրեց, ասաց կատաղի աղջիկ է։ Իսկապես որ կատաղի։ Ինչու վիրավորվեց, որ համբուրեցի, իսկ ինչու էր եկել երկու օրվա ծանոթի տուն։ Չեռ առավ Հայդնին, ասաց քունս տանում է, դա մի քիչ ուշ պետք կգար մեզ։ «Ե՞րբ, ուշ»։ «Երբ որ մարդ ու կին կլինենք, իրարից ձանձրացած կլինենք, իսկ քուններս չի տանի»։ Ես էլ համբուրեցի, իսկ նա շրխկացրեց դուռը ու անհետացավ. դե արի, հասկացիր աղջիկներին։ Հեսախոսը ծլնգում է, ես խոսափողը վերցնում եմ հինգերորդ ծլնգոցից հետո, ուրեմն Բրեն է։

— Ի՞նչ օրի ես։

— Ջախջախված, Անին շրխկացրեց դուռը ուղիղ քթիս, իսկ իմ քիթը...

— Քո քիթը գիտեմ, Անի՞ն ինչ թռչուն է։

— Անին քաղաք է, ռեստորան է, հյուրանոց է։

— Ռեստորանը գիտեմ, ի՞նչ թռչուն է։

— Գիշատիչ։

— Իմ ձեռքը պիտի ընկներ, որ դառնար ընտանի կենդանի, ուշքի արի, որովհետև ժամը ութին երեք ժամ քսաներեք րոպե է մնում։ Ասում ես Անի՞, ես էլ այդ անունով մեկին գիտեի, բայց նա գիշատիչ չէր... Ուրեմն ութին։

— Ո՞վ կլինի։

— Մերոնք և Սոֆյա Հովալևսկայան։

Ուրեմն Սոնան... Ուրեմն, կգա...

— Ինչ ասկվեցիր։ Վահագնը կիթառ է բերելու, կգժվենք։ Տանը հեղուկ կա՞։

— Նավթ, երկու բալոն։

— Լավ, մի շիշ ես մեր տնից կթողնեմ։ Քիչ չի՞...

Ուրեմն Սոնան էլ կգա, իսկ երեկ հարցրի, ասաց, թե «հազիվ»։

— Քեզ ի՞նչ պատահեց, խլացա՞ր։

— Չէ, ընդհակառակն։

Իսկապես որ ընդհակառակն, որովհետև պարզ-պարզ լսեցի Սոնայի ձայնը. «...Հազիվ թե գամ»։

— Դե լավ, մադամը ե՞րբ է գնում աշխատանքի, որը, ինչպես գիտես, պատվի, փառքի և հերոսության գործ է...

Մադամ մորս է ասում, ես մի վայրկյան բարկանում եմ, մատներս սեղմում են խոսափողը, բայց...

— Յոթին, յոթին անց կես։

Մամբրեն դնում է խոսափողը, նա սեփական մորը, որ գյուղում է ապրում, կարծեմ մադամ Բովարի է ասում, որովհետև անունը Բավական է, ինչ անուններ են, չէ՞, Բավական, Մամբրե... Ես շարունակում եմ թափված մնալ բազմոցին՝ որպես ոսկորների լիակատար ժողովածու, որպես մարդու պահեստամասերի լրիվ կոմպլեկտ։ Վերջին քննությունն էլ մի կերպ տվեցի և կարող եմ հաշվել, որ երկրորդ կուրս եմ, թեպետ մեկ է, ինձանից երկրարան չի ստացվի։ Էխ, մայրիկ, դու ուզեցիր, որ ես ընտրեմ հարս մասնագիտությունը, ես էլ ընտրեցի, կավարտեմ, կգնամ սարեր, ես էլ կքշփոթեմ այս հողի տանջահար մարմինը, որի վրա չծակած տեղ համարյա չկա, ինչ-որ բան կփնտրեմ՝ նավթ, ոսկի, ուրան, մեկ է,

Թե ինչ, որովհետև ոչինչ չեմ գտնի, բայց կանոնավոր կստանամ աշխատավարձս, կարգին խմել և շախմատ խաղալ կսովորեմ, ուրիշ ինչ պիտի անեմ լեռների բազմասերիանոց գիշերներին... Այնուամենայնիվ, վեր կենալ հարկավոր է, որովհետև շուտով կգան։ Նախ կգա մայրիկը, հոգնած կլինի, ուտելիք սարքեմ, գոնե փոքր-ինչ հանգստանա՝ գործի գնալուց առաջ։

Համալսարան ընդունվելուց առաջ, երբ շինարարությունում էի աշխատում, մայրիկն ինձ հետ վարվում էր իբրև հավասարը՝ հավասարի, նույնիսկ ավելին՝ իբրև տան գլխավորի, տղամարդու։ Բայց երբ ընդունվեցի, նորից դարձա երեխա, նա չի ուզում, որ ես որևէ բան անեմ։ «Դու սովորիր, միայն սովորիր,— ասում է,— հայրդ կնեղանա, նա քեզ ուսերին մեծացրեց»։ Հորս մասին նա երբեք անցյալ ժամանակով չի խոսում և ինձ էլ մեկ-մեկ թվում է, թե հայրս կա, մի օր կվերադառնա իր լեռներից, կամ ես կգնամ իր լեռները, իրար կտեսնենք... Մեր բոլոր սենյակներում, նույնիսկ խոհանոցում հորս նկարներն են, ամեն տեղ չսափրված է, երիտասարդ։ Ես վեր եմ կենում բազմոցից և աչքի տակով նայում եմ հորս։ Իսկապես հորս եմ նայում և ոչ թե նրա նկարին։ Հորս թաղմանը եկել էր մեր ողջ դասարանը, հիշում եմ, ես հինգերորդում էի, ամենքի համար հայրս հերոս էր, նա մնացել էր փլվածքի տակ, ուզեցել էր փրկել ընկերոջը, չէր կարողացել, մնացել էին երկուսով։ Մի ամիս անց մեր դասատուն շարադրություն հանձնարարեց՝ «Խաղաղ օրերին հնարավո՞ր է հերոսություն», մեր երեխաների մեծ մասը գրել էր հորս մասին, մայրս հետո խմացավ, խնդրեց այդ բոլոր շարադրությունները և հիմա մեր տանն են։ Մենք հաճախ ենք միասին կարդում իմ ընկերների միամիտ, ազնիվ տողերը։ Ի՞նչ եղան ընկերներս։ Բոլորին կորցրի...

— Արթո՞ւր։

Մայրիկն է, ես վազում եմ նախասենյակ, նրա ձեռքից խլում ծանր պայուսակը· գոնե մինչև խոհանոց տանեմ, թեպետ մինչև խոհանոց յոթ-ութ քայլ է։ Մայրիկը հոգնած նստում է միջանցքի աթոռին։

— Վանքի հոտ է գալիս... էլի՞ մոմ ես վառել։ Խնկի հոտն ավելի թունդ է, հայրդ ասում է, որ եթե խունկը շատ շնչես, կհարբես։

Ես ծանր, պայթող պայուսակը տանում եմ խոհանոց, հանում-մանրամասնորեն սեղանին եմ շարում պարունակությունը՝ մրգեր, միս, կանաչի, լավաշ։

— Ամբողջ շուկան փաթաթել ես, բերել։

— Կուտեք, իսկ ես հիմա կգամ։

Որտեղից գիտի, որ գալու են. ես մատս դնում եմ գաղտփարիս (Մամբրեի բառն է), ու մտարերում, որ առավոտյան խոսքի մեջ ասացի,

թե տղաները երևի հավաքվեն։ Ասացի՝ երևի։ Հիանալի ծիրաներ են, ուտում եմ, կորիզը ջարդում ատամով։ Դառը կորիզ է։

Մայրիկը հագնված այն է դուրս է ուզում գալ, երբ դռան զանգը տալիս են։ Ինքն էլ հենց դուռը բաց է անում։

— Օ, բարև, մադամ։

Մամբրեն է, ես տեսնում եմ նաև Հասմիկի «էմալե պրոֆիլը», (ինչոր բանաստեղծ է ասել, կարծեմ Զարենցը, իհարկե ոչ Հասմիկի մասին)։ Ադրինեի կշկշոցն ու Վահագնի կիթառի նվագը հնչում են միաժամանակ։ Վահագնը կարծես նվագակցում է նրա կշկշոցին։ Սոնան չի երևում։

— Անցեք, անցեք,— ճանապարհ է տալիս մայրիկը,— ես ձեզ չեմ խանգարի, գնում եմ։

Մերոնք ժխորով լցվում են տուն, մայրիկը բարի ժպիտով նայում է նրանց, բարի ժպիտով ճիշտ չասացի՝ բարի տխրությամբ։ Հասմիկն ու Ադրինեն մոտենում են մայրիկին, Ադրինեն, գուցե ի՞նձ է թվում, մտադրվում է համբուրել մայրիկին, բայց վերջին պահին կարծես թե փոշմանում է և թաշկինակով արագ-արագ սրբում շրթունքները։ Իսկ ու՞ր է Սոնան։

— Դուք, մադամ, իսկապե՞ս ևք գնում,— հարցնում է Մամբրեն,— թե՞ ասացիք, որ ուրախությունից մենք ինֆարկտ ստանանք, մադամ։

— Իսկապես եմ գնում,— կրկնում է մայրիկը և ես տեսնում եմ, որ նրա աչքերի տխրությունը խտանում է, դառնում է շատ մուգ, շատ անթափանց, հետո նա դիմում է ինձ,— սառնարանում տոլմա կա, երկու շիշ գինի, քաղցած չմնաք։ Սուրճն էլ բովել-աղացել եմ։

Մայրիկը գնում է, մերոնք իրենց լիակատար ազատություն են տալիս։

— Քո նախնիներն, Արքուր, հիանալի են, ի տարբերություն, օրինակ, իմ տատի։— Մամբրեն է մտել իր գերի մեջ։— Ասենք, ով չգիտի տատիս։ Մի երկու օր առաջ էր, Հասմիկին տատիս տուն էի տարել, հարմար էր։ Բայց ինչ, սենյակի որ անկյունը խցկվեցինք, տատս եկավ-նստեց մեր կողքին, հարցեր էր տալիս, իր կյանքն էր պատմում, գիշերվա տասներկուսին նոր-նոր հասել էր 1913 թվականի փետրվար...

Հասմիկը ծիծաղում է՝ Ադրինեից մի քիչ տարբեր. ամենամեղմ ծիծաղի ժամանակ էլ նա զսպում է բերանը, նրա բերանը, ինչ կարող ես անել, մի քիչ լայն է ձևել դերձակը, տվյալ դեպքում՝ հայրիկն ու մայրիկը, վտանգավոր է դա մոռանալը, իսկ Ադրինեն հիանալի ատամներ ունի, միկրոբերան, ինչպես ասում է Մամբրեն, և ուրեմն կարող է կկըշալ ազատորեն։ Դա հերիք է, որպեսզի Ադրինեն և Հասմիկը իրար չսիրեն, դա՝ այսինքն բերանների տարբերությունը։

— Սոֆյա Կոմալևսկայան մի հինգ-տասը բոպեից կգա,— հայտարարում է Մամբրեն, և մենք խուժում ենք սենյակ։

Ուրեմն, կգա։ Մի քանի բոպեում աղջիկները սառնարանի եղածչեղածը փոխադրում են սեղանին, Մամբրեն իր անբաժան պայուսակից հանում է կոնյակը, ես բերում եմ երկու շիշ «Շուշան» գինի և գինիները ձեռքիս էլ դիմավորում եմ Սոնային։

— Ուշացե՞լ եմ, Արթուր,— հարցնում է նա մի տեսակ քնքուշ վախով,— հո չե՞ք սպասել։

Ես ուզում եմ ասել, որ իհարկե ուշացել ես, Սոնա, որ ամեն վայրկյան ականջս դռան զանգին էր, Սոնա, բայց անտարբեր, գործնական նետում եմ.

— Չէ, ներս գնա։

Մենք արդեն մի քիչ խմել ենք, Վահագնը կիթառ է նվագում, Մամբրեն փռվել է հատակի գորգին, Հասմիկի ծնկների մոտ, նրանք երևի շուտով կնշանվեն, Հասմիկն է այդպես ասում, Ադրինեն փորձում է սեղավորվել Վահագնի բազկաթոռին, բայց այնպես, որ նվագը չխանգարի։ Սոնան նստել է առանձին, թախտի վրա, թիկնել է բարձերին, ես նկատում եմ, որ Մամբրեն գորգի վրա փռված, Հասմիկին թիկնած, լսիրշ, մանրամասն նայում է Սոնայի բաց ծնկներին։ Տհաճ զրգիռ է առաջացնում իմ մեջ այդ «բնանկարը», աչքերիս դեմ թվում է մշուշ է խտանում և անպասելի վեր եմ թռչում.

— Զպարե՞նք։

Վահագնը ակնթարթորեն շպրտում է կիթառը, միացնում է մագնիտաֆոնը, Մամբրեն հանդիսավոր-դանդաղ, մեկիկ-մեկիկ հանգցնում է լույսերը· մնում է միայն մագնիտաֆոնի կանաչ աչքը և փողոցի սպիտակ նեոնը, որ ներփանցում է մեր բաց լուսամուտներից։ Ոչ ոք չգիտե, թե ինչ ենք պարում, իսկ ես պարում եմ Սոնայի հետ։ Ես հանկարծ կորցնում եմ իմ բոլոր զգայությունները, բացի սարսուռից։ Ես բռնել եմ նրա բարալիկ մատները, նրա մաղերը խուտուտ են տալիս իմ կզակը, մարմինս փշաքաղվում է նրա հպումից, ես հանկարծ ուզում եմ նրա ականջին շշնջալ նուրբ ու գերադրական ածականներ, ուզում եմ չզոթածածված ու փխրուն բառեր հայտնագործել, որոնք ձյունի փաթիլի պես կհալվեն, եթե փորձես դիպչել տաք մատներով... Կիսամութի մեջ ես նշմարում եմ նրա երկար, սև թարթիչները, մոմի զույնի այտերը։

— Ի՞նչ ես մտածում,— հարցնում եմ կամաց։

— Ոչինչ,— նա ցրված նայում է ինձ,— զատարկ բան է։— Ես չեմ սենսում նրա աչքերը։— Ինչ պիտի մտածեմ։

Մենք նստում ենք բազմոցին, որի վրա առավոտյան, ինչո՞ւ եմ հան-

կարծ մտաբերում, նստած էր Անին։ Հանկարծ նրանց երկուսի դեմքերը խառնվում են իրար, ու ես զգում եմ, որ շատ եմ մոտեցել Սոնային, հետո թվում է, որ սենյակում մեն-մենակ ենք՝ մթության մեջ, մագնիտաֆոնի ձայնի մեջ։

— Եթե շատ ես ուզում, համբուրիր,— լսում եմ Սոնայի ձայնը,— ինչ ես խելագարի նման նայում ինձ։

Ես համբուրում եմ ջղաձգորեն, կատաղի. ես չգիտեմ՝ ում եմ համբուրում՝ նրա՞ն, Անիին, մեկ ուրիշի, չգիտեմ... նա ոչ դիմադրում է, ոչ էլ արձագանքում իմ համբույրին։ Ես հիմա էլ, մեր բառարանների խորունկ ջրհորներից, նրա համար կուզենայի սուղվել-հանել ամենամիամիտ բառերը, կուզենայի մատներով խաղալ նրա կրակագույն մազերի հետ, չվառե՞մ մատներս, կուզենայի երգել նրա համար մեղմ ու փխրուն մի երգ, բայց այդ ամենի փոխարեն՝ շարունակում եմ համբուրել նրան կապիտ ու շար, իբրև թե դա իմ հազար տարվա արհեստն է, իբր թե ես սուլթան եմ, և նա էլ՝ հարեմ բերված հերթական հարճն է, ուրիշ ոչինչ։

— Բավական է, դու խմած ես,— հանկարծ հրում է նա ինձ։

Նա վառում է լուսամփոփը, սենյակի զանազան անկյուններից դուրս են խարխափում մյուսները, և մենք շարունակում ենք պարել։ Հիմա ինձ հետ Ադրինեն է, նա նույնպես շատ մոտիկ է ինձ, և, եթե ուզենամ, կարող եմ նրան էլ համբուրել, ինչու չէ, համբուրում եմ։ Սոնան պարում է Մամբրեի հետ, Հասմիկը՝ վահագնի։ Շուտով սրանք կգնան, ես նորից կվառեմ իմ մոմերը, կմիացնեմ Հայդն ու դուցե լաց կլինեմ։ Հանկարծ ես հասկանում եմ, որ մենք երևի այնքան էլ լկտի չենք, պարզապես ուզում ենք լկտի երևալ, ինչո՞ւ։ Հանկարծ ես զգում եմ, որ մենք ամենքս ամաչում ենք մեր զգացմունքներից, ինչպես հիվանդությունից, որ վարակիչ է։ Այդ ե՞րբ էր, ներկայացում էինք գնացել։ Սովորական, սենտիմենտալ դրամա էր, ամերիկյան հեղինակի գործ, զավակները լքում են ծեր ծնողներին։ Ինչ-որ մի տեսարան էր և հանկարծ զգացի, որ արտասվում եմ, ի՞նչ կա որ, ի՞նչ կա տարօրինակ։ Բայց կողքիս նստած մեկը, չեմ էլ հիշում ով էր, քառասունհինգ-հիսուն տարեկան մեկը, զարմանքով քմծիծաղ տվեց. «Հետո էլ իրենց ժամանակակից սերունդ են համարում, թատրոնում լաց է լինում»։ Իսկ ինչ է, եթե լաց եմ լինում, ուրեմն փոխադրվեմ 17-րդ դար, ինչ է, ամո՞թ է լաց լինելը։ Չգիտեմ։ Գլխիս մեջ, դանդիս քառակուսում դժժում են զանազան հիմարություններ, իսկ պատասխաններ չկան, պատասխանները երևի ապրում են ուրիշ մի քաղաքում, որ չկա աշխարհի քարտեզի վրա։

Ես փորձում եմ համբուրել Ադրինեին, զգում եմ, որ նրան դուր է գալիս կամ ձևացնում է, թե դուր է գալիս։ Ինչո՞ւ է դա այդպես, ինչո՞ւ

ենք մենք ուզում լկտի երևալ, ինչո՞ւ ենք վախենում սիրելուց, տառապանքից, մի՞թե մենք իսկապես փչացած սերունդ ենք, ինչպես ասում են մեր մասին տրամվայում, սեղանների շուրջ, գրքերում։ Ես Ադրինեին զգույշ հեռացնում եմ ինձնից, նա զարմանքով բացում է իր միկրոբերանը, կարծես ուզում է մի բան հարցնել, հետո ինքն էլ է ձգվում լարի պես, նայում հետախույզ Կլոսի ռենտգենյան աչքերով։ Մենք ոչինչ չենք ասում իրար, պարում ենք փաղաքուշ մի տանգո, մեր արանքում առնվազն տասը հազար կիլոմետր տարածություն կա, իսկ ես հանկարծ քրտնում եմ։ Ինչո՞ւ չմնաց Անին։ Բայց նա կլիներ յոթերորդ ավելորդը։ Ես Անիի հետ կպարեի, Սոնան կխանգե՞ր...

Մենք դարձյալ շարվել ենք սեղանի մեդալիոնի շուրջբոլորը՝ իրրև էժանագին քարեր և Վահագնը նոզկալի մի անեկդոտ է պատմում։ Մեր ունեցած երեք շշերը դատարկ են, բայց բաժակներում խմելու քիչ-միչ գինի կա։

— Տխուր ես, ինչո՞ւ,— այդ Ադրինեն է հարցնում Սոնային։ Նրանք նստած են կողք-կողքի, Սոնան փորձում է ծխել, աչքերը կիսափակ են, եթե բացի, նայելու է ինձ։

— Չէ, ոչինչ,— ծխի միջից պատասխանում է Սոնան,— երևի շատ խմեցի։ Պետք չէր։ Հետո կասեմ...

— Գիտեք, թե ինչ է պատահել,— հանդիսավոր միջամտում է Մամբրեն,— Սոֆյա Կովալևսկայան մտադիր է դավաճանել քիմիային։

— Այսինքն,— հարցնում եմ ես։

— Չի ուզում սովորել։ Թողնում է համալսարանը։

Սոնան սովորում է քիմիական ֆակուլտետում, բայց մենք նրան այդ անուն աղգանունով ենք կնքել, որովհետև ուրիշ կին-գիտնականի անուն չգտանք, որ Ս-ով սկսվեր։

— Իսկապե՞ս,— հարցնում եմ,— իսկապե՞ս, Սոնա։

— Քիմիային դավաճանել չի կարելի,— նույն հանդիսավոր-խմածությամբ շարունակում է Մամբրեն,— դա նշանակում է ճեղքել ատոմի միջուկը, կարող է պայթյուն առաջանալ, երրորդ համաշխարհային պատերազմ։

— Միջուկի ճեղքումը ֆիզիկա է,— հանգիստ, ծաղրական նետում է Սոնան,— իսկ առհասարակ ուրիշ նյութ գտեք ճեղքելու։

— Քիմիայի՞ն։ Քիմիային դավաճանել կարելի է,— միջամտում է Վահագնը,— կարելի է դավաճանել նաև սիրած տղային, կնոջը, տված երդումին։ Այ, Հայրենիքին չի կարելի դավաճանել, այդ ուրիշ։

Վահագնը բութ-երջանիկ նայում է մեզ. նա գոհ է հավանորեն իր վերջին բառախաղից, իսկ ես ջղաձգվում եմ։ Պատից նայում է

հայրս։ Նա լսում է մեզ։ Հանկարծ Սոնան սեղանից վերցնում է իր կիսատ բաժակը, ուղում է խմե՞լ, ոչ, անսպասելիորեն նա գինին շփում է Վահագնի երեսին։ Վահագնի ծիծաղն աղավաղվում է, ծամածռվում, իսկ Մամբրեն ոտքի է կանգնում, ինչպես ժողովրդական դատավորը վճիռ կարդալիս։

— Եղա՞վ...

Սոնան հանգիստ է, հետո նա հատիկ-հատիկ արտասանում է մի քանի բառ.

— Կան բաներ, որ ենթակա չեն կատակի։— Հետո խմում է բաժակի մնացած գինին։— Պարենք։

— Այ դա ուրիշ,— դրությունից ելք է գտնում Մամբրեն,— ինձ հետ։

— Ինչ կա որ, թեկուզ քեզ հետ։

Պարում ենք։ Մի՞թե ես չեմ ճանաչում Սոնային։ Այսինքն, մի՞թե մենք ճանաչում ենք իրար։ Ես պարում եմ Հասմիկի հետ, որ ամբողջ երեկոյին համարյա ոչ մի բառ չի արտասանել, հիմա էլ լուռ է, սոկված։ Ի՞նչ գիտեմ ես այս մարդկանց մասին, որոնց հետ անցնում են իմ վերջին երեք-չորս ամիսները։ Մամբրեն սովորում է մեր ֆակուլտետում, բոլոր կիսամյակներին մազից կախված է մնում, բայց հասել է երրորդ կուրս, ուրեմն հատ մազից է կախված, կդիմանա ևս երկու տարի, մազը կդիմանա։ Ծիծաղում է երկրաբանության վրա, նաև բժշկության վրա, նաև գրականության վրա, նաև մնացած ամեն բանի վրա։ Սոնան քիմիականում է, մի անգամ ասաց, որ շատ կուզենար մանկապարտեզում աշխատել, ինձ թվաց՝ կատակ է անում։ Վահագնը նվագում է «Ծովինար» ռեստորանում, չորս անգամ փորձել է ընդունվել, ամեն տարի՝ տարբեր ֆակուլտետ, չորս անգամն էլ ձախողվել է։ «Սովորել չեղավ, որոշեցի փչել»,— ասում է նա, որովհետև ռեստորանում սաքսոֆոն է նվագում։ Ադրինեն ինչ-որ մինիստրությունում է աշխատում, քարտուղարուհի, Հասմիկը սովորում է կիբեռնետիկայի ֆակուլտետում, հայրը ծաղկավաճառ է, ինչպե՞ս է մտքովն անցել հենց այդտեղ ուղարկել աղջկան, չգիտեմ։ Մի խոսքով՝ բոլորս սովորում ենք։ Վահագնը և Ադրինեն չեն սովորում, բայց մեկ է, կսովորեն։ Լավ չէ՞ր լինի, որ մեր ծնողականների հետ հենց դիպլոմներ տային։ Ում ծնողն ինչ ուզում է։ Չէ՞ որ, ի վերջո, այդպես է լինում։ Ծնողականից մեզ տուն կբերեն իբրև բժիշկ կամ ինժեներ, ճարտարապետ, գրող, իսկ ով ուզում է, թող հետո սովորի իսկականից։ Թե չէ ինչ է ստացվում՝ Սոնան ուզում է թողնել համալսարանը, ես չգիտեմ ինչ եմ անելու ավարտելուց հետո, նույնը

Մամբրեն, Հասմիկից չդիտեմ ինչ կիբեռնետիկ է դուրս գալու իր չորս միլիգրամ ուղեղով... Հիմար մտքեր են, իհարկե։

— Ի՞նչ ես մտածում, Արթուր,— հարցնում է Հասմիկը։ Նա ասում է այս երեկոյի իր առաջին նախադասությունը։ Ես նայում եմ նրան, և, որովհետև բերանը փակ է, այդպես նա ինձ համարյա գեղեցկուհի է թվում։ Մյուսները նստել են, միայն մենք ենք պարում։ Ես հանկարծ տեսնում եմ Սոնայի ուշադիր, լիքը հայացքը։

— Մեր մասին եմ մտածում,— զարմանքն իմ մեջ զարթնում է ավելի ուշ, որովհետև ես բարձրաձայն չդիտի ասեի, թե ինչ եմ մտածում իսկապես,— ո՞վ ենք, ի վերջո, մենք, ի՞նչ ենք ուզում իրարից, կյանքից, այս աշխարհից։

Հասմիկը ծիծաղում է, նա հանկարծ բաց է թողնում թևս և հիստերիկ ծղրտում։

— Արթուրը խելագարվել է, նա հիմա խոսեց այնպես, ինչպես պատմության մեր դասախոսը։ Ասում է, ո՞վ ենք մենք, ի՞նչ ենք ուզում իրարից, այս աշխարհից...

Բոլորը զվարթ ծիծաղում են, Մամբրեն նայում է ժամացույցին։

— Գոլորշիանալու ժամանակն է։ Վահագն, բեր։

Վահագնը հնագանդ վեր է կենում, դուրս գալիս նախասենյակ, հետո վերադառնում, մի փաթեթ ձեռքին։ Տալիս է Մամբրեին, սա բացում է, ցույց տալիս, բիբլիոնեերից մեկի՝ Ջոն Լեննոնի դունավոր նկարն է, սավառաթղթին կպցրած, ապակու մեջ։ Ես շատ եմ սիրում Ջոնին, տղաները գիտեն։ Նկարում նա կիթառով է, ժպտուն, իսկ նա իսկապե՞ս ուրախ է։

— Կպցրու պատին,— ասում է Վահագնը,— ես եմ ճարել։

— Հիմա,— Մամբրեն ուշադիր նայում է պատերին, հետո գնում է դեպի հորս նկարը։ Չէ, ես չեմ ուզի, եթե հորս կողքին կպցնի, թող մի քիչ հեռու, ուրիշ շատ պատեր կան բնակարանում։ Բայց ես հանկարծ գլխի եմ ընկնում, որ Մամբրեն ուզում է պատից իջեցնել հորս նկարը։— Ոչինչ, ինքն իրեն փնթփնթում է նա, բոլոր սենյակներում կա։ Այստեղ ամենահարմարն է, նոր մեկ էլ չեմ կպցնի, պատն ափսոս է։

Ես հանկարծ տեսնում եմ Մամբրեի ձեռքը, որ մեկնվում է հորս աչքերին, ես Մամբրեի մատների արանքից դեռ նշմարում եմ հորս ժպիտը և հանկարծ ցատկում եմ կանգնած տեղից։

— Չհամարձակվես,— ճչում եմ ես,— չհամարձակվես, անասուն։ Չհամարձակվես։

Բոլորը խառնվում են իրար, Ջոն Լեննոնի նկարը վայր է ընկնում

Մամբրեի ձեռքից, ապակին ջարդվում է, իսկ ես ոտներով տրորում եմ, փշրում ապակին, նկարը ու, ինձ թվում է, լաց եմ լինում...

Սոնայի կրունկների կակոցը լռեց բացվող ու փակվող դռան ազմուկի հետ։ Ես նրան ճանապարհեցի, ինչպես սովորաբար, և հիմա, արդեն ապատորեն նրա հետ եմ։ Ես հիմա մի քանի անգամ կպատմեմ նրանց պատուհանի տակ, մտքումս նրան կասեմ աշխարհի ամենամիամիա բառերը, հետո հոգնած-չախչախված կհասնեմ տուն։ Եթե մայրիկը դեռ եկած չլինի, կմիացնեմ Հայդնի ժապավենը, կվառեմ երկու մոմ ու կպատկեմ բազմոցին։ Ջորրոբդ հարկում մթնում է վերջին պատուհանը՝ Սոնան քնեց։ Քնե՞ց...

ԳԼՈՒԽՈ-ՎԵՅԵՐՈՐԴ

ՀԱՍՄԻԿ-ՄԱՄԲՐԵ

— Ուրով գնանք։ Գլուխս ցավում է. հետո էլ, որ ուշ հասնենք տուն։ Արթուրն ինձ այսօր պարզապես գյուտ թվաց։

— Եմել էր։

— Ուրեք շիշ բան էր եղածը։ Անհասկանալի տղա է, բարդ ստորագասական նախադասություն։

— Հասկանալին միայն փողոցային երթևեկության կանոններն են։ Հիմար բան ասացի՝ գրանք էլ հասկանալի են միայն միլիցիային և վարորդներին։ Աշխարհում ոչինչ չկա հասկանալի։ Եվ առհասարակ... Ի՞նչ ասաց հայրիկ-պարոնը։

— Պապա՞։ Լմլմացրեց-մլմլացրեց։ Հետո բարկացավ։ Գուցե պետք չէ, հա՞։

— Տես է նորքեցի ծաղկավաճառ Գորսեկին։ Ախր գլուխս խաղալիքի պես լարում-լարում եմ, չեմ հասկանում. ի՞նչ պետք է անի նա իր փողերը։ Հո փողով պրեֆերանս չի՞ խաղում...

— Գժվել ես, ինչ է։

— Դու իր օրինակա՞ն աղջիկն ես, թե մորդ առաջին ամուսնուց ես։

— Հիմար բաներ ես ասում։

— Եվ միակ աղջիկն ես, չէ՞։ Թե՞ ապօրինի երեխաներ էլ ունի։ Կունենա։

— Պետք չէ՝ Մամբրե, ես կհամոզեմ նրան, պետք չէ՝ Դու չափն անցնում ես...

— Իսկ ինչքա՞ն է չափը՝ Ուրիշները մեքենա ունեն, ինչո՞ւ մենք չունենանք՝

— Թող, խնդրում եմ՝ Դու պատասխանեցի՞ր Պարույրին՝

— Չեմ պատասխանել, չգիտեմ՝ Ես արդեն ձանձրացել եմ նրա հոտավետ նամակներից՝ Ամեն շաբաթ գրում է՝ Այ քեզ բանակ. կարծես թե ծերանոց է գնացել, որտեղ մինչև մահ՝ ազատ ժամանակ է, գրիր ու գրիր...

— Այդպես մի խոսիր,— պետք է մի բան մտածել՝ Ես այսօր կգրեմ նրան՝

— Գրիր՝ Ի՞նչ կգրես՝

— Ամբողջ ճշմարտությունը՝

(«... Նորից բարև, Հասմիկ,

Նամակս երեկ կիսատ մնաց, որովհետև վարժական տագնապ հայտարարեցին՝ Իբր թե սկսվել է պատերազմը՝ Գե հասկանալի է, մենք գիտենք, որ ոչ մի պատերազմ էլ չի սկսվել, բայց մի տեսակ լարվում ես, նյարդերդ ձգվում են կախաղանի պարանի պես՝ Իսկ նույն ժամին, Երևանում, դուք երևի սառը շամպայն եք խմում, պաղպաղակ ուտում, կամ գնացել եք Սևան՝ Գիտե՞ս ինչ հիշեցի, որ մի անգամ գնացել էինք Սևան, լողացանք, քո ճակատը, այտերդ այրվեցին, միայն աչքերիդ մոտ մի բարակ շերտ էր մնացել սպիտակ, սև ակնոցը փրկեց՝ Իսկ մորդ խարել էիր, թե ընկերուհիդ տանը, Նորքում, պարապում ենք՝ Մայրդ կարծեմ ասել էր. «Երևում է ընկերուհիդ շատ արևոտ աղջիկ է»՝ Հիշո՞ւմ ես, ինչքան ծիծաղեցինք՝ Շուտով կլրանա մի տարի, որ բանակում եմ, արդեն անհամբեր եմ, գիտես՝ Գիտե՞ս, որ... Ինչու են այդքան կարճ քո նամակները, կարծես հետախույզի ծածկագրեր են, կամ կայծակ-հեռագիր՝ Երկար գրիր, լա՞վ... Գրիր ամեն բանի մասին, մերոնց մասին, ձերոնց մասին, Երևանի մասին՝ Հա, քիչ մնաց մոռանայի, մեր ջոկատում մի հիանալի տղա կա, բելոռուս՝ Նուրբ, Եսենինի դեմքով տղա է, բայց կարճահասակ՝ Ոտքերը երեսունհինգ, թե երեսունվեց համար են՝ Նոր է եկել՝ Իսկ բանակում քառասուն համարից փոքր սապոգ չկա՝ Խեղճին առաջին օրը տվել էին քառասուներեք համար՝ Ձա չէր հանել՝ Հիմա, ուրեմն, շարք ենք կանգնել և ավագը, որ «տեղու բայլով-մարշ» հրաման էր տվել, մեկ էլ նայեց նրան. «Ինչ է, քեզ չի՞ վերաբերում, շարքային Վորոբյով...»՝ Վորոբյովը, այսինքն Միշկան, տարակուսած նայեց ավագին, այսինքն, ի՞նչ եմ արել որ... «Ինչո՞ւ

ոտքերդ չես բարձրացնում,— բարկացավ ավագը,— ինչ է, հրամանը չլսեցի՞ր...»։ «Լսեցի,— խեղճ-խեղճ ասաց Միշան,— լսեցի, բարձրացնում եմ։ Բարձրացնում եմ, բայց չի երևում»։ «Հապա մի տեսնեմ,— գոռաց ավագը,— տեղում քայլով, մարշ...»։ Եվ մեկ էլ փոթկաց։ Պարզվեց, որ խեղճ Միշան իր նուրբ, աղնվական ոտքերը բարձրացնում է, տեղում քայլ է անում, բայց... սապոգների մեջ։ Դրա համար ասաց՝ բարձրացնում եմ, բայց չի երևում։ Համա թե հոհոացինք։ Հիանալի տղա է Միշան, առհասարակ լավ տղաներ շատ կան. ինձ թվում է, Միշան բանաստեղծություններ է գրում թաքուն, թափանցիկ, ջինջ-կապույտ աչքեր ունի։ Եթե արձակուրդ տան, նրան հետս բերելու եմ Հայաստան։ Ինչո՞ւ ինձ չես ուղարկում հայերեն թերթեր, չէ՞ որ խնդրեցի։ Ես կարող եմ մերոնց գրել, բայց ուզում եմ քո ուղարկածը լինի, լա՞վ...

Բարևիր մեր բոլոր ավազակներին, Լիլի Իվանովան եկա՞վ Երևան, երեկ ռադիոյով հաղորդում էին նրա երգերը։ Ասենք, դու նրան չես սիրում։ Մամբրեին կգրեմ առանձին։ Հիմա կվերջացնեմ և կգրեմ, Ֆրեդ հանկարծ նոր պատերազմ չսկսվի։

Քո՝ Պարույր»)։

— Ինչ է նշանակում՝ ամբողջ ճշմարտությունը։ Կարծես ամերիկյան դատարանում ես և ձեռքդ դրել ես Ավետարանի վրա՝ երդվելու, որ ասելու ես ճշմարտությունը, միայն ճշմարտությունը և ոչինչ, բացի ճշմարտությունից։

— Մի ծաղրիր, Մամբրե։ Ես իսկականից վատ եմ զգում, եթե կուզես՝ մեղավոր։

— Դե, զգա։ Իսկ ինձ ավելի հետաքրքրում է, թե ինչ է զգում հին նորքեցի ծաղկավաճառ Գոբսեկ Սողոմոնյանը, իմ հնարավոր աները։

— Մի քիչ հարգանքով խոսիր հորս մասին, կարելի՞ է։

— Կարելի է։ Բայց չէ՞ որ խոստացավ։ Խոստացավ, չէ՞... Հետո էլ մեր սերնդի գլխին են ամեն օր ավետարան կարդում, թե չենք հարգում մեր խոսքը, կասկածում ենք, խաբում ենք։ Խոստացավ, չէ՞...

— Խոստացավ։ Բայց ասաց՝ հարսանիքից հետո։

— Հարսանիք, այ թե անտիկ բառ գտար։ Ի միջի այլոց հարսանիքը բարդ բառ է։ Գիտես ի՞նչ արմատներից է կազմված։

— Դու սանձարձակ ես և ցինիկ։

— Ես շատ երկար եմ ատամներովս զանազան սանձեր կրծել, դրա համար ուրախ եմ, որ վերջապես սանձարձակ եմ։ Դու, իհարկե, այդ սանձերը չես հասկանա, Գոբսեկադուխտ։

— Դու կարծես թե ասում ես հորս։

— Ասում եմ բոլորին, ովքեր փող ունեն։ Հասկացա՞ր։ Իսկ քո Պարույրն ինձ էլ է ձանձրացնում, քաջ զինվոր Շվեյկ, Վասիլի Չեկոսն... Այնպես է գրում բանակի մասին, որ քիչ է մնում վեր կենամ գնամ Սիբիր, տեղներս փոխենք։ Ասենք մի հարցում նրա հետ մենք վաղուց տեղներս փոխել ենք։

— Դու լպիրշ ես, Մամբրե։

— Ներիր։ Պարզապես կատաղած եմ, տեղս չեմ դնում։ Այդ Արթուրն էլ քոսոտ տիպ դուրս եկավ. ինչ ասաց ինձ, անասո՞ւն... Ես մի օր կչարդեմ նրա քիթ-մռութը։ Ախր դու չգիտես, այսօր նրա մոտ մի աղջիկ է եղել, Անի անունով, մի խոսքով՝ ոչինչ չի ստացվել, դրանից էր երևի կատաղած։ Անի կոչված այդ գիշատիչը շրխկացրել է դուռը և գնացել։ Այսօր։

— Իսկ ինձ թվում է, թե նա Սոնային է սիրում։ Իսկապես, Մամբրե, դու պատասխանելո՞ւ ես Պարույրին։

— Իհարկե։ Ես միշտ էլ պատասխանում եմ։ Ես կանոնավոր մարդ եմ։ Ես միշտ էլ պատասխանում եմ։

(«Այ տղա, Մամբրե,

Կարգին նամակ էիր գրել։ Իզուր էլ գնացիր երկրաբանական։ Հարյուր տոկոսանոց Նար-Դոս ես։ Շատ շնորհակալ եմ։ Լսիր, իսկ Հասմիկն ինչու կարգին նամակ չի գրում, հո բան չի՞ պատահել։ Տեսնում ես, չէ՞, Նրան։ էլի եմ խնդրում, ոնց որ բանակ գնալու օրը՝ նայիր, հետևիր, թող մենակ չզգա իրեն։ Մեկ էլ մտածում եմ. լավ, Մամբրեն էլ աղջիկ կունենա (ունե՞ս), ինչպես պիտի հասցնի։ Մի խոսքով՝ հույսս քո հնարամտության վրա է։ Հասմիկը դե եղբայր-բան չունի, իսկ մեր քաղաքը դու հո գիտես... Դասերդ ինչպես են։ Այստեղ հանդիպեցի մի հայ տղայի։ Լևոն է անունը. ռեակտիվ ինքնաթիռի օդաչու է։ Երևանցի տղա է, մայրն ապրում է Ղուկասյան փողոցի վրա, որտեղ դեղատնային վարչությունն է։ Մի խոսքով, Լևոնը իր տուն տարավ, եկավ մեր հրամանատարից թույլտվություն վերցրեց, ինքը կապիտան է, տարավ։ Ինչ տուն, մի սենյակ լիքը երաժշտություն էր։ Իհարկե նաև հայկական։ Լսեցինք, մի քիչ տխրեցինք, կարոտեցինք ձեզ։ Ասաց, որ որոշել է ընդմիշտ մնալ բանակում։ Կարող է զորացրվել, բայց որոշել է մնալ։ Ասում եմ՝ ինչո՞ւ, Լևոն։ «Երբ ինքնաթիռը թռչում է ժամում երեք հազար կիլոմետր արագությամբ,— ինքն է ասում,— ես միայն այդ պահերին եմ լիապես հասկանում, թե ինչ ասել է երջանիկ լինել։ Տարբեր զգացումներ կան,— ասում է,— բայց արագության զգացումը ամենա-

խենթն է, ամենահրապուրիչը»։ Զարմանալի տղա է։ Գիտես, Մամբրե, խնդրում եմ, գնա Լևոնենց տուն, Ղուկասյան 4, բնակարան 12, միայն մայր ունի, գնա տես, գուցե մի բանի կարիք կունենա, կամ՝ հենց էնպես, բարևիր, ցույց տուր նամակս, լա՞վ...

Քիչ է մնացել, կգամ, ճորտությունից կազատագրվեմ։

Քո՝ Պարույր»)։

— Ի՞նչ ես պատասխանում Պարույրին, մանավանդ հիմա։

— Դա իմ գործն է։ Մի պատասխանը կտամ, կկարդաս։ Շատ գոհ է իմ նամակներից, նույնիսկ գրել է, որ ես համարյա Շեքսպիր եմ։ Դե բառացի Շեքսպիր չի գրել, բայց հասկացվում է, իզուր մի ծիծաղիր, դու ավելի լավ է համոզիր քո Գորսեկ-հորը, որ իր մեխակներից տված փողի մի մասը մեզ տա, մի մեքենա առնենք, թեկուզ «Ժիգուլի» և ամուսնանանք։ Տունն էլ հետո, առայժմ կապրենք թեկուզ տատիս մոտ, նրա հարևանը շուտով կմեռնի, դու գիտես, ես այնտեղ եմ գրանցված։

— Կհամոզեմ։ Ինձ թվում է կհամոզեմ։ Բայց, գիտե՞ս, խնդրում եմ մի նեղանա, այս գրույցից ես տխրում եմ։ Ինձ հանկարծ թվում է, որ եթե հայրս մեքենայի փող չտա, դու... Մի նեղանա, հանկարծ իսկապես թվում է, որ դու...

— Ինչ դու։

— Ոչինչ։ Ոչինչ։ Դու գիտես, որ ես սիրում էի Պարույրին, մենք հանդիպում էինք...

— Նա էլ մեքենա կուզեր, դու նրա քնքուշ տղերին մի նայիր. շատ ազատ ժամանակ ունի, գրում է. հիմա, առհասարակ, բանակում շատ ազատ ժամանակ ունեն։ Նա էլ դեմ չէր լինի, եթե հայրդ մեքենա նվիրեր։

— Երևի դեմ չէր լինի։ Բայց ինքը չէր ուզի, չէր համառի։

— Ինչ է, ե՞ս եմ ուզում ուրեմն։ Ինքն ասաց՝ Գորսեկ-հայրիկդ։ Եվ հետո՝ ես կարող եմ նաև լեզուս կուլ տալ, բայց քեզ էլ, չէ՞, պիտի հուզի, մեքենան մենակ հո ինձ չի ծառայելու, քեզ էլ պիտի հուզի, չէ՞, մեր ապագան։

— Ինձ թվում է, թեպետ ես անընդհատ ուզում եմ մոռանալ այդ միտքը, ինձ թվում է՝ մենք մեղավոր ենք Պարույրի առաջ, մենք պարտավոր ենք նրան ամեն բան բացատրել։ Ես բացատրել կարող եմ, ինձ թվում է նա կհասկանա, եթե ես գրեմ, որ քեզ եմ սիրում, որ ես չէի կարող արհամարհել քո զգացմունքները, որ դու տառապում էիր, ինձ թվում է նա կհասկանա... Բայց մենք պետք է նրա հետ անկեղծ լի-

նենք, նա լավ տղա է, նա մի քիչ ավելի լավն է մեզանից, գուցե շատ ավելի լավն է, ես ինչ գիտեմ։ Ես կարծես կարուսելի մեջ եմ, ես ոչինչ չեմ հասկանում։ Ես անընդհատ խաղում եմ, անընդհատ դեր եմ խաղում։ Գոնե մի դեր միայն լինի։ Ես այսօր իզուր նեղացրի Արթուրին, նա լավ տղա է, նա մի քիչ նման է Պարույրին... Ես հոգնել եմ, ես դզվել եմ իմ անթիվ դերերից, տանը՝ դեր, ընկերների մեջ՝ դեր, ինստիտուտում՝ դեր։ Դու ինձ սիրո՞ւմ ես, չէ՞...

— Մի գոռա։ Մարդիկ են կողքիդ, երկուական ականջներ ունեն։

— Թող լսեն, ես ինչ եմ ասում որ, թող լսեն։

— Իհարկե սիրում եմ, մի քիչ կամաց, այնուամենայնիվ, փոքր քաղաք է, ամենքը ճանաչում են ամենքին։

— Դու ինձ սիրում ես, չէ՞...

— Իհարկե, իհարկե սիրում եմ, Հասմիկ։ Բայց կամաց, մի բոր-բոքվիր, թքած մեքենայի վրա, մեզ ոչինչ պետք չէ, կավարտենք-կաշխատենք։ Ես հո միայն ինձ համար չե՞մ ասում։

(«Բարև, Հասմիկ,

Այսօր մեր հրամանատարին, վրացի է, ցույց տվեցի քո լուսանկարը, հավանեց քեզ և ասաց, որ մեր հարսանիքի խաչեղբայրն է դառնում։ Մենք զորացրվելու ենք համարյա միասին։ Գուրամ Փանջիկիձե, հիանալի տղա է, դու համաձայն կլինես չէ՞, մնաց Մամբրեն, ախր մենք նրան էինք խոստացել։ Դու կամաց-կամաց նախապատրաստիր, հանկարծ չնեղանա։ Հը՞, ինչպե՞ս է, գո՞հ ես նրա բարձր հովանավորությունից։ Նա աննման տղա է, հո շատ չի՞ ճնշում իր հովանավորությամբ։ Հրամանատարս ասում է, որ հարսանիքի առաջին կեսը Երևանում կանենք, մյուս կեսը՝ Քութաիսիում, ինքը Քութաիսիից է, ասում է, որ շատ կնեղանա, եթե չհամաձայնենք, հը՞... Ինչ կա Երևանում, տղաներից ո՞վ ընդունվեց, աղջիկներից ո՞վ է ամուսին հայթայթել։

Քո՝ Պարույր...»)։

— Ես այսօր, հենց հիմա, կգնամ կխոսեմ հորս հետ, կհամոզեմ, նա փափուկ մարդ է, կհամոզեմ։

— Չէ, պետք չէ, Հասմիկ, դու նեղանում ես, պետք չէ։ Ես ողջ կյանքս դժվար եմ ապրել, ինչու պիտի հանկարծ ամեն բան լավ լինի։ Պետք չէ։ Մեքենա, տուն, սեր... Դրանք միասին չեն լինում. լինում են առանձին-առանձին, առանձին-առանձին մարդկանց մոտ։

— Գիժ, մեզ մոտ միասին կլինեն։

— Տեսնենք։ Այսինքն, քեզ տեսնենք...

Համիկը գնաց։

Արդեն ուշ է, մինչև հանրակացարան հասնեմ, կղանա երկուսը, երկուս անց կես, տղաները պիտի զարթնեն, մոթմոթան, հայհոյեն։ Տատիս սենյակն ավելի մոտիկ է, մանավանդ որ մի բաժակ էլ մուրաբայով թեյ կխմեմ, տատիկս էլ անքնություն ունի։ Փողոցն ամայի է, լույսերը հանգցրել են, հատուկենտ մեքենաներ են միայն երևում, մի քանիսն իմ կողքից անցնելիս դանդաղում են, վարորդները նայում են հարցական ու հրավիրող, այսինքն տուն չտանե՞նք, թափառաշրջիկ... Ես նայում եմ նրանց կողմը և հավասարապես ատում եմ բոլորին։ Անխտիր բոլորին, ես հիմքեր ունեմ։ Տատս փառահեղ կին է, բայց մեր մեջ ասած, վաղուց արդեն կարող էր այն աշխարհ փոխադրված լինել. նրա ծանոթների, հարազատների մեծ մասն այնտեղ են, մեր կողմերում մնալու առանձին մի պատճառ չունի։ Տատս ամեն անգամ ինձ համոզում է փոխադրվել իր մոտ, բայց իմաստ չունի. մի սենյակ, այն էլ հարևանով, ինքն էլ գիշեր-ցերեկ հազում է, շնչարգելություն ունի, ջուր պիտի տաս, վազես դեղի ետևից, շտապ օգնություն կանչես, մուծես հեռախոսի վարձը, աղբը թափես, պիտի խոսես հետը, և ամենագլխավորը՝ պիտի լսես նրա անվերջ, անսկիզբ պատմությունները։ Երկու օր այդպես ապրելուց հետո կնախընտրես կախվել փողոցի առաջին խաչ ծառից։ Պիտի սպասեմ. Համիկի հայրիկը, որ տուն էլ էր խոստացել, հազիվ թե խոստումը կատարի և, առհասարակ, ես պիտի կարգին որոշեմ, եթե մեքենա չառնի, եթե տուն չտա... Համիկը երևի վիրավորվեց, առհասարակ չեմ հասկանում աղջիկներին. սկզբում ինքն էր գուցեղգուցե զառանցում՝ մեքենա կունենանք, երեք սենյականոց տուն կունենանք, մեր մեքենայով կգնանք Ռիգա, հետո Բուլղարիա, տան մի պատը կարմիր ներկ կանենք, մյուսը սպիտակ ֆելզիտ, հիմա ինչ պատահեց, չգիտեմ։ Անին էլ չի երևում, երկու անգամ հանդիպեցինք և միանգամից ցնդեց տեսողությունից, լսողությունից, հեռախոսի համարն էր ասել՝ զանգահարում եմ, զանգահարում, ոչ մի պատասխան։ Երևի հորինված համար է։ Այսօր Արթուրի մոտ ինչ-որ Անի է եկել, զուցե հենց նա է։ Հազիվ թե, անունը ոչինչ չի նշանակում. հիմա մեր քաղաքում յուրաքանչյուր երկրորդ աղջկա անունն Անի է։ Բայց, իհարկե, Անին իմ հանդիպած ամենակայծով աղջիկն է, զարմանալի, արտասովոր մի բան կար նրա մեջ, չէր խանգարի, եթե մի քանի անգամ էլ հանդիպեինք, մանավանդ, տատիս տանը։ Մի հին, ջախջախված մեքենա անցնում է համարյա քսվելով ինձ, վարորդը ալարկոտ նայում է, ծխախոտ ուզում։ Չունեմ,

ասում եմ ես, և առաջ եմ անցնում այդ մեռադե թոշակառու կրիայից։ Գլխումս մշուշ է, կարծես թունդ ծխած սենյակ լինի, գոնե տատս շատ չիստի, թողնի քնեմ։ Եվ, առհասարակ, ինչ պիտի լինի իմ ու Հասմիկի վերջաբանը, չգիտեմ։ Պարույրն էլ շարունակում է ամբակոծել իր ռազմանճակատային սրտաճմլիկ նամակներով։ Առհասարակ շատ տխմար դասավորվեց ամեն բան. լավ է, որ դեռ ժամանակ կա մինչև Պարույրի զորացրվելը, մի տարի, տեսնենք ինչ կլինի։ Այս ամբողջ պատմության մեղավորը, եթե ճիշտն ասենք, հենց ինքն է, այդ երջանիկ բանակայինը, ծանոթացրեց Հասմիկի հետ, հանձնարարեց հանդիպել, կինս տանել, դասից տուն բերել...

— Տա՞տ...

Տատիս դռան մոտ ես սովորաբար նախ ձայն եմ տալիս, հետո նոր զանգում, զանգից տատս, եթե քնած է, վեր է թռչում և, այդ դեպքում՝ խոսում-պատմում է ամբողջ գիշեր, քունը խանդարեցիր, ուրեմն, պիտի լսես, ելք չկա։

— Մամբրե՞, դու՞ ես, էսքան ուշ ինչ ես շափշփում փողոցները,— ինձ հետ խոսելով, նա դռան մյուս կողմից սկսում է բացել իր բազում կողպեքները, փականները, շղթաները, հետո աչքը կպցնում է դռան կլոր անցքին ու, ճշգրիտ համոզվելով, որ ես եմ, հանդիսավոր բացում է դուռը,— կմբսես, այ տղա, քաղաքում ռադիկուլիտ կա տարածված, քեզ տաք պահի,— Հետո ոտքերը քստքստացնելով գնում է խոհանոց,— թեյը մուրաբայո՞վ, թե՞ լիմոնով։

— Դղումի մուրաբայով,— ասում եմ ես և անդրադառնում, որ դղումն էլ հիմա շատ է հարմար իմ գլխի հետ համեմատելու,— ո՞նց ես, այ տատ... Եվ լիմոնով։

— Ճնշումս առավոտ վեցին երկու հարյուր տաս էր,— ասում է տատս արդեն խոհանոցից, իսկ ես հանում եմ կոշիկներս, երանությամբ մեկնվում բազմոցին, ճմլկոտում. լավ սենյակ է տատիս սենյակը, եթե, մանավանդ, հարևանն էլ մեռնի և մյուս սենյակն էլ ինձ տան, կլինի երկու սենյակ, այդ դեպքում Գորսեկ-հայրիկի վրա թքած։ Մնաց մեքենայի հարցը— Գույնը առավոտն եմ սարքել, թափո՞մ, խանութներում, ասում են, գույն չկա։— Հորս եթե կարողանայի խելք հասկացնել, ամեն բան ուրիշ կերպ կդասավորվեր. ինչ է կպել իր գյուղից, չեմ հասկանում։ Վերջին անգամ էլ նոր գյուտ արեց. «Վահան Տերյանը մեր գյուղում է ծնվել,— ասաց,— ես ոտս Գանձայից դուրս չեմ դնի»։ Թշվառ ուսուցիչ, դուրս մի դիր։— Հորիցդ նամակ-բան չկա։— Պարտադիր չի, որ ես տատիս հարցին արձագանքեմ, նա հիանալի գիտե, որ մի շաբաթ առաջ եմ նամակ ստացել, իմ նամակներն էլ իր տան հասցեով

է գալիս, հանրակացարանում նամակ-բան կորչում է, մի անգամ հայրս փող էր ուղարկել, հիսունվեց ռուբլի, կորավ ու կորավ, ո՞ւմ ասես, մի խոսքով, տատս ինքը հարցը կտա, մտքում էլ կասի պատասխանը։— Հաց ու պանիր էլ կուտե՞ս...

— Չէ, տատ, մեղր ու կարագ կուտեի, բայց չունես։

Հայրս, եթե ասեմ թե հին, պահպանողական մարդ է, հին չի. բառասունութ-հիսուն տարեկան, ամեն անգամ Երևան է գալիս ֆուտբոլի խաղերին, Հովհաննես Չեքիջյանի համերգներին, թե ինչ է կպել դյուղին, չեմ հասկանում։ Ես Արթուրին, իհարկե, վաղը մի լավ դաս կտամ, բայց առհասարակ թքած. տարօրինակ գծեր են երևում այդ դեղնակտուցի մեջ, իսկ և իսկ Պարույրը։ Սրան նամակ գրելուց էլ աչ թես արդեն թուլացել է։ Չգնար թող իր բանակը, Հասմիկ կոչված իր հրեշտակի հետ ման կգար, կինո կգնար, բաղնիք կգնար, ինչ ուզում է թող աներ, ինձ էլ ազատեր, մանավանդ որ այդ Գոբսեկ-հայրիկից խելքս բան չի կտրում, նա իր ձախ ձեռքը կծամի, բայց մեքենա չի առնի, տունն էլ ավելի հարցական է։

Թելը տաք, հաճելի գլգլում է իմ երակներով, և ես իմ մարմնի մի կեսով արդեն ննջում եմ, ձախ կողմս, օրինակ, արդեն քնած է։ Տատս իր անվերջանալի պատմությունն է անում՝ հարևանուհու թեմաներով, ես մի ականջով հասկանում եմ, որ այդ պարապ-սարապ կինը տատիս պատմել է Անիի զալու մասին։ Ախր քո ինչ գործն է, այ թշվառական, թոշակդ ստացիր, կաթ ու մածուն կեր, հեռուստացույց նայիր, վերջ, ի՞նչ ես ուզում։

— Հասմի՞կն էր,— հարցնում է տատս, որովհետև Հասմիկին մի երկու անգամ բերել եմ, ասել եմ, որ հայրը տուն է խոստացել, ավտո է խոստացել, նրան գիտի։— Որ տանը չեմ լինում, մի բերի, խոսք ու զրույց կլինի, ջահել աղջիկ է, անունը կկոտրվի։

— Հասմիկն էր, բա ով պիտի լիներ, այ տատ,— ջղայնանում եմ ես ու ձախ կեսս սկսում է արթնանալ,— թող քնեմ էլի, այ տատ, հո դատախազության քննիչ չես և հետո՝ գիշերվա ժամը 2-ին ինչ հարցաքննություն— Տատս բացում է բազմոցը, պահարանից թարմ սպիտակեղեն է հանում, փռում, հարդարում, իսկ ես հանկարծ կատաղում եմ աշխարհի վրա, մարդկանց վրա, մեր հանրակացարանի վրա, որտեղ սպիտակեղենը փոխում են եռամսյակը մեկ։ Պարույրի նկատմամբ, իհարկե, ստոր բան ստացվեց, բայց մեկ է, Հասմիկը երկու տարի սպասողներից չէ, մի ուրիշի հետ էր կապվելու, իսկ հիմա մեքենան եթե լինի, Պարույրին էլ պետք կգա, վերջիվերջո տասը տարվա ընկեր ենք։ Իսկ առհասարակ նրանք հազիվհազ էին ծանոթացել, կարծես թե Ռո-

մեոյի ու Ջուլիետի սերն էր, որ խանգարվեց։ Ես չհասկացա էլ, թե ինչպես ստացվեց ամեն ինչ։ Սկզբում Գոբսեկ-հայրիկը պատճառ դարձավ. ինձ հավանել էր, մանավանդ երբ ասացի, որ ուզում եմ գյուղի մեր տունը ծախեմ, քաղաքում հողամասով տուն առնեմ։ «Դու հողամասն տա,— ասաց,— տուն ես կոոպերատիվ կգրվեմ, իսկ հողամասը լրիվ կգարձնենք ջերմոց, ամեն քառակուսի մետրից տարին մի երկու կիլո ոսկի կարելի է հանել»։ Երևի այդ օրվանից էր, որ միտքս փոխվեց, իսկ Հասմիկն էլ գե, ոչինչ, հարյուր տոկոսանոց մոդեռն աղջիկ է։ Պլանավորեցի սիրահարվել ու մի քանի օր հետո արդեն ոտից-գլուխ սիրահարված էի։ Ասացի Պարույրը արձակուրդ կգա, կբացատրեմ, ժամանակակից մարդ է, կհասկանա։ Պարույրն էլ՝ արձակուրդ չեկավ, ես ինչ անեմ։

Ես գլուխս զգուշորեն քողարկում եմ վերմակով, որովհետև տատս անցել է հարևանուհու հետ կայացած ճակատամարտի զրգռիչ մանրամասներին, իսկ գլուխս կամաց-կամաց դատարկվում է ծխից, ավտոմեքենայից, Հասմիկից, Պարույրից, կոպերս փակվում են, աչքերս կուլ գնում։ Ինչի է պետք ջերմոցը. գյուղի տունը, եթե ծախենք, ինքս բնակարան կառնեմ, իսկ Հասմի՞կը։ Նրան առնող միշտ էլ կլինի, նա տանը մնացող աղջիկ չէ։ Այս վերջին մտքից ես բավական որոշակի գարշանք եմ զգում, բայց չեմ ուզում ավելի խորանալ, որովհետև քունս կփախչի։

ՀԱՍՄԻԿ

Ինչ է լինելու սրա վերջը, անհայտ է։ Մամբրեն գնալով ավելի գործնական է դառնում, նախկին խելագար սիրուց փշրանքներ էլ չեն պահպանվել։ Նախկին, այնպես եմ «նախկին» ասում, կարծես յոթ տարի սիրահարված ենք։ Իմ առաջ մայրիկը դուռը բացեց, ոչինչ չասաց, արդեն հաշտվել է, որ ամեն օր պիտի ուշանամ, բայց նայեց թթված ու յժգոհ։ Նա չի սիրում Մամբրեին. «Գորտի պես բան է,— մի օր ասաց,— փափուկ է, բայց լպրծուն, ձեռք տալուց զզվում ես։— Մայրս համալսարանի կենսաբանականում սովորել է մինչև երկրորդ կուրս, դրա համար՝ բոլոր համեմատությունները կենդանիների կամ բույսերի աշխարհից են։— Տղամարդը պիտի մասուրի նման լինի. մի քիչ փշոտ, բայց հեռվից երևացող, առողջարար»։

Հայրիկս դուրս է գալիս լողարանից։ Դեմքը կարմրած է, գոհ։ Հաճույքով շփում է ճաղատը. այդտեղ անհիշելի ժամանակներում երևի մազեր են եղել։

— Նո՞ր եկար,— հարցնում է,— Մամբրեն ինչ է ասում՝ գյուղի

տունը չծախեցի՞ն, մի լավ հողամասի տեղ եմ արել, վախենամ ձեռքից բաց թողնենք։ Թող չձգձգի։ Գյուղի տներն էլ ամեն օրվա վրա էժանանում են։

Մայրիկս թեյը դնում է սեղանին և ձեռքերը կրծքին խաչած կանգնում է դաշնամուրի մոտ։

— Մամբրեն էլ հետաքրքրվում էր, թե ավտոմեքենան երբ ես առնելու։ Երկուսդ էլ շտապում եք։

— Կառնեմ։ Ասել եմ, կառնեմ։

Հայրս թեյը խմում է տհաճ աղմուկով, որին արդեն վարժվել ենք, իսկ մայրս, գիտեմ, այս բոպեին մտածում է իմ մասին. նրա հայացքի մեջ կասկածանք ու վախ կա իմ ճակատագրի համար, չեմ հասկանում, թե ինչն է պատճառը։

— Դեռ փեսա չդառած՝ ավտո է ուզում,— ինքն իրեն խոսում է մայրս,— կարծես թե տանը մնացած աղջիկ է առնում, որ պիտի բերանը քաղցրացնենք։

— Մամբրեն լավ տղա է,— թեյի արանքից խոսում է հայրս,— եվ մաքուր փող չունի, իսկ շատ է ուզում ունենալ, նրա վրա կարելի է հույս դնել։ Երևում է խեղճ մեծացած տղա է։ Ծաղիկ չի՞ ծախի, ի՞նչ ես կարծում...

Հարցը ինձ է վերաբերում։ Ես հանկարծ Մամբրեին պատկերացնում եմ օպերայի խաչմերուկում, քրիզանթեմների և մեխակների փունջը ձեռքին, սկզբում ծիծաղս է գալիս, հետո՝ լացս։

— Մամբրեն երկու տարի հետո երկրաբանի դիպլոմ կունենա,— սառը արձանագրում եմ ես,— քո կարծիքով կծախի՞։

— Դիպլոմը՝ հեչ, ծաղիկը հիմի ամենաեկամտաբեր առևտուրն է։ Բայց գոռոզ տղա է, փողոցում չի կանգնի։ Հիմիկվա ջահելներն ուզում են, որ ոչ մի բան չանեն, բայց փողն ինքն իրեն գա՝ ոնց որ Աբովյանի պուլպուլակի ջուրը։ Ծաղիկը փող է։ Եվ փողը քրտինքով են ջրում,— հետո զառնում է մորս,— դու գնա քնի, հայր ու աղջիկ ենք, խոսում ենք։

— Իմ քունն էլ է տանում,— ջղային ասում եմ ես,— Մամբրեին կանչիր, խոսեք, դուք իրար լեզու ավելի կհասկացնաք։

Հայրս զարմացած նայում է ինձ, իսկ ես հանկարծ զգում եմ, որ այս խոսակցությունն այլևս չեմ կարող շարունակել։ Ոչ, ավելի լավ է լինել հաշվիչ մեքենա և կյանքի դժվար պահերին հաշվարկել զանազան տարբերակներ, ընտրել ամենաօպտիմալը։ Ամուսնանալուց առաջ, օրինակ, կարելի է կուլ տալ մի շարք փեսացուների տվյալներ, համեմատել, հաշվել, նոր միայն որոշել, թե ում հետ ամուսնանաս։

— Լավ, դու էլ գնա քնիր,— հաշտվում է հայրս,— սրանց հետ խոսել չի լինում. դու գիտես, որ ես ուրիշ երեխա չունեմ, ես ուզում եմ իմ մեռնելուց առաջ իմանալ, որ դու սոված չես մնա։

Ես իմ սենյակի դռների մոտ շուռ եմ գալիս, նայում հորս, որին սիրում եմ աշխարհի չափ։ Ես ուզում եմ շատ լավ ապրել, հազար զույգ կոշիկ ունենալ, մուշտակներ, գիշերանոցներ, ես ուզում եմ ամեն օր գնալ վարսավիրանոց, ամեն տարի արտասահման։ Բայց ես ուզում եմ նաև, որ իմ սիրածը, որ հետո ամուսինս պիտի դառնա, ինձ ծաղիկներ նվիրի։ Ամեն օր։ Կնվիրի՞ որ... Ծաղիկը փոշ է, հենց նոր ձևակերպեց հայրս։ Եվ իսկապես, ես նայում եմ մեր տանը՝ դաշնամուրին, կահույքին, ջահերին, գորգերին. ամեն բան ծաղիկների փոշով է։ Ամեն բան։

— Ինչի շշմեցիր,— մոտիկ է գալիս մայրս, հո գլուխդ չի՞ պտտվում, սիրտդ չի՞ խառնում,— նա վախենում է իմ ու Մամբրեի կապից, ամեն օր վախենում է։

— Չէ, մայրիկ,— ես համաբյա քնքշանքով եմ նայում մորս,— հայրիկ, մեր օրերում պարզապես անհնար է, որ մարդ սոված մնա։ Մի անհանգստանա, կապրեմ, որ ուզենամ էլ՝ սոված չեմ կարող մնալ։

— Մի բաժակ էլ թեյ տուր,— մտախոհ ասում է հայրս, նա երևի հանկարծ մտածեց ամենակարևոր մի բան, բայց ես երբեք չեմ իմանա ինչ։ Երբեք չեմ իմանա, թե ինչն է նրա համար ամենակարևորը։ Պարո՞ւյր, Պարո՞ւյր... Ես նստում եմ անկողնուս վրա, նայում եմ ժամացույցիս, ժամը երկուսն է. Մամբրեն նոր միայն հասած կլինի հանրակացարան։ Եվ հանկարծ ուզում եմ կարդալ Պարույրի վերջին նամակը։

«Բարև, Հասմիկ,

Ուրեմն, ինձ մնում է երեք հարյուր քառասունչորս օր։ Ճիշտն ասած՝ վարժվել եմ այս վայրերին, իսկ տղաները... Հանել մարդիկ ենք՝ կիսատ երազներով, սերերով, հույսերով։ Հանկարծ զգացինք, որ նման ենք իրար, որ վաղուց գիտեինք իրար։ Ծիծաղում ես, չէ՞, հիմա։ Տղաներից մեկը երեկ առաջարկեց, թե եկեք զորացրվելուց հետո, ամբողջ դասակով մնանք Սիբիրի որևէ կառույցում, միասին աշխատենք։ Ես էլ ասացի, որ ավելի լավ է բոլորով գնանք Արփա-Սևան։ Հարցրին, հետաքրքրվեցին, պատմեցի՝ ինչ որ գիտեմ։ Գլուխները մտավ։ Հը՞, հրաշալի կլինի, չէ՞։ Հա, տղաների պատվերն է՝ Հայաստանի, Սևանի մասին գրքեր ուղարկիր ռուսերեն լեզվով, ուզում են կարդալ։ Հանկարծ մեկ էլ տեսար՝ իսկականից մեր կացանք ու եկանք։ Բայց վախենում եմ մինչև զորացրվենք, Արփան հասնի Սևան. հետաքրքրվիր և գրիր, ե՞րբ է ավարտվելու շինարարությունը. մեր թերթերը կարդում եմ, բայց բան չեմ հասկանում, թե երբ։

Դու ինչ ես անում, կարոտել եմ, ախր, մի կարգին իրար չիմացանք էլ։

... Չեմ հասկանում, թե ինչպես է կատարվում, հասկանում եմ միայն որ արդեն պատել ու հիմա մանր-մանր կտորներ եմ անում Պարույրի նամակը, հետո ինքնաբերաբար զարակից հանում եմ նրա մյուս նամակները և նույնպես մեքենաբար պատռում եմ, մանրում։ Հետո այդ կտորտանքները լցնում եմ նույն զարակը, փակում եմ բանալիով։ Հետո ձեռքերիս ափերով ծածկում եմ դեմքս և մտածում եմ, մտածում. հանկարծ նմանվում եմ հաշվիչ մեքենայի, որին սիրտ են պատվաստել։

Մնաս բարո՜վ, Պարույր...

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ, ՎԵՐՋԻՆ

ԺԱՄԱՅՈՒՅՑ ՀՈՒՆԵՑՈՂ ՏՂԱՆ

— Մի քիչ ուշացա, գիտես,— ասաց աղջիկը, տրոլեյբուսից իջնելով,— մազերս լա՞վն են։ Մի ժամ նստել եմ, մինչև չորացել է։ Անտանելի հերթ էր։ Մի ժամ նստել եմ, մինչև հերթս հասել է։

— Հիանալի եղանակ է,— ասաց տղան,— նստել-նայում էի փողոցին, մարդկանց։

— Մի քիչ որ Բափառենք, մազերս կչորանան։ Ուզում ես մտնենք դեղատուն։

— Ի՞նչ կա որ դեղատանը։

— Հայելի կա։

Տղան ծիծաղեց ու նրանք ձեռք-ձեռքի մտան դեղատուն։ Տղան հանկարծ մատաթերեց Անիին, որ երկու ժամ գեղի էր սպասում, պատմե՞լ, չպատմեց։ Որևէ աղջկա հանգիստ կարելի է պատմել, որ քիչ առաջ փողոցով կոկորդիլոսներ էին գնում, կարելի է պատմել երկրաշարժների, օդային աղետների մասին, բայց ոչ երբեք մի ուրիշ աղջկա մասին, մանավանդ վտանգ կա, որ կհարցնի՝ իսկ գեղեցի՞կ էր... Ի՞նչ ասես... Դեղատանը լույսի տոնավաճառ էր և աղջիկն անմիջապես վազեց հայելու մոտ։ Մի քանի բոպե տղան նայում էր, թե նա ինչպիսի գերզգուշությամբ է ուղղում-տեղաշարժում մազերը, հետո մոտեցավ ցուցափեղկին, սկսեց նայել գեղորայքը։

— Ջերմաչափ չունենք,— ասաց սպիտակ խալաթով, ակնոցավոր կինը, որ սուրճ էր խմում։

— Ջերմաչափ չեմ ուզում,— դարմացավ տղան։— Նայում եմ։

— Հիմի բոլորը ջերմաչափ են ուզում։ Մոդա է դառել տաքությունը չափել։ Առաջ ամեն թաղում հաղիվ մի ջերմաչափ կար։ Յուրաքանչյուր գնում, գալիս-տանում էին, հարևանությունն անում, հիմի հարազատ հարսը իր ջերմությունը իմ ջերմաչափով չի չափում, ասում է հիգենիկ չէ։ Գլխացավի նոր հաբեր ենք ստացել, պենտալգին, թոցնում են, տա՞մ։

— Տվեք, եթե ուզում եք,— ասաց տղան,— երկու տուփ։

— Չորսն եմ տալիս։— Կինը բարակ, ճռճռան թղթի մեջ փաթաթեց գլխացավի հաբերը,— դեղն այն ժամանակ առ, երբ որ պետք չի։ Իսկ ողորմածիկ տատս դեղն առողջ ժամանակն էր խմում։ Որ հիվանդացար, էլ ինչ, ասում էր։

Աղջիկը դեռ կոտրատվում էր հայելու առաջ, հեռանում էր, մոտ գալիս, կինը խոսում էր տղայի հետ, բայց աչքի տակով հետևում էր նրան։ Հետո փոքր-ինչ թեքվեց տղայի կողմը, կիսաձայն ասաց.

— Էնպես արա, որ շաշխատի։ Թող մնա տանը, երեխա պահի, որ շաշխատի, քո օգուտն է։ Տելեվիզորի Նարան մեր տանն ավելի շատ է լինում, քան թե հարսս...

— Ազգակա՞ն եք Նարայի հետ։

— Չէ, ինչ ազգական,— անկեղծ կարեկցանքով տղային նայեց կինը,— ժամը վեցին միացնում ես տելեվիզորը, Նարան տունդ է մտնում, ժամը 12-ին ասում է բարի գիշեր, իսկ հարսս գալիս է իննին-տասին, գնում է ծեգը չբացված։ Էնպես արա շաշխատի։ Վալիդոլ տա՞մ։

— Էդ՝ մի քանի տարի հետո,— խորհրդավոր փսփսաց տղան,— որ պսակվենք, նոր պետք կգա։

— Պսակված չե՞ք...

Երկուսով էլ ծիծաղեցին։

— Ծանոթնե՞ր դուրս եկաք,— առանց հայելուց աչքը կտրելու հարցրեց աղջիկը,— քաղցր-քաղցր խոսում եք։

— Հարսներից ենք բամբասում,— ասաց տղան։

Աղջիկը մոտեցավ նրանց, ժպտուն նայեց դեղավաճառ կնոջը.

— Բարև ձեզ։

— Բարև, աղջիկ ջան, հանաք է անում։ Բամբակ ուզո՞ւմ ես։

Ծիծաղեցին երեքով։

— Գնանք,— ասաց աղջիկը,— բարի գիշեր, մայրիկ։

— Բարին արեղ,— ժպտաց կինը, հետո քթի տակ խոսեց ինքն իրեն,— օտար աղջիկն ինձ մայրիկ է ասում, իսկ ինքը՝ տիկին Սաթենիկ։ Մերդ տիկին դառնա։

Փողոցում ավելի էր մութ և ավելի էր լույս. գիշերվա մգության մեջ

պուտ-պուտ լույսեր էին և լույսերն ավելի վառ էին թվում, ավելի գույնզգույն ու հեքիաթ։

— Տուն ենք գնում,— ասաց տղան,— ես քեզ ցերեկն ասացի։

— Հարսնատե՞ս,— ծիծաղեց աղջիկը,— լավ էր, որ այքերս չներկեցի։ Մազերս լա՞վ են, ոչինչ չես ասում։

— Հիանալի են,— ասաց տղան,— ուշ է, ուզո՞ւմ ես մեքենա նստենք։

— Քամի է, նստենք։— Աղջիկը զույգ ձեռքով պաշտպանեց մազերը։— Ովքե՞ր կլինեն։ Հորաքույրեր, մորաքույրեր...

— Կգնանք, կտեսնես։ Հորաքույրեր, մորաքույրեր չունեմ։ Ինչպես մեր բաժնի վարիչն է ասում՝ ես միայն ընկերներ ունեմ և պարտքեր։

Տրամվայն անցավ այնպիսի մի զնգզնգոցով, ասես փոխադրում էր Երկիր-մոլորակի բոլոր եկեղեցիների զանգերը։ Տրամվայի բազմաշարշար այս վագոնները երևի քաղաքի հասակակիցներից են, թեպետ, ըստ պատմության դասագրքերի, քաղաքը երկու հազար յոթ հարյուր հիսուն տարեկան է, Հռոմից մեկ տարի վեց ամսով փոքր կամ մեծ... ըստ նույն դասագրքերի։ Ձեռք-ձեռքի բռնած, այս վագոնները՝ քանի տարի է, ինչ զնգզնգում են քաղաքի փողոցներում, ծերացել են։ Տրամվայն էլ ծերանում է։ Տղան մտածեց այս նախադասությունները և մի քիչ էլ երևի ինքը ծերացավ։

— Դու իսկապե՞ս պարտքեր ունես,— հարցրեց աղջիկը։

— Ավելի շատ կունենամ և շուտով։

— Ինչո՞ւ։

— Գուշակիր, ինչո՞ւ։

— Կոոպերատի՞վ բնակարան ես գրվելու։

— Այդ՝ մեկ։

— Արտասահմա՞ն ես գնալու։

— ... ենք գնալու։ Երկուս։

— Ե՞ս էլ...

— Իհարկե։ Մինչ այդ՝ հարսանիք ենք անելու, դհոլ-զուռնայով։ Այդ էլ՝ երեք։

— Ճի՞շտ։ Ես հարսանիք սիրում եմ։ Մեծ, իսկական։ Հարսը՝ սպիտակ շորերով, քողը երեսին։ Փեսան՝ վարդը ձախ գրպանում։ Վերջում անպայման կռիվ։

— Կգան մերոնք։ Տասնմեկ մարդ։ Ընկերներս, քեռիս։ Ռեստորանում կանենք։

— Ո՞ր։

— Ուզում ես, «Անի»։

Աղջիկը անսպասելի լրջացավ.

— Իսկ ես քեզ երբ եմ ասել, թե համաձայն եմ հետդ ամուսնանալ, որ հիմա ռեստորանն ենք որոշում։ Ե՞րբ եմ ասել։

— Այսօր կասես։

— Իսկ մերոնց չե՞ս հաշվել. միայն չորս քեռի ունեմ, երկու հորեղբայր, տասներկու հորեղբորս աղջիկ, հինգը ամուսնացած են։

— Սպասիր, սպասիր,— տղան սկզբում ծիծաղեց, հետո լրջացավ,— ուրեմն, հարկավոր կլինի ողջ ռեստորանը վարձել։ Պարտքերս շատացան։

— Իսկ ինչ է, կարծում էիր հե՞շտ է ինձ հետ ամուսնանալ,— շարաճճի նայեց աղջիկը, —կարծում էիր կժամադրվենք և տրամվայով կփախցնես տո՞ւն...

— Գուցե ձերոնցից մի քանիսին էլ հետո հյուր կանչենք, երբ որ տուն ունենանք, պարտքերի մի մասը տված լինենք, հը՞...

— Իսկ գուցե դու միտդ փոխես,— աղջկա աչքերում նույն շարաճճի կայծն էր,— հենց մեր հիմնարկում այնքան լավ աղջիկներ կան, մի մայր ունեն ընդամենը, մի քանիսն էլ՝ առանձին տներ՝ խնձորի ծառերով, տաք ջրով, հեռախոսով...

Տղան փորձեց ձեռքի ափով ծածկել աղջկա բերանը, աղջիկը դիմադրեց և ստացվեց այնպես, որ նրանք համարյա համբուրվեցին։ Փողոցում քամի էր, լույսեր էին ու մեքենաներ։

— Ինչ ես անում,— ետ քաշվեց աղջիկը, որոշեց երևի բարկանալ, բայց մեջը դարձած սատանան նորից հաղթեց,— իսկ եթե քեռիներիցս մեկնումեկը տեսնի՞...

Տղան չպատասխանեց։

Աղջիկն էլ անսպասելի լռեց, ասես ընդհատվեց առվի զանգակը։

Ամուսնանալ... Արդեն երեք ամիս է նրանք հանդիպում են, լավ է, բայց պարզվում է նաև, որ պիտի ամուսնանալ։ Ի՞նչ է նշանակում ամուսնանալ։ Տուն, խոհանոց, լվացք։ Ամուսնու փնթփնթոց։ Սկեսուր։ Լույսի վարձ։ Գազի վարձ։ Խմորեղեն։ Ադրի զանգ՝ առավոտվա վեցին։

— Մայրիկդ կլինի՞։

— Այսօր չէ։ Բայց ես նրան գրել եմ։ Հարսանիքին կգա։ Ջրաղացի մոտ ենք ապրում։

— Իսկապե՞ս։ Քնել լինո՞ւմ է ջրաղացի մոտ։ Մայրիկդ հիմա ինչպե՞ս է քնում։

— Ջրաղացի քարերը վաղուց չեն պտտվում, իսկ մայրիկս անքնություն ունի, դա սկսվեց, երբ գաղարեց ջրաղացի չխկչխկոցը։

— Հետաքրքիր է, մի անգամ ինձ տար ջրաղաց, լա՞վ, ինչ անենք, որ քարերը չեն պտտվում։

Ոչ մի մեքենա կանգ չէր առնում։ Աշնան սառը երեկո էր, քամի, մարդիկ շտապում էին, տաքսի մեքենաները գնում էին անտարբեր, իրենց կանաչ աչքերը հանգցրած։ Քամին պարում էր, իրար գլխի հավաքելով մայթին թափված գունավոր տերևները, նրանց առնելով մի վերջին, կախարդական վալսի պտույտի մեջ։

— Տրամվայով գնանք,— ասաց աղջիկը,— ո՞ր համարն է մերը։

— Յոթերորդը, երկու-երեք կանգառ է։

Տրամվայում խցկոց էր, և նրանց սեղմեցին-սեղմեցին, կպցրին իրար։ Աղջիկը մի ամբողջ գլուխ ցածր էր տղայից և նրա մազերը դիպչում էին տղայի ծնոտին։ Թվում էր աղջկա մազերը սկսվում են տղայի ծնոտից, տղան դեղնամորուս կախարդ էր հիշեցնում։ Աղջիկը մի ձեռքով կառչել էր տղայի թևից և զգում էր նրա գարկերակը։ Ամուսնանալ։ Ուրեմն, ամբողջ կյանքում լինել այս երկար մարդու հետ՝ փողոցում, տրամվայում, տանը։ Իսկ ինչ գիտի ինքն այս երկար մարդու մասին, որի թևը բռնել է։ Իսկ ինչ պարտադիր է ամուսնանալ, ինքը դեռ քսանմեկ տարեկան է, լավ, թող լինի քսաներկու։ Աշխատում են միասին, վիճվարչությունում։ Մի օր տղան կատակեց. «Թեպետ վիճվարչությունում ենք ծանոթացել, բայց խոստանում եմ ամբողջ կյանքումս քեզ հետ չվիճել»։ Ամբողջ կյանք. ձանձրալի չի՞ լինի ամբողջ կյանքը՝ նույն մարդու հետ։ Հանկարծ ամուսնությունը թվաց այս տրամվայի պես մեծաղոչ երկարուկ մի բան, որի մեջ պիտի գլորվես տարիներ, տարիներ և կանգառ չի լինելու։ Հանկարծ ամուսնությունը թվաց երկու վագոնների պատահական կցում։

— Հասանք,— ասաց տղան։

Դուռը բացեց հասալիկ մի կին։

— Ծանոթացիր,— ասաց տղան,— իմ տանտիրուհին է։

Հասալիկ կինը ժպտաց, աղջկան թվաց՝ մարմնի բոլոր մասերով։

— Ներս արի, Արևիկ,— ժպիտի տրանքից ասաց կինը,— ներս արի,— հետո մեկնեց թմբլիկ ձեռքը,— Մարիամիկ։ Ես քո անունը վաղուց գիտեմ։

Այ քեզ Մարիամիկ. երբ նա ետ քաշվեց, Արևիկը նոր միայն նկատեց մոր լայնածավալ թիկունքում ծվարած երեխաներին։ Երեքից ոչ տարեկան չորս աղջիկներ էին, որ պչտան աչուկներով հետաքրքրվում էին Արևիկին։ Ամուսնանալ, երեխաներ ունենալ, հագցնել, կերակրել, քնեցնել նրանց և ինքդ՝ անքուն մնալ։ Արևիկը մի տեսակ վախվորեց այդ հեռանկարից, իսկ տղան գրպաններից դուրսդուրս թղթերով կոնֆետներ հա-

նեց, սկսեց բաժանել փոքրիկներին։ Երեխաների հարցական լռությունը դարձավ ուրախ ժխոր։

— Անո՞նց անհամապատասխան թվաց,— ասաց հաստլիկ կինը,— մի զարմանա, տասը տարի առաջ քեզանից էլ բարակ էի, չոփ։ Գեորգը շատ է պատմել քո մասին։ Հայրիկդ առողջացա՞վ։

— Առողջացավ,— մի քիչ զարմացավ Արևիկը։

— Ինքն էր անհանգստանում,— տղային ակնարկեց կինը,— փուխր սիրտ ունի։

Գեորգի սենյակը կլիներ 15—16 քառակուսի մետր, մի մահճակալ, գրասեղան, զգեստապահարան, գրքերի դարակներ՝ բոլոր պատերին։ Սեղանին՝ մի վիթխարի փունջ դաշտային ծաղիկներ։

— Երեկ գյուղ էի գնացել,— ասաց Գեորգը,— ինքս եմ քաղել։ Աշնան վերջին ծաղիկներ են։ Իսկ այսօր ոչ ոք չի լինելու, բացի մեզնից։

Սեղանին շամպայնի երկու շիշ կար, մրգեր։

— Պիտի խմե՞նք,— չարաճճի նայեց Արևիկը,— այսքանը երկուսո՞վ...

— Երկուսով,— ասաց Գեորգը,— ուրիշ ոչ ոք չի լինելու։

Նա սեղանից վերցրեց շիշը, որ սառն էր կամ տաք, չիմացավ, ու սկսեց ոլորել շշի վիզը։ Խցանը դիմադրում էր, բայց ի վերջո դուրս թռավ շշի կոկորդից և ազատագրված փրփուրը թափվեց սփռոցին։

— Անշնորհք,— քրթմնջաց Արևիկը, հետո նայեց դաշտային ծաղիկներին,— ջուր կա՞ ծաղկամանում։

— Կա,— ասաց Գեորգը,— խմենք մի-մի բաժակ։ Ծաղիկների մասին մտածում ես, մեր մասին չես մտածում։ Խմե՞նք...

— Ի՞նչ,— Արևիկն այդ պահին մաքում վերազասավորում էր սենյակը։ Նա բազմոցը տարել-դրել է լուսամուտի տակ, սեղանը կենտրոնից քաշել-մոտեցրել պատին, բոլոր պատերին գրադարակներ էր ամրացրել, այսպիսով, գրապահարանը դուրս մղել միջանցքը և տեղ ազատել երկրորդ մահճակալի համար, իհարկե, ծալովի մահճակալի, թե չէ ցերեկը շարժվել չի լինի։— Խմե՞նք։

Տղան նայեց ազջկա խաժ աչքերին, որտեղ սատանաներ էին կայծկլտում, ուզեց համբուրել նրան, բայց պարզապես լցրեց բաժակները, թեչի սովորական բաժակներ էին, բայց շամպայնը լավն էր, սառը՝ վերջապես կարողացավ որոշել նա։ Մայրը կհավանի՞ Արևիկին, ով գիտե, մայրերին թվում է, որ այս օտար-անծանոթ, անթև հրեշտակները գալիս հափշտակում են նրանց անմեղ զավակներին, ուրեմն այդ մայրերն էլ իրենց ժամանակին հափշտակել են այս անմեղ զավակների հայրերին,

այս մասին մտածո՞ւմ են մայրերը... Չէ, մայրը կսիրի Արևիկին, մայրը երազում է, որ ինքն ամուսնանա, իսկ Արևիկը լավ աղջիկ է։

— Քո կենացը,— ասաց տղան,— քո կենացը, Արևիկ։

— Իմ կենացը,— ասաց աղջիկը, հետո նայեց, ամենաառաջին անգամ նայեց աչքերը լայն բացած, միամիտ ու վտանգավոր,— և... քո կենացը։ Այսինքն, մեր կենացը։

Խմեցին։

Մի հրաշքով երկրորդ մահճակալի կողքին աղջիկը տեղ արեց նստելու համար, հետո պահարանի ու դռան արանքում կախիչներ խփեց, առաստաղից կախեց այն ջահը, որ երեկ տեսավ-հավանեց։ Լավ կլինի, եթե մեծ հայելի առնեն, որ իրեն տեսնի ոտից-գլուխ, հետո, երբ մտովին քայլ առ քայլ հեռացավ երևակայական հայելուց, դիպավ ճաշասեղանին, ինքն իրեն ժպտաց։

— Ի՞նչ ես մտածում,— հարցրեց տղան։

— Քո մասին,— խորհրդավոր ասաց աղջիկը,— երևի դու պիտի միջանցքում քնես, հայելին որ դնում եմ, տեղ չի մնում։

Տղան տարակուսանքով նայեց, ոչինչ չհասկացավ և միայն անիմաստ ժպտաց։

Մի բաժակ էլ խմեցին, իսկ երբ երկրորդ շիշն էլ արդեն դատարկվել էր, տղան կարողացավ ասել.

— Մի գնա, Արևիկ, մնա ինձ մոտ։

Արևիկը հոնքերը կիտեց.

— Իսկ հարսանի՞քը, իսկ քեռիներս, հորեղբայրներս, իսկ իմ սպիտակ բողը, իսկ կոիվը՝ հարսանիքից հետո...

— Ամեն ինչ կլինի։ Հետո։ Բայց այսօր մի գնա, լուսացնենք։

— Կանհանդստանան։ Հինգ բոպե հետո քեռիներս միլիցիա կդիմեն։ Խելքդ գլխի՞դ է,— հետո անասելի մտերմությամբ նայեց իր առաջ նստած այդ երկար-բարակ տղային, որի հետ երևի կանցնի կյանք կոչվող այս երկար-բարակ ճանապարհը,— գիտե՞ս ինչ կանեն մերոնք, գժվե՞լ ես։— Տղան փշրված նայեց շամպայնի շշերին, որ դատարկ, բայց հպարտ կանգնած էին կողք-կողքի. աղջիկը կռահեց նրա տխրությունը,— հեռախոս ունե՞ք,— հանկարծ հարցրեց նա։

— Ունենք,— վեր թռավ տղան,— թելը երկար է, հիմա միջանցքից բերեմ, դու վեր մի կենա։

Մի քանի վայրկյան աղջիկը մնաց մենակ, հանկարծ մտածեց, որ այդ վայրկյաններին որոշվում է մեծ ու կարևոր մի բան, ավելի մեծ ու ավելի կարևոր, քան մինչև հիմա ապրած իր բոլոր քսանմեկ տարիները, որոնք իրար գումարած՝ միլիարդ վայրկյաններ կկազմեն։ Երկրորդ մահճակալի